Ազգ
Azg

12 ՓԵՏՐՈՒԱՐ 2011 ՇԱԲԱԹ 24(4643)

ISSN: 1829-1651

# Մուբարաքը հրաժարական տվեց

Այս մասին երեկ երեկոյան հայտարարեց Եգիպտոսի փոխնախագահ **Օմար Սուլեյմանը**՝ հավելելով, որ այժմ «երկիրը կվերահսկի բանակը»: Մուբարաքը հրաժարվել է նաեւ երկրի Զինված ուժերի խորհրդի նախագահի պաշտոնից՝ ընտանիքով հեռանալով Շարմ էլ Շեյխ քաղաք: Մինչ Սուլեյմանի վերոհիշյալ հայտարարությունը արաբական հայտնի «Ալ Ջազիրա» հեռուստաընկերությունը տեղեկություն տարածեց, թե իբր Մուբարաքը հեռացել է Եգիպտոսից եւ գտնվում է Դուբայում: Օմար Սուլեյմանի հայտարարությունը ամեն ինչ դրեց իր տեղում. Հոսնի Մուբարաքն այլեւս Եգիպտոսի նախագահ չէ, նա նույնիսկ անհրաժեշտ չի համարել այդ մասին տեղեկացնել անձամբ, թերեւս հաստատելով տարածված այն կարծիքը, որ Եգիպտոսում պատահածը կարելի է նաեւ զինվորական հեղաշրջում կոչել: Երկիրը այսուհետեւ կղեկավարեն զինվորականները, առնվազն մինչեւ առաջիկա սեպտեմբեր, երբ տեղի կունենան նախագահական ընտրություններ, եթե տեղի ունենան...

Հ. Ա.

# ՕԵԿ-ն ավելի՞ տեղյակ է կոալիցիայի նիստից եւ հուշագրից

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲՀԿ-ի շուրջը ինտրիգը երեկ շարունակվեց պահպանվել, քանի որ խորհրդարանական ճեպազրույցներին նրանցից ոչ ոք չներկայացավ, եւ անպատասխան մնացին վերջին շաբաթվա ընթացքում տարածված հարցը՝ արդյո՞ք կոալիցիայի նիստում ԲՀԿ-ին պարտադրվել է նոր հուշագրի ստորագրումը: Եվ ընդհանրապես՝ կոալիցիայի այդ նիստը տեղի ունեցե՞լ է, թե՞ ոչ: Ամենահետաքրքրականն այն է, որ հաստատումը ստացվեց ոչ նրանից, ումից սպասում էր լրագրողական հանրույթը (ասենք՝ ԲՀԿ-ից կամ ՀՀԿ-ից), այլ ՕԵԿ-ից. ՕԵԿ խմբակցության ղեկավար **Հեղինե Բիշարյանը** հաստատեց՝ այո, կոալիցիայի նիստ եղել է, երկրի նախագահն էլ առաջարկել է, որ կոալիցիոն քաղաքական ուժերը մի հայտարարությամբ ամրագրեն միասնականությունն ու շարունակեն առանձին-առանձին, սակայն միասնական քաղաքականությամբ աշխատել, եւ ինչու ոչ՝ 2013 թվականի նախագահական ընտրություններին պաշտպանեն Սերժ Սարգսյանի թեկնածությունը: Սա Հ. Բիշարյանին բոլորովին զարմանալի չի թվում (չնայած գործող կոալիցիոն հուշագիրը ոչ ոք դեռ չեղյալ չի հայտարարել-Մ.Խ.)՝ ովքեր միասին են գնալու ճանապարհը՝ պարտավոր են այդ մասին ասել. «Իսկ ովքեր կոնկրետ որոշումներ չունեն կամ չեն ուզում իրենց ճանապարհը հստակեցնել, այլ խնդիրներ ունեն՝ դա իրենց խնդիրն է», ասաց ՕԵԿ խորհրդարանական խմբակցության ղեկավարը: Նրա գործընկեր **Հովհաննես Մարգարյանը** եւս նշեց, որ քննարկվել է հայտարարություն (բայց ոչ հուշագիր)՝ ապագայի անելիքների վերաբերյալ կոալիցիոն ուժերի դիրքի եւ նախագահական ընտրություններին Սերժ Սարգսյանին սատարելու հարցի վերաբերյալ:

Հ. Բիշարյանը նաեւ հայտարարեց, թե առաջիկա օրերին կլսենք ՕԵԿ ընդունված նոր ուժերի եւ նոր դեմքերի մասին: Հենց Բիշարյանն ասաց, որ երեկ կրկին տեղի կունենա կոալիցիայի նիստ, որը վերջակետ կդնի այս բոլորին:

Տես էջ 2

# Բաքուն փորձում է աղմկել հակամարտության առնչությամբ, այլ ոչ թե զբաղվել հարցի կարգավորմամբ

Միտք չէ, որ փորձագիտական գնահատականները համընկնում են իրերի իրական վիճակին: Անդրադառնալով Միջազգային ճգնաժամային խմբի վերջին զեկույցի մասին հարցին, որը «**Ազգը**» ներկայացրել է փետրվարի 9-ի համարում, Ուկրաինայի ԱԳ նախարարի հետ համատեղ ասուլիսում Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը նշելով, որ ծանոթ է զեկույցին, ընդգծել է. «Մինչեւ խորհուրդներ կամ գնահատականներ տալն ու կանխատեսումներ անելը հարկ է ջանալ, որ կրակին յուղ չլցվի»:

«Ղարաբաղյան հարցում փորձագետներ ամենից առաջ կարելի է կոչել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին, որոնք տեղյակ են բանակցային գործընթացի էվոլյուցիային եւ ներկա իրավիճակին: Ուստի փորձագիտական գնահատականներին եւ կանխատեսումների տեսանկյունից հարկ է լսել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կարծիքը», հայտարարել է **Էդվարդ Նալբանդյանը**:



Լրագրողների խնդրանքով Էդվարդ Նալբանդյանն անդրադարձել է նաեւ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում ԵԽԽՎ նախագահ Մովլութ Չավուշօղլուի ջանքերով ղարաբաղյան հարցով ենթահանձնաժողովի աշխատանքների վերականգնման հեռանկարին: Թե ինչու է այդ հարցում Ադրբեջանը շահագրգիռ, իսկ Հայաստանը դեմ, Նալբանդյանը պարզաբանել է. «Սա եւս մեկ վկայություն է, որ Ադրբեջանը առավել շահագրգիռ է ղարաբաղյան հարցի քննարկումն այլ ձեւաչափեր տեղափոխելու մեջ, քան շարունակելու բանակցություններն հակամարտության լուծմանը հասնելու այն ձեւաչափում, որը միջազգային մանդատ ունի եւ կա արդեն շատ տարի»:

Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարի մեկնաբանությամբ, «Բաքուն փորձում է իր ներքին պրոպագանդան տեղափոխել արտաքին հարթակ, աղմկել հակամարտության առնչությամբ, այլ ոչ թե զբաղվել հարցի կարգավորմամբ»: ԵԽԽՎ ղարաբաղյան հարցով ենթահանձնաժողովի նախկին աշխատանքը, ըստ Նալբանդյանի, հատուկ արդյունավետություն եւ օգտակարություն չի ունեցել բանակցությունների առաջընթացին նպաստելու առումով:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ԵԱՀԿ ՄԽ. եկել է «որոշիչ գործողության» ժամանակը

**Համանախագահները Երեւանում եւ Բաքվում ունեցած հանդիպումներում ընդգծել են, որ եկել է ժամանակը «հանուն խաղաղության ղարաբաղյան հակամարտությունը կարգավորելու որոշիչ գործողության համար»: Այսպիսի հայտարարություն են տարածել երեկ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները: Ըստ ԵԱՀԿ պաշտոնական կայքէջի, համանախագահներ Ռոբերտ Բրադկեն, Բեռնար Ֆասիեն եւ Իգոր Պոպովը գտնում են, որ դրական առաջխաղացում կա, որն արդյունք է 2010-ի հոկտեմբերին Աստրախանի գագաթաժողովից հետո կատարված աշխատանքի: Մինսկի խմբի համանախագահները կողմերին կոչ են արել զսպվածություն ցուցաբերել ինչպես տեղերում, այնպես էլ հանրային հայտարարություններում:**

Ա. Հ.

## Առաջիկա օրերին օդի ջերմաստիճանը կնվազի 4-6 աստիճանով

**«Ազգը» խնդրեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության օդերեւութաբանական ծառայության պատասխանատու Զարուհի Պետրոսյանին՝ մեկնաբանել, թե ինչպիսի եղանակ է սպասվում առաջիկա հինգ օրերի ընթացքում: Նա ասաց, որ մինչեւ փետրվարի 13-ը սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ: Փետրվարի 15-ին շրջանների զգալի մասում սպասվում են տեղումներ ձյան տեսքով: Օդի ջերմաստիճանը 12-ի գիշերը կնվազի 4-6 աստիճանով, իսկ 13-15-ի գիշերները ջերմաստիճանը կբարձրանա 5-7 աստիճանով, ցերեկը կնվազի՝ 2-4-ով: Լեռնային շրջաններում գիշերը կլինի 9-14 աստիճան ցուրտ, ցերեկը՝ 1-6 աստիճան ցուրտ: Արարատյան դաշտում փետրվարի 14-ին եւ 15-ին գիշերը սպասվում է 2-6 աստիճան ցուրտ, իսկ ցերեկը՝ 0-3 աստիճան տաքություն:**

**Երեւանում առաջիկա օրերին ջերմաստիճանը գիշերը կնվազի 8-10 աստիճանով եւ կդիտվի -3-5 աստիճան ցուրտ, ցերեկային ժամերին կլինի 3-5 աստիճան տաքություն:**

Մ. Մ.

ԳՆՈՐԴԸ ԲԱՔՎԻՑ

# Ի՞նչ «կարժենա» Ջուլիան Ասանժը





**«Ադրբեջանի իշխանությունը Լոնդոնում իր լոբբիստական ցանցի միջոցով ձգտում է գործարքի մեջ մտնել աղմկահարույց WikiLeaks կայքի հիմնադիր Ջուլիան Ասանժի հետ»: Այս բացառիկ տեղեկատվությունը տարածել է «Մուսավաթ» կուսակցության պաշտոնաթերթը՝ հղում անելով «միանգամայն վստահելի աղբյուրների»: Ըստ այդմ, Ասանժի «փաստաբանի հետ առնվազն երկու հանդիպում արդեն իսկ կայացել է, արդյունքների մասին առայժմ տեղեկություն չկա»:**

**Թերթն իր տեղեկացվածությունը հիմնավորում է նրանով, որ WikiLeaks-ի տրամադրության տակ հայտնված 250 հազարից ավելի փաստաթղթերում Ադրբեջանին վերաբերող բազմաթիվ «սենսացիոն նյութեր կան, որոնց հրապարակման դեպքում ներկա իշխանությունների հեղինակությունը թե՛ արտաքին, թե՛ ներքին միջավայրում լրջորեն կտուժի»: Ալիեւների կլանի լոնդոնյան ազդեցիկ կապերը գաղտնիք չեն եւ վաղուց դարձել են մամուլի սեփականություն: «Մոնիտոր» պարբերականը, որի գլխավոր խմբագրի սպանության գործն, ի դեպ, ցայսօր բացահայտված չէ, ժամանակին գրել է. «Դիտարժան է, որ Լոնդոնում ադրբեջանական դեսպանատան շենքն ընտանիքի (Ալիեւների-Վ. Ա.) սեփականությունն է եւ վարձով տրված է պետությանը, այսինքն՝ իրեն իրեն:**

**Լոնդոնի այդ առանձնատունը պատկանում է Հեյդար Ալիեւի դստերը՝ Սեւիլին: Այն Հեյդար Ալիեւին է նվիրել նավթային խոշոր ընկերություններից մեկը՝ կասպյան նավթային շուկայում իր շահերի լոբբինգի դիմաց: Ի դեպ, երկար ժամանակ Մեծ Բրիտանիայում Ադրբեջանի դեսպան է աշխատել Սեւիլի ամուսինը՝ Մահմուդ Մամեդկուլիեւը, որը մի քանի տարի առաջ դարձել է կոմս»: Ինչպես տեսնում ենք, «Մուսավաթ»-ի պաշտոնաթերթը բավական լուրջ հիմքեր ունի, երբ խոսում է Լոնդոնում Ադրբեջանի իշխանության «լոբբիստական ցանցի» մասին:**

**Ավելին, լրատվամիջոցն ասում է, որ «Ադրբեջանի իշխանությունը Լոնդոնում բավարար ուժեղ հիմքեր ունի», եւ ավելացնում է. «Նշենք նաեւ, որ մինչ այժմ Ադրբեջանի իշխանությունը Եվրոպայի խորհրդում եւ այլ հեղինակավոր կազմակերպություններում ձեռք է բերել հեղինակավոր հովանավորներ, այնպես որ՝ այդ գործում նա բավական փորձված է»: Այս տեղեկատվության ամենահետաքրքրական կողմը կարծես թե այն է, որ առայժմ Ջուլիան Ասանժի հետ գործարքի մեջ մտնելու՝ որեւէ այլ երկրի իշխանությունների մտադրության, առավել եւս՝ արդեն իսկ ձեռնարկած քայլերի մասին, որքան հայտնի է, համաշխարհային մամուլում ակնարկ իսկ չի արվել:**

**Եվ եթե առաջինն այդպիսի հավանական գործարքի ուղղությամբ քայլեր անում է Իլհամ Ալիեւը, ապա ինչո՞ւ չենթադրել, որ WikiLeaks-ի տրամադրության տակ գտնվող նյութերը նրա համար ճակատագրական նշանակություն ունեն: Բացառված չէ, որ նման զգուշացում Իլհամ Ալիեւը կարող է ստացած լինի WikiLeaks-ի հետ համագործակցող որեւէ լրատվամիջոցից, թեկուզ՝ լոնդոնյան «The Guardian»-ից:**

**«Կգնվի՞» արդյոք Ջուլիան Ասանժը: Իսկ ինչո՞ւ ոչ: Այդ դեպքում «ի՞նչ կարժենա» նրա լռությունը: Տրանք, իհարկե, էական հարցադրումներ չեն: Առավել բնութագրականն այն է, որ Ադրբեջանի իշխանությունը կարող է դառնալ Ասանժի եւ մի շարք եվրոպական առաջատար լրատվամիջոցների, հետեւաբար նաեւ դրանք ներկայացնող երկրների հասարակայնության, կառավարությունների սոսկական պատանդը:**

**Իսկ արժե՞ ունենալ այդպիսի խղճելի իշխանություն: Դա արդեն Ադրբեջանի ժողովրդի որոշելիքն է:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Ճգնաժամն ավելացրեց ուշադրությունը արդյունաբերության նկատմամբ

## Հայաստանի կառավարությունը սկսեց կոնկրետ քայլեր անել այս ճյուղի համար

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կհաջողվի՞ վերականգնել Հայաստանի՝ արդյունաբերական երկրի համբավը թե՞ ոչ, դժվար է միանշանակ պատասխանել: Անկախության շրջանի առաջին տարիներին երբեմնի հզոր արդյունաբերությունը փոշիացավ օբյեկտիվ (շրջափակում, արցախյան պատերազմ, երկրաշարժ, անցումային փուլ) եւ սուբյեկտիվ (այն ժամանակվա իշխանությունների տհաս կառավարում եւ անհաջող սեփականաշնորհում) պատճառներով: Համաշխարհային տնտեսության ներկա զարգացումները նոր մոտեցումներ են պահանջում Հայաստանի արդյունաբերությունը դրանց համապատասխան վերափոխելու հարցում: Համենայն դեպս, դրական պետք է բնութագրել այն հանգամանքը, որ, 2009-ից, Հայաստանի կառավարությունը սկսեց արդյունաբերության զարգացման համար կոնկրետ քայլեր անել, ինչը մինչ այդ բացակայում էր նրա եւ նրան նախորդած բոլոր կառավարություններում:

Ճգնաժամային 2009 ուղղակի պարտադրեց ավելի մեծ ուշադրություն դարձնել երկրի արդյունաբերությանը: Հենց այդ տարվա ընթացքում կառավարությունը որոշեց 300 մլն դոլարը գերազանցող ներդրումային ծրագրերին հարկային արտոնություն տալ, որը նպատակ ուներ խրախուսել նոր արտադրությունների ստեղծումն ու գործողների տեխնոլոգիապես վերազինումն ու ընդլայնումը: Խոշոր ներդրումային ծրագրեր իրականացնող այդ ընկերությունների համար, 300 մլն դոլարը գերազանցող սարքավորումների ներմուծման դեպքում, հնարավորություն էր տրվում ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարման ժամկետը հետաձգել 3 տարով:

Տես էջ 4

# Մեքենաների մաքսազերծման պարադոքսը պետք է վերանա

## *Իսկ ժամանակավոր ներմուծման ռեժիմից օգտվածներին՝ ժամանակ տրվի*

Ավտոմեքենաների մաքսազերծման ժամանակավոր ռեժիմի վերացման դեմ այս օրերին Գյումրիում բողոքում են ժամանակավոր ռեժիմով մաքսազերծած եւ վրացական համարանիշներով մեքենաների սեփականատերերը: Նրանք մատնանշում են այն հանգամանքը, որ Հայաստանում մեքենաների մաքսազերծումը թանկ արժե, եւ իրենք ստիպված են միանգամից մեծ գումար վճարել մաքսազերծում իրականացնելու համար: Մինչդեռ հարեւան Վրաստանում մաքսազերծումը մի քանի անգամ էժան է: Դժգոհողներն իսկապես իրավացի են իրենց հիմնավորումների մեջ: Հայաստանում մաքսազերծումը թանկ է արժենում, եւ ավելացված արժեքի հարկի, մաքսատուրքի եւ բնապահպանական վճարի ներառմամբ, մեքենայի գինն ավելանում է 32 տոկոսով: Բնականաբար, հենց այդ պատճառով էլ մեր հայրենակիցներից շատերը նախընտրում են իրենց մեքենաները մաքսազերծել հարեւան Վրաստանում:

Հայաստանի կառավարության որոշմամբ ժամանակավոր ներմուծման ռեժիմը վերջերս վերացվեց Հայաստանի քաղաքացիների համար, եւ նրանց մեքենաները առավելագույնը 15 օր կարող են մնալ վրացական համարանիշներով: Այդ ընթացքում նրանք պետք է Հայաստանում իրականացնեն մաքսազերծումը:

Այն, որ Հայաստան ներմուծվող մեքենաները պետք է մաքսազերծում անցնեն, այլ ոչ թե ամիսներ շարունակ երթեւեկեն այլ երկրի պետահամարանիշներով, անվիճելի պետք է լինի: Ակնհայտ է նաեւ, որ ժամանակավոր ներմուծման պատճառով պետական բյուջեն չի ստանում միլիարդավոր դրամների եկամուտներ: Բնական է, որ կառավարությունը պարտավոր է կարգավորել այս խնդիրը, բայց հաշվի առնելով մի շարք հանգամանքներ: Որո՞նք են այդ հանգամանքները:

Նախ՝ ժամանակավոր ներմուծման ռեժիմով մեքենա ներմուծողները մեղավոր չեն, որ մեր օրենքով նման հնարավորություն էր տրվում, ինչից էլ նրանք օգտվել են: Սեփական թերացումը շտկելու համար կառավարությունը նրանց համար գոնե պետք է որոշակի պայմաններ ստեղծի: Բանն այն է, որ մաքսազերծման համար միանգամից մեծ գումարները վճարել կարող են ոչ բոլոր մեքենաներ ունեցողները: Խոսքը ոչ թե 30-35 հազար դրամի մասին է, ինչպես ԱՊՊԱ-ի համար էր, այլ հազարավոր դոլարների: Նրանց գոնե ժամանակ եւ մաս-մաս վճարելու հնարավորություն պետք է տրվի, իսկ մեքենաների սեփականատերերն էլ պետք է գիտակցեն, որ իրենց մեքենաները պետք է մաքսազերծվեն Հայաստանում եւ դրանից խուսափել հնարավոր չէ:

Հաջորդ խնդիրն ավելի լուրջ է եւ միանշանակ է, որ պետք է իր լուծումը ստանա ժամանակավոր ռեժիմի վերացմանը զուգահեռ: Խոսքը մեքենաներ ներմուծելիս դրա արժեքի որոշմանն է վերաբերում: Որքան էլ խոսվել է այսպես կոչված «կողմնորոշիչ գների» մասին, որոնք սիրում են կիրառել մաքսավորները մեքենա ներմուծողների նկատմամբ, այդ խնդիրը մնում է անլուծելի: Մեքենաներ ներմուծողները մատնանշում են, որ մաքսատանը իրենց ներմուծած մեքենայի ինվոյսային արժեքին, որպես կանոն, չեն հավատում եւ կամայական բարձր գին են սահմանում այն մաքսազերծելիս: Արդյունքում, բարձրանում են նաեւ վճարվելիք հարկերի եւ մաքսավճարների չափերը: Այսինքն, տեղի է ունենում իսկական շուկայական սակարկություն մեքենա ներմուծողի եւ մաքսավորի միջեւ՝ կոռուպցիոն լուծման տարբերակ գտնելու լայն հնարավորություններով: Խնդրի բարդությունն այն է, որ տարբեր իրավիճակներում մեղավոր են լինում տարբեր կողմերը: Մի դեպքում մաքսավորներն են, օգտվելով առիթից, մեքենայի համար բարձր գին «կրակում», մյուս դեպքում ներմուծողն է ցույց տալիս մեքենայի ձեռքբերման անհավանական ցածր գին: Այս պարադոքսը պետք է վերանա: Կառավարությունը պետք է գտնի այնպիսի լուծում, որպեսզի մաքսավորը հնարավորություն չունենա կամայական գին պարտադրելու, ներմուծողն էլ գիտակցի, որ հնարավոր չի լինելու խաբել պետությանը:

Իսկ թե որքանո՞վ են ճիշտ կամ սխալ մեքենաների ներմուծման համար սահմանված հարկերն ու մաքսատուրքերը, տարբեր կարծիքներ կարող են լինել: Պետությունն ունի իր հիմնավորումներն ու շահերը, մեքենաներ ներմուծողները՝ իրենցը: Ամեն դեպքում մեքենա ներմուծողը պետք է իմանա, թե ի՞նչ սկզբունքով է կատարվելու մաքսազերծումը, ի՞նչ է արժենալու իր համար, որ ինքը չի կարող իրականությունից հեռու մեքենայի արժեք ներկայացնել, ու նաեւ, որ մաքսատանը իրեն տհաճ անակնկալներ չեն սպասելու:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Հայ-ուկրաինական փոխայցելություններ այս տարի

Այս տարվա առաջին կիսամյակում նախատեսվում է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի այցը Ուկրաինա: Այդ մասին երեկ Ուկրաինայի արտաքին գործերի նախարարի հետ հետ համատեղ ասուլիսին տեղեկացրել է արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը:

Նրա խոսքերով, երկու երկրների արտգործնախարարները աշխատում են նախագահի այցի կազմակերպման ուղղությամբ: Նալբանդյանը նշել է նաեւ, որ պատրաստվում են երկկողմ փաստաթղթեր, որոնք նախատեսվում է ստորագրել այդ այցի շրջանակներում: Հայաստանի եւ Ուկրաինայի արտգործնախարարները անդրադարձան նաեւ այս տարի Ուկրաինայի Գերագույն ռադայի ղեկավարի եւ վարչապետի՝ Հայաստան կատարելիք այցելություններին: **Ա. Հ.**



# Մտավորականներն՝ ի պաշտպանություն «Արարատի»

**Երեկ մի խումբ մտավորականներ դիմել են Ազգային ժողովի նախագահին, վարչապետին եւ Հանրային խորհրդի նախագահին՝ մտահոգվելով «Արարատ» հեռուստաալիքի ճակատագրով: Նշելով, որ հունվարի 21-ին «Արարատ» մշակութային հեռուստաալիքի (Հանրային հեռուստաընկերության երկրորդ կապուղի) եթեր են հեռարձակվում ոչ պետական «Շողակաթ» հեռուստաընկերության հոգեւոր-եկեղեցական ծրագրերը, եւ նշված օրվանից դադարեցվել է Հանրայինի ստեղծագործական խմբերի մշակութային հաղորդումների ցուցադրությունը, նամակի հեղինակներն ընդգծում են, որ այդ հաղորդաշարերը պատրաստում էին հայկական հեռուստատեսության ստեղծագործական ավանդները շարունակող, պրոֆեսիոնալ, աշխատանքի տասնամյակների փորձ ունեցող, պետական-մշակութային քաղաքականություն իրականացնող մարդիկ. «Ներքոստորագրյալներս մեր ձայնն ենք բարձրացնում ի պաշտպանություն «Արարատ» մշակութային ալիքի եւ ակնկալում ենք, որ արագ կուղղվի կատարված սխալը, եթե կվերադառնա «Արարատը», կպաշտպանվեն նրա ստեղծագործական խմբերի իրավունքները», գրել են Պերճ Զեյթունցյանը, ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանը, գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, ժուռնալիստների միութան նախագահ Աստղիկ Գեւորգյանը, գեղանկարիչ Ռոբերտ Էլիբեկյանը, ճարտարապետ Լեւոն Իգիթյանը, Սարյանի տուն-թանգարանի տնօրեն Ռուզան Սարյանը, քանդակագործ Գետիկ Բաղդասարյանը, կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը, կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանը:**

# ՀԲԸՄ-ի «Ամառային փորձառություն» ծրագրերի վերջնաժամկետը՝ մարտի 15-ին



**ՀԲԸՄ-ն շարունակում է ընդունել դիմումներ իր 2011 թվի «Ամառային փորձառություն» ծրագրին մասնակցել ցանկացողներից, տեղեկացնում է ՀԲԸՄ-ի լրատվական գրասենյակից ստացված հաղորդագրությունը, վեցշաբաթյա ծրագիրը նախատեսում է տարբեր երկրներում ապրող հայկական ծագումով համալսարանականներին ի մի բերել եւ մշակութային ու արհեստավարժական մթնոլորտներում պատրաստել ապագա ղեկավարներ: Այս տարվա «Մոսկովյան» եւ «Երեւանյան» ամառային փորձառության ծրագրերը նախատեսում են այցելություններ դեպի Սանկտ Պետերբուրգ եւ Լեռնային Ղարաբաղ, ինչպես նաեւ հետաքրքրական հանդիպումներ տարբեր պետական կառույցների ղեկավարների հետ:**

**Ծրագրերը կգործեն հունիսի 25-ից մինչեւ օգոստոսի 5-ը: Բայց արձանագրությունների ժամկետը ավարտվում է մարտի 15-ին: Բոլոր դիմումները պետք է ուղարկվեն ՀԲԸՄ-ի կենտրոնական գրասենյակ մինչեւ այդ թվականը: Հավելյալ տեղեկությունների համար այցելել agbu.org/msip (Մոսկվայի համար) եւ agbu.org/ysip (Երեւանի համար) կայքերը:**

**Հ. Ծ.**

# ՕԵԿ-ն ավելի՞ տեղյակ է կոալիցիայի նիստից եւ հուշագրից

*1-ին էջից*

**Սակայն զարմանալիորեն այստեղ հստակ չարտահայտվեց ՀՀԿ խմբակցության քարտուղար Գալուստ Սահակյանը, որը նոր կոալիցիոն հուշագրի գոյության մասին իր խոսքով չգիտեր եւ մամուլից է ծանոթացել, որ ինքը քննարկվելիք հուշագրի մասին ասել է: Նա տեղյակ չէր նաեւ, թե ե՞րբ է լինելու կոալիցիայի նիստը: Երբ լրագրողները տեղյակ պահեցին ՕԵԿ-ի հաստատումների մասին այդ լուրերին, Սահակյանն անդրադարձավ. «Ես հետախույզ չեմ, որ մտածեմ, թե որտեղ ինչ է տեղի ունենում. եթե խնդիրներ են առաջացել, ապա ժամանակը կգա, եւ մեզանից որեւէ մեկը կտեղեկացնի: Մարդկանց երեւի դուր է եկել այդ հուշագիր բառը, եւ չգիտեն՝ որտեղից են գտել, կարծես թե հուշեր գրելով ենք զբաղված: Ամենակարեւոր խնդիրը այն է, որ երեկ Ընտրական օրենսգիրքը դրեցինք շրջանառության մեջ եւ ուղարկեցինք փորձաքննության: Այսօր այս լուրը ամենակարեւորն է»: Հարցը լրագրողները զարգացնում էին՝ թե արդյո՞ք Հանրապետականը չի վստահում իր գործընկերներին, որ նոր երաշխիքներ է պահանջում, այն էլ նախագահական ընտրություններից երկու տարի առաջ: Հարցի այդպիսի դրվածքը Գալուստ Սահակյանը «մունետիկ» գալ համարեց. «Էդ որտեղի՞ց էդ դարձվածքները՝ «պահանջել», «ստիպել», յուրաքանչյուր կուսակցություն ինքն է որոշում իր ճանապարհը»: Ըստ Սահակյանի՝ նույնիսկ այն ժամանակ, երբ կոալիցիան տրոհվել է, այս տարիների ընթացքում երբեք լարված իրավիճակ չի եղել. «Հուսով եմ, որ այն բեռը, որ վերցրել է կոալիցիան իր ուսերին, մինչեւ վերջ կտանի»: «Ազգը» հետաքրքրվեց, թե ինչպե՞ս է, որ ՕԵԿ-ը տեղյակ է հուշագրից եւ կոալիցիայի նիստից, Գ. Սահակյանը՝ ոչ, ՕԵԿ-ին ավելի՞ են վստահում. Սահակյանը պատասխանեց. «Երեւի ես անվստահելի եմ», բայց ավելի մանրամասնելով նկատեց, թե քննարկման տեխնիկական կողմով չի զբաղվում, քննարկումներ կան՝ կոալիցիոն երեք ուժերից յուրաքանչյուրը իր մարտավարությունը պիտի կարողանա գտնել, որ հետագայում համագործակցության դաշտ ստեղծվի: Իսկ թե հուշագիր, հայտարարություն, թե ասուլիս կլինի արդյունքում, դա էական չէ:**

**«Ժառանգության» պատգամավորները պատմեցին մեկ օր առաջ Գյումրիում անցկացված ավտոերթի եւ հանրահավաքների մասին, որոնց վարորդներն ու նրանց աջակից քաղաքական ուժերը բողոքում են վրացական համարանիշներով մեքենաների մաքսազերծման նոր կարգի դեմ, պահանջում «Ժառանգության» առաջարկի հանգույն ամսական մեկ անգամ սահմանը հատելու դիմաց մտցնել 2 հազ. դրամ վճար, արմատապես փոխել ավտոմեքենաների մաքսազերծման հաշվարկի համակարգը, որն այժմ իրականացվում է օրենքի կոպիտ խախտումներով, պահանջ կա նաեւ 30 օրով հետաձգել օրենքի գործադրումը: Մեկ օր առաջ Գյումրիում կառավարությանն աջակցելու հանգանակության փորձը Զարուհի Փոստանջյանը նաեւ կրկնեց ճեպազրույցների ժամանակ՝ լրագրողներից մի երկու-երեք հազար դրամ հանգանակություն հավաքվեց, որպեսզի այդպիսով «կառավարությունն այլեւս չմտնի ցածր եկամուտ ունեցողների գրպանը»:**

**ՀՅԴ-ից Արտյուշա Շահբազյանը, պատասխանելով ԲՀԿ-ՀՀԿ ինտրիգի վերաբերյալ հարցին, նկատեց, թե մեկ քաղաքական ուժը չպետք է մեկ ուրիշի խնդիրները մեկնաբանի. «Հասկանալի է, որ նրանք, ովքեր հստակորեն քաղաքական դաշտում իրենց մենաշնորհյալ դիրքեր ունեն, պիտի աշխատեն պահպանել», ասաց նա: Ըստ Արծվիկ Մինասյանի էլ՝ ՀՅԴ-ին կոալիցիայի մեջ մտնելու առաջարկ չի եղել, լինի էլ՝ կմերժեն, այդ մասին ՀՅԴ ժողովի որոշումը կա նաեւ՝ իշխանության հետ կոալիցիա չկազմել, իսկ Ա. Շահբազյանն էլ հավելեց, որ քաղաքական ուժերն իրենց տեսակետը գիտեն, ինչո՞ւ պիտի այդպիսի առաջարկ անեն:**

**Որպես Հայաստանում ամենահեղափոխական կուսակցության ներկայացուցիչ՝ Ա. Շահբազյանը կշտամբեց Թունիսի հեղափոխությանն աչք տնկող ուժերին, թե՝ ցավում է, որ օտար հեղափոխությունները կիրառելու խանդավառություն կա՝ իր կուսակցությունը կողմնակից է խնդիրների լուծման եւ հեղափոխության ազգային բնույթին. «Այն, ինչ կատարվում է Եգիպտոսում, Թունիսում՝ որտեղի՞ց է խրախուսվում, իրենց խնդիրն է: Մենք ունենք մեր խնդիրները, մենք պիտի դրանք մեր ուժերով լուծենք, այլապես ով որ մեզ կօգնի՝ հետո մենք պիտի պարտք վճարենք դրա համար: Դրա համար եկեք չոգեւորվենք՝ դրսում ի՞նչ է կատարվում, որովհետեւ նաեւ իրականությունները միանգամայն տարբեր են, եւ մեր իրականությունից պետք է ելնենք»:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱւԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ադրբեջանը «երազում է «ստատուս քվոն» փոխել», իսկ աշխարհը, պարզվում է, խուլ է

«Չնայած ղարաբաղյան խնդրի կարգավորման ուղղությամբ վերջին տարիներին գործադրված բազմաթիվ դիվանագիտական ջանքերին՝ հակամարտությունը շարունակում է բորբոքվել», «Ազատություն» ռադիոկայանի տեղեկացմամբ, փաստում է Միացյալ Նահանգներում գործող հեղինակավոր Janes Intelligence հետազոտական կենտրոնի վերջին վերլուծությունը:

«Նավթից եւ բնական գազից ստացվող շահույթների հաշվին Ադրբեջանը փորձում է փոխել 17-ամյա ստատուս քվոն», ընդգծում է կենտրոնը՝ մանրամասնելով. «Հենց այդ նպատակով պաշտոնական Բաքուն մտադիր է 2011 թվականին անվտանգության եւ ռազմական ոլորտին հատկացնել 3.1 միլիարդ դոլար, ինչը վեց անգամ գերազանցում է նույն ոլորտին Հայաստանի տրամադրած գումարի չափը»: «Այդուամենայնիվ, չնայած Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի զգալի ֆինանսական առավելությանը, ադրբեջանցի սպաների աշխատավարձի առավելությունը հայ գործընկերների նկատմամբ չնչին է», փաստում է վերլուծությունը եւ ընդգծում. «Ռազմական ոլորտում պաշտոնական Բաքվի կատարած ծախսերի մեծ մասը ուղղվում է անմխիթար վիճակում գտնվող ենթակառուցվածքների զարգացմանը եւ նոր ռազմատեխնիկայի ձեռքբերմանը»:

Վերլուծելով կողմերի տնօրինած ռազմական հնարավորությունները՝ հետազոտական կենտրոնը փաստում է, որ զրահամեքենաների թվով երկու բանակներից որեւէ մեկը մյուսի նկատմամբ էական առավելություն չունի: Փաստելով, որ Ադրբեջանը առավելություն ունի Հայաստանի նկատմամբ թե՛ զինվորների թվաքանակի, թե՛ բյուջեի, թե՛ սպառազինությունների ավելացման տեսանկյունից, Janes-ը միաժամանակ ընդգծում է. «Այդուամենայնիվ, պարզ չէ՝ արդյոք պաշտոնական Բաքուն կկարողանա այս քանակական առավելությունը վերածել որակականի եւ էականորեն փոխել իրավիճակը ռազմադաշտում»:

Այս հարցում, ըստ հեղինակավոր կենտրոնի վերլուծաբանների, Ադրբեջանի համար մարտահրավեր կարող է լինել Լեռնային Ղարաբաղի՝ ռազմական գործողությունների համար առավել բարենպաստ աշխարհագրական դիրքը, Ռուսաստանի հետ Հայաստանի կնքած ռազմական դաշինքը, ինչպես նաեւ քաղաքական իրավիճակը սեփական երկրի ներսում:

«Այս բոլոր հանգամանքները չեն բացառում Ղարաբաղի շուրջը ռազմական գործողությունների վերսկսման հնարավորությունը, այդուամենայնիվ, կողմերի ունեցած սահմանափակ հնարավորությունները եւ միջազգային հանրության դիրքորոշումը խնդրի նկատմամբ սահմանափակում են իրադարձությունների զարգացման նման սցենարը», եզրափակում է Janes Intelligence-ը:

Ա. Հ.

# «Երկու կողմերում»

**ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները փետրվարի 10-ին Երեւանից մեկնեցին Բաքու: Ինչպես երեկվա համարում տեղեկացրել էր «Ազգը»՝ համանախագահները Ստեփանակերտ չայցելեցին, քանի որ «եղանակային պայմանները բարենպաստ չէին»: Արդեն Բաքվում համանախագահներից խոսեց միայն ֆրանսիացի Ֆասիեն՝ ներկայացնելով բոլոր երեքի դիրքորոշումը, նշեց, որ մեկնաբանություններ, կամ հայտարարություններ չեն անելու, Բաքվում հանդիպելու են նախագահին, արտգործնախարարին, եթե ժամանակ լինի, պաշտպանության նախարարի հետ, որից հետո միայն հնարավոր է, որ հանդես գան ամփոփիչ հայտարարությամբ: Հայտարարությամբ Մինսկի եռյակը հանդես չեկավ, սակայն ժամանակ գտավ ու, մանավանդ, հաշվի առնելով, որ Բաքվում «եղանակային պայմանները» լավ էին, այցելեցին պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ Սաֆար Աբիեւին: Այս հանդիպումը թերեւս ամենահետաքրքրականն է ու, հուսանք, նաեւ հասկանշականը՝ միջազգային հանրության համար, քանի որ նախագահ Ալիեւի եւ արտգործնախարար Մամեդյարովի հետ հանդիպումներից հայտնի են միայն «դիվանագիտական, շաբլոն» հայտարարություններ, որոնք նորություն չեն: Սաֆար Աբիեւը, «զինվորականին վայել պարզությամբ», հենց Մինսկի խմբի համանախագահների երեսին ասել է. «Ձեր խմբի երկարամյա գործունեությունը որեւէ արդյունքի չի բերել», սակայն թերեւս հիշելով, որ ինքը նաեւ պետական պաշտոնյա է, հավելել է. «Սակայն Ադրբեջանը դեռ շարունակում է հույսեր կապել միջնորդական ձեր առաքելության հետ»: Սրանից հետո ամենահետաքրքականն է: Պարզվում է, Ադրբեջանի պաշտպանության նախարարի. «Հակամարտության խաղաղ լուծումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ Հայաստանը հրաժարվի իր օկուպացիոն քաղաքականությունից: Ադրբեջանը լրջորեն պատրաստվում է ազատագրելու իր տարածքները: Մենք վստահ ենք, որ մեր փոխարեն բոլոր երկրներն էլ այդպես կվարվեին, եւ ոչ ոք իրավունք չունի մեղադրելու Ադրբեջանին»: Աբիեւը նաեւ հավելել է, որ բոլոր հակամարտությունների լուծման համար պետք է գործի դրվի միջազգային իրավունքը, որը չի արվում ղարաբաղյանի պարագայում: Այս վերջինով թերեւս համաձայնեք Աբիեւի հետ, մանավանդ ԼՂՀ-ի համար բազմաթիվ նախադեպեր ունեցող այս աշխարհում: Միայն հասկանշական է, որ պատերազմի վերսկսման մասին պատրաստակամություն Աբիեւը հայտնում է հենց Մինսկի խմբին, որի գործունեության ամբողջ իմաստը հենց նույն պատերազմի բացառումն է:**

**Հիշեցնենք՝ փետրվարի 10-ին դեռ Երեւանում համանախագահները հանդիպեցին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին, որը հավաստմություն հայտնեց խաղաղ բանակցություններին՝ բարձրաձայնելով, որ Ադրբեջանը մշտապես խախտում է հրադադարի ռեժիմն ու նախկինում՝ կոնկրետ Աստրախանում ձեռք բերված պայմանավորվածությունները գերիների փոխանակման մասին: Այս հանգամանքը կարող է վերջապես որոշակիություն մտցնել «կողմերին» միանման հայտարարություններ ու գնահատականներ շռայլող Մինսկի խմբի համանախագահների բառապաշարում:**

**Որպես Աբիեւի հոխորտանքին վերջնական պատասխան նշենք, որ հայտարարությամբ հանդես է եկել ԼՂՀ պաշտպանության բանակի մամուլի խոսնակ Սենոր Հասրաթյանը. «ԼՂՀ ՊԲ բոլոր ստորաբաժանումները պատրաստ են ցանկացած պարագայում դիմագրավելու հակառակորդի նախահարձակ քայլերը: Բանակի հրամանատարությունը շատ լավ գիտակցում է աշխարհաքաղաքական ներկա զարգացումների էությունը: ՊԲ հրամանատարությունը ամենօրյա աշխատանք է տանում ծառայությունը բարձր մակարդակով կազմակերպելու եւ անհրաժեշտության դեպքում՝ հակառակորդին արժանի հակահարված տալու համար», ասել է Հասրաթյանը:**

Հ. ԱՓՅԱՆ

# Եվրոխորհրդարանում խոսել են Ղարաբաղի փախստականների մասին

**Փետրվարի 9-ին Եվրոխորհրդարանում կազմակերպվել էր «Մարդու իրավունքներ՝ առանց սահմանների» ոչ կառավարական կազմակերպության միջոցառումը՝ ԵԽ-ի փոխնախագահ Լասլո Թոքեշի հովանավորությամբ: Տվյալ միջոցառման խորագիրն էր. «Չլուծված հակամարտության հետեւանքներ. Լեռնային Ղարաբաղ»: Միջոցառմանը ներկա ադրբեջանական պատվիրակությունը հերթական անգամ խոսելով 1 մլն ադրբեջանցի փախստականների մասին՝ փորձել է ներկայացնել նրանցից մեկին, որն, իբրեւ թե փախել է «Խոջալուի ցեղասպանությունից»: Սակայն Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի եւ այլ կազմակերպությունների միջամտությամբ Թոքեշը փոփոխության է ենթարկել միջոցառման հայտագիրը եւ զանգ է առել Խոջալուից ենթադրյալ փախստականի վկայությունը: Բացի սրանից՝ Թոքեշը նաեւ նշել է, որ «մարդու իրավունքները ամենուր նույնն են», եւ հիշեցրել է հատկապես ադրբեջանական պատվիրակությանը, որ Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի առիթով ԵԽ-ն անցյալ տարվա նոյեմբերին հայտարարություն ընդունեց, որով կոչ արեց ԵԽ նախագահ Եժի Բուժեկին, որպեսզի վերջինս էլ իր հերթին դիմի Եվրամիության խորհրդարաններին՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պահանջով:**

Հ. Ա.

# Իսրայելը հորդորում է իր քաղաքացիներին՝ չմեկնել Հարավային Կովկաս

**Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա, Եգիպտոս, Վենեսուելա, Կոտ Դ'Իվուար, Մալի եւ Մավրիտանիա: Իսրայելի՝ Ահաբեկչության դեմ պայքարի բյուրոն Իսրայելի քաղաքացիներին հորդորել է չմեկնել այս 9 երկրները, քանի որ «նրանց կյանքը կարող է ենթարկվել վտանգի»: Վերոհիշյալ բյուրոն Իսրայելի Ազգային անվտանգության խորհրդին ենթակա կառույց է եւ զբաղվում է այլ երկրներում ահաբեկչական կազմակերպությունների միջազգային ակտիվության վերլուծությամբ: Բյուրոն հստակեցրել է, որ հորդորը պայմանավորված է այն հանգամանքով, որ լրանում է «Հզբոլլահ» շարժման ղեկավարներից Իմադ Մուղնիի սպանության տարելիցը, սակայն փաստը հետաքրքրական է հատկապես այն առումով, որ վերջերս ԱՄՆ-ի պետքարտուղարությունը նույնպես խորհուրդ տվեց իր քաղաքացիներին՝ չմեկնել Հարավային Կովկաս: Պետքարտուղարությունը նույնիսկ կոնկրետացրել էր հասցեն՝ Ադրբեջան: Ավելի վաղ, ինչպես տեղեկացրել է «Ազգը», Ռուսաստանը ապահովագրել էր Բաքվում եւ Թուրքիայում ունեցած դեսպանատների շենքերն ու գույքը:**

Հ. Ա.

# Մշակվում է ՀՀ-ՆԱՏՕ 2011-2012 թվականների անհատական գործընկերության գործողությունների ծրագրի նախագիծը

**Փետրվարի 11-ին կայացել է Հայաստան-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը:**

**Միջգերատեսչական հանձնաժողովի անդամները ներկայացրել են ՀՀ-ՆԱՏՕ 2009-2011 թվականների անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակում 2010 թվականին իրենց գերատեսչության կատարած աշխատանքները:**

**Ծրագիրն ընդգրկում է քաղաքականության եւ անվտանգության, դրությունների գերակշիռ մասը կատարված է. «Պաշտպանության ռազմավարական վերանայման շրջանակում ՆԱՏՕ-ի հետ ակտիվ համագործակցությունը շոշափելի արդյունքներ է տվել, կարեւոր էր Հայաստանում ճգնաժամային կառավարման կենտրոնի ստեղծումը, «Սեյսմիկ անվտանգության համակարգի զարգացման հայեցակարգի», «Կիբեռահաբեկչության դեմ պայքարի ազգային ծրագրի» ընդունումը: Անհրաժեշտ է արագացնել «Փրկարարական համակարգի բարեփոխումների հայեցակարգի», «Ուսումնական ռազմական դոկտրինի», «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կատարելագործման» ազգային ծրագրի մշակման աշխատանքները»:**



ARMENPRESS

**պաշտպանական անվտանգության եւ ռազմական խնդիրների, հասարակության իրազեկման, գիտության, բնապահպանության եւ քաղաքացիական ճգնաժամերի պլանավորման, տեղեկատվության անվտանգության ոլորտները:**

**Արթուր Բաղդասարյանը գոհունակությամբ նշել է, որ 2010 թվականին ՀՀ-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների ծրագրով նախատեսված 122 գործողությունների**

**Միջգերատեսչական հանձնաժողովի անդամներն առաջարկություններ են ներկայացրել ՀՀ-ՆԱՏՕ 2011-2012 թվականների անհատական գործընկերության գործողությունների ծրագրի նախագծի վերաբերյալ: Նիստում որոշվել է մինչեւ փետրվարի վերջ ավարտել փաստաթղթի մշակման աշխատանքը:**

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ

# Հայկական համագումարի հայտարարությունը Վաշինգտոնում ցեղասպանության թանգարանի վերաբերյալ

Ամերիկայի հայկական համագումարից (ԱՀՀ) ստացված փետրվարի 9-ի հայտարարությունը տեղեկացնում է, որ Վաշինգտոնում Հայկական ցեղասպանության թանգարանի (ՀՑԹ) շուրջը ընթացող «Գաֆեսճյանն ընդդեմ Համագումարի» դատական գործը դեռեւս ավարտված չէ, եւ համագումարի անդամները շարունակելու են իրենց անդուլ ջանքերը գործադրել այդ թանգարանի շինարարությունն ավարտին հասցնելու համար:

Ըստ հունվարին հրապարակված Վաշինգտոնի շրջանային դատարանի կարգադրության եւ դրան ուղեկցող 190-էջանոց «Կարծիք-հուշագրի», նվազեցվել է պր. Գաֆեսճյանի ներկայացուցչությունը թանգարանի հոգաբարձուների վարչությունում, եւ արդարացի չի համարվել թանգարանից 500.000 դոլար ստանալու նրա պահանջը: Դատավորի կարգադրությամբ այսուհետեւ Գաֆեսճյան ընտանիքի հիմնադրամը, ԱՀՀ-ն, Անուշ Մաթեւոսյանը եւ Հրայր Հովնանյանը յուրաքանչյուրը պետք է ունենան մեկ ձայնի իրավունք թանգարանի խորհրդում:

Այդուհանդերձ, դատական վճիռը պաշտպանել է պր. Գաֆեսճյանի իրավունքը հետ ստանալու թանգարանային համալիրի համար ձեռք բերված անշարժ գույքի գումարը (մոտավորապես 40 միլիոն դոլար): Այդ իրավունքը Գաֆեսճյանը ձեռք է բերել գույքի վերադարձում կատարելու պայմանագրում հավելյալ դրույթ ավելացնելու շնորհիվ: Համաձայն այդ դրույթի, «եթե մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը, համաձայն ծրագրի, թանգարանի կառուցումը չի ավարտվում», ապա Գաֆեսճյանը իրավունք է ստանում հետ պահանջելու իր ներդրումները:

Հայկական համագումարը, ըստ հաղորդագրության, բողոքարկել է վերոնշյալ կարգադրությունը, հիշեցնելով եկամուտ չհետապնդող հաստատությունների վերաբերյալ IRS-ի եւ այլ օրենքները եւ հույս է հայտնել, որ փետրվարի 24-ին կայանալիք դատական նիստի ժամանակ դատավորը հաշվի կառնի ներկայացված փաստարկները:

Ցավալին այն է, որ այս հարցն իր վերջնական լուծումը չստացած, պր. Գաֆեսճյանը հունվարին դատական նոր հայցեր է ներկայացրել՝ այս անգամ անձամբ Հրայր Հովնանյանի եւ Վան Գրիգորյանի (Համագումարի նախկին տնօրեն) դեմ, պահանջելով 1 միլիոն դոլարի փոխհատուցում համագումարի կառավարման գործընթացներին իբր մասնակցելու հնարավորություն չունենալու դիմաց:

Հ. Ծ.

# Չթողնել, որ քարը պատուհաս դառնա

## *Միզաքարային հիվանդությունը Հայաստանում այնքան շատ է տարածված, որ հիվանդներն իրար հետ խոսելիս ասում են՝ քարն ի՞նչ է, որ չունենանք*

«Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի ուրոլոգիայի կլինիկայի ղեկավար **Արեն Բաբլումյանն** ասում է, որ միզաքարային հիվանդությունը հիմա ավելի տարածված է, քան 10 տարի առաջ: Բժշկի կարծիքով՝ դա մարդկանց կենսակերպի փոփոխության հետեւանքն է: Ճի՛շտ է, հիվանդների թիվը հիմա ավելացել է, սակայն քարեր օրգանիզմում մարդիկ միշտ էլ ունեցել են: Քարեր են հայտնաբերվել նույնիսկ եգիպտական մումիաների մեջ:

«Ուրոլոգիայի կենտրոնի» ուրոլոգ **Մուշեղ Մկրտչյանը** բացատրում է, որ սա միզասեռական համակարգի հիվանդություն է, որի ժամանակ քար է առաջանում երիկամում կամ միզուղիներում: Քարը կարող է գոյանալ երիկամում, բայց հետո իջնել միզուղիներ: «Քար կարող է առաջանալ նույնիսկ շագանակագեղձում», հավելում է Արեն Բաբլումյանը:

Հիվանդության առաջացմանը նպաստող գործոնները շատ են, դրանցից բժիշկներն առանձնացնում են միօրինակ սնունդը, սակավ հեղուկներ օգտագործելը, ծխելը, շոգ եղանակը, որոշ դեղերի չարաշահումը: «Վիտամիններ C-ի եւ D-ի չարաշահումը, իսկ սննդի մեջ վիտամիններ A-ի ու B-ի պակասը կարող են նպաստել հիվանդության առաջացմանը», ասում է Արեն Բաբլումյանը: Բժիշկները կարեւորում են հեղուկների շատ օգտագործումը, որովհետեւ ինչքան շատ մեզ արտաթորվի, այնքան կքչանա քար առաջանալու ու արդեն առկա քարի մեծանալու հավանականությունը: Այս հիվանդությունը նաեւ ժառանգական բնույթ ունի, սակայն մարդն ի ծնե քար չի ունենում: Քարի առաջացումը պայմանավորված է օրգանիզմում որոշակի գործընթացների՝ նյութափոխանակության, ջրաղային փոխանակության խանգարումներով: Մուշեղ Մկրտչյանը նշում է, որ միզաքարային հիվանդության տարածված լինելը նաեւ կախված է օդի ջերմաստիճանից: Ինչքան բարձր է տվյալ երկրում օդի ջերմաստիճանը, այնքան շատ են հիվանդները: «Ալկոհոլային խմիչքներն ու աղի սնունդը չարաշահելը եւս կարող են նպաստել հիվանդության առաջացմանը», ավելացնում է բժիշկ Մկրտչյանը: Երբեմն քարը կարող է լինել երիկամի բորբոքային հիվանդության հետեւանք, կարող է եւ հակառակը լինել՝ բորբոքային պրոցեսներ սկսվեն քարի պատճառով: Խոսելով բարդություններից՝ Արեն Բաբլումյանն ասում է, որ միզաքարային հիվանդությունը կարող է այնպիսի բարդությունների հանգեցնել, որ նույնիսկ երիկամը հեռացվի: Իսկ Մուշեղ Մկրտչյանը հիվանդներին խորհուրդ է տալիս խուսափել կծու, թթու ուտելիքներից, քանի որ դրանք նպաստում են բորբոքումների առաջացմանը: Ամեն դեպքում, հիվանդներն ինչքան շուտ դիմեն բժշկի ու բուժեն հիվանդությունը, այնքան զերծ կմնան բարդություններից: Հնարավոր է, որ մարդը քար ունենա, բայց դա իրեն չանհանգստացնի: «Նման հիվանդներին խորհուրդ ենք տալիս մնալ հսկողության տակ ու որեւէ խնդրի առաջ գալու դեպքում բժշկի դիմել», ասում է Ա. Բաբլումյանը եւ ընդգծում. «Հիմնականում զբաղվում ենք այն քարով, որը խնդիր է առաջացրել»: Մարդը երկար տարիներ կարող է քար ունենալ երիկամում, բայց այդ մասին չիմանալ: Միզաքարային հիվանդության մասին սովորաբար իմանում են այն ժամանակ, երբ քարը շարժվում է ու խաթարում մեզի հոսքը: Այս հիվանդության հիմնական ախտանիշը ցավն է: «Հիվանդը ցավ է ունենում գոտկային շրջանում, ցավը կարող է ճառագայթել դեպի միզապարկ ու արտաքին սեռական օրգաններ: Հնարավոր է, որ լինեն նաեւ սրտխառնոց ու փսխում», ասում է Արեն Բաբլումյանը:

72-ամյա Ռազմիկը տարիներ առաջ երիկամում քարեր է ունեցել, հիվանդության դեմ բուժվել է դեղորայքով, հիմա երիկամում միայն ավազ ունի: Պատմում է, որ գոտկատեղի սուր ցավեր է ունեցել, գնացել է ստուգման, ու պարզվել է, որ 0,5-0,7 սմ չափերի քարեր ունի: Բուժվելուց հետո ցավեր չի ունենում, իսկ ավազն առանձնակի չի անհանգստացնում: «Խմում էի հատուկ դեղեր, որոնք պակասեցնում էին արյան մեջ քար առաջացնող աղերի քանակը», ավելացնում է Ռազմիկը:

Ուրոլոգ Մկրտչյանը բացատրում է, որ մարդու մեջ սկզբում ավազ է առաջանում, հետո՝ քար: Ավազները, որոնցից բաղկացած են քարերը, բաղադրությամբ տարբեր են լինում: Մի մարդու մեջ կարող է անսահմանափակ քանակությամբ քարեր լինեն: Քարերն էլ տարբեր չափսեր են ունենում՝ մի քանի միլիմետրից մինչեւ 15 սանտիմետր: «Կան մարջանաձեւ քարեր, որոնք նույնիսկ 10-15 սմ են լինում», ասում է բժիշկ Բաբլումյանը:

Հիմա միզաքարային հիվանդությունն առավել տարածված է տղամարդկանց մեջ, քան կանանց, ինչը, Արեն Բաբլումյանի կարծիքով, հավանաբար պայմանավորված է տղամարդկանց կենսակերպով:

### Միզաքարային հիվանդության բուժումն ու կանխարգելումը

Մուշեղ Մկրտչյանն ասում է, որ միզաքարային հիվանդության նոպայով իրենց ավելի շատ դիմում են ձմերուկի սեզոնին. «Շատ ձմերուկ են ուտում, դե ձմերուկն էլ միզամուղ է, քարերը շարժվում են, հիվանդները ընկնում են նոպայի մեջ ու գալիս բժշկի մոտ»: Բժիշկները բուժման տարբեր մեթոդներ են առանձնացնում. դրանք են դեղորայքային բուժումը, բուսաբուժությունը, հեռահար քարափշրումը (դիստանցիոն լիթոտրիպսիան), էնդոսկոպիկ ու բաց վիրահատությունները: Ուրոլոգ Մկրտչյանը նշում է. «Կախված քարի չափսից ու բաղադրությունից՝ տարբեր դեղերով փորձում ենք քայքայել այն, կամ եթե փոքր է քարը, դեղի ազդեցությամբ ընկնում է ու դուրս գալիս օրգանիզմից»: Եթե մինչեւ 1 սմ մեծություն ունեցող քարը գտնվում է միզածորանում, ապա դեղորայքի ազդեցությամբ կարող է դուրս գալ միզուղիներով: Անդրադառնալով բուսաբուժությանը՝ Մուշեղ Մկրտչյանն ասում է, որ դա արդյունավետ է միայն փոքր քարերի դեպքում. «Բուսաբուժության ժամանակ հիվանդին տալիս են միզամուղ պատրաստուկներ, որոնք գցում են քարը մեզի հոսքն արագացնելու հաշվին, բայց եթե մեծ է քարի չափը, բնական ճանապարհով այն դուրս գալ չի կարող, եւ այդ դեպքում բուսաբուժությունն անիմաստ է դառնում»: Մեծ քարեր ունեցող հիվանդները երբեմն ճիշտ չեն կողմնորոշվում ու բուժման են գնում բուսաբույժների մոտ: «Մի քանի ամիս բուժվում են, բայց դրական արդյունք չեն ունենում: Հետո ավելի վատ վիճակում նոր-նոր դիմում են ուրոլոգի», ասում է Մ. Մկրտչյանը:

Հիմա աշխարհում լայնորեն կիրառվող մեթոդներից է հեռահար քարափշրումը, որի ժամանակ քարը փշրում են առանց վիրաբուժական միջամտության: Հայաստանում կան հեռահար քարափշրման 5 ապարատներ, որոնք տեղադրված են միայն երեւանյան հիվանդանոցներում, մարզերը դեռեւս չունեն դրանցից: Ապարատները բավականին թանկ արժեն: Հեռահար քարափշրման առաջին ապարատը ստեղծվել է Գերմանիայում՝ 1980-ական թվականներին: Արեն Բաբլումյանի փոխանցմամբ՝ Հայաստանն առաջին երկրներից է, որը ստացել է նման ապարատ: 1990 թվականին «Ուրոլոգիայի կենտրոնում» տեղադրվեց Հայաստանում առաջին, իսկ Խորհրդային Միությունում հեռահար քարափշրման երկրորդ ապարատը:

Քարերի հեռահար փշրումը թեեւ բուժման հարմար ու արդյունավետ եղանակ է, սակայն Արեն Բաբլումյանը հիվանդներին խորհուրդ է տալիս. «Եթե քարը գերազանցում է 2-2,5 սանտիմետրը, չգնալ հեռահար քարափշրման, որովհետեւ այս դեպքում հնարավոր է, որ շատ լինեն սեանսի քանակները, ու բուժումն էլ երկար տեւի:

«Արմենիա» բժշկական կենտրոնում նույնպես տեղադրված է հեռահար քարափշրման ապարատ: Արեն Բաբլումյանն ասում է, որ դա արդիական է՝ վերջին նորություններից մեկը: Հեռահար քարափշրման մեկ սեանսը «Արմենիա» կենտրոնում արժե 140-150 հազար դրամ: «Իսկ 2-րդ սեանսի համար ավելի քիչ գումար ենք վերցնում», ասում է բժիշկ Բաբլումյանը: Նրա խոսքով՝ միզաքարային հիվանդության բուժման մեթոդներով Հայաստանը կարող է ոտք մեկնել Եվրոպայի զարգացած երկրների ու Միացյալ Նահանգների հետ:

Եթե քարը մեծ է 2,5-3 սմ-ից, ու հիվանդն էլ ուզում է շուտ ազատվել դրանից, ապա ավելի արդյունավետ է կիրառել էնդոսկոպիկ վիրահատության եղանակը, երբ հատուկ գործիքների միջոցով մտնում են միզուղիներ, ուղղակիորեն կոտրում քարերն ու հեռացնում բեկորները: Արեն Բաբլումյանը բացատրում է, որ սա եւս վիրահատություն է, բայց կատարվում է առանց կտրվածքի:




Մուշեղ Մկրտչյանը տեղեկացնում է, որ «Ուրոլոգիայի կենտրոնում» էնդոսկոպիկ վիրահատությունն արժե շուրջ 120 հազար դրամ: Ինչ վերաբերում է բաց վիրահատություններին, բժիշկներն ասում են, որ դրանք քիչ դեպքերում են կատարվում, միայն այն ժամանակ, երբ հարմար չէ կիրառել մյուս մեթոդները: «Հայաստանում հիվանդների մոտավորապես 5 տոկոսի դեպքում է, որ բուժում են բաց վիրահատությամբ: Դա էլ կախված է ցուցումներից՝ քարի չափից, երիկամի ձեւից, նաեւ թե ի՞նչ խոռոչում է գտնվում քարը», նշում է բժիշկ Բաբլումյանը:

Ինչպես տեսնում ենք, շատ հիվանդությունների համեմատությամբ՝ քարեր ունենալը չարյաց փոքրագույնն է, բայց եթե հիվանդությանը տեր չկանգնես, դա կարող է պատուհաս դառնալ: Ամեն դեպքում, ճիշտ է կանխարգելել հիվանդությունը: «Իսկ եթե մարդը միզուղիներին ցավ կամ ախտանիշ ունի, թո՛ղ բժշկի դիմի ժամանակին, որպեսզի «դանակը չհասնի ոսկորին», զգուշացնում է Արեն Բաբլումյանը:

Միզաքարային հիվանդությունից խուսափելու համար բժիշկները խորհուրդ են տալիս հեղուկներ շատ խմել, շատ շարժվել, զբաղվել սպորտով ու չվարել նստակյաց կյանք: Այս խորհուրդները նաեւ հիվանդներին են վերաբերում: Շատ հեղուկներն ու ակտիվ կյանքը կօգնեն, որ չմեծանա փոքր քարը: «Եթե չկան հեղուկ օգտագործելու խիստ հակացուցումներ, մարդն օրական պետք է օգտագործի առնվազն 2,5-3 լիտր հեղուկ, սա վերաբերում է եւ միզաքարային հիվանդություն չունեցողներին», խորհուրդ է տալիս ուրոլոգ Մկրտչյանը:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Ճգնաժամն ավելացրեց ուշադրությունը արդյունաբերության նկատմամբ

*1-ին էջից*

Վերոնշյալ որոշումից անցել է մոտ մեկուկես տարի, բայց արդեն 11 ընկերություններ օգտվել են այդ արտոնությունից, ինչը վկայում է նախաձեռնության արդյունավետության մասին: Կառավարությունն արդեն հավանություն է տվել 11 ընկերությունների 12 ներդրումային ծրագրերին, որոնք հնարավորություն են ստացել 3 տարով հետաձգելու ներմուծված սարքավորումների համար ԱԱՀ վճարումը: Արդյունքում, հիմնականում սննդարդյունաբերությունն ու տեղեկատվական տեխնոլոգիաները ներկայացնող «Նասֆուդ», «Շամբ բիզնես», «Յուքոմ», «Արաքս թռչնաֆաբրիկա», «Իստեյս մենեջմենտ ընդ ադմինիսթրեյշն քամփնի», «Գոլդն Գրեյպ Արմաս», «Բիզա», «Սարանիստ», «Կարոլինա», «Ձեռնուկ ինֆորմեյշն», «Սոլայկա» (երկու ներդրումային ծրագրերի հավանություն է ստացել) ընկերությունները պարտավորվել են իրականացնել ընդհանուր առմամբ 57 մլրդ դրամի (մոտ 160 մլն դոլար) ներդրումային ծրագրեր, ստեղծելով մոտ 1500 աշխատատեղեր առավելապես մարզերում: Էկոնոմիկայի նախարարությունից մեր ստացած տեղեկությունների համաձայն, ներկա պահին այս ընկերություններում արդեն ստեղծվել են մոտ 800 աշխատատեղեր, ինչպես նաեւ քննարկվում են եւս 3 ընկերությունների ներդրումային ծրագրեր: Նրանց կողմից ներկայացվել են ընդհանուր առմամբ մոտ 1,5 մլրդ դրամի ներդրումային ծրագրեր, որոնք սպասում են ԱԱՀ հետաձգման հավանություն ստանալուն:

Արտադրական հզորություններն ավելացնելու նպատակով սարքավորումներ ներմուծող ընկերությունների համար այլ արտոնություն է «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետի երկարաձգումը: Նման արտոնություն վերջերս կառավարությունը տվեց կաթի արտադրության ընդլայնման եւ նոր արտադրության ստեղծման ծրագիր ներկայացրած «ՎԿՍ Արմենիա» ընկերությանը:

Հայաստանում արդյունաբերության զարգացման դրական տեղաշարժի մասին է վկայում մի շարք խոշորածավալ ներդրումային ծրագրերի իրագործումն անցած մեկ տարվա ընթացքում: Դրանց մասին վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց տարեվերջյան ելույթի ժամանակ: Տարաների արտադրության «Գլաս ուորլդ քամփնի» անգլիական ընկերությունը 30 մլն եվրոյի ներդրում է կատարել՝ ստեղծելով շուրջ 500 աշխատատեղ, Սյունիքի մարզում գործարկվել է տարեկան 150 հազար տոննա հանքաքարի վերամշակման ձեռնարկությունը, Արտաշատում՝ 27 մլն դոլար արժողությամբ հանքային ջրերի «Արարատ գրուպ» նոր գործարանը շուրջ 400 նոր աշխատատեղով, Ախուրյանի շաքարի գործարանը, հնդկական «Ֆայերսթոուն դայմոնդ» ադամանդամշակման նոր ընկերությունը, մարտկոցների արտադրության հայ-գերմանական «Էլբաս» ընկերությունը: Այս ընկերություններն ունեն զարգացման եւ արտահանման ուղղվածություն, ինչը, բնականաբար, կարտացոլվի առաջիկա մեկ-երկու տարվա տնտեսական ցուցանիշներում:

Արձանագրելով Հայաստանի արդյունաբերության զարգացմանն ուղղված վերոնշյալ փաստերը, միաժամանակ հարկ է մատնանշել, որ մեր երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող այս ճյուղի խթանման ուղղությամբ կատարված քայլերով չի կարելի սահմանափակվել: Օրինակ, կարելի է գույքահարկի արտոնություններ տրամադրել գործող արտադրությունների համար եւ ընդհակառակը՝ ավելացնել դրա չափը տարիներ շարունակ պարապուրդի մատնված ձեռնարկությունների համար, ստիպելով սեփականատերերին կամ գործարկել, կամ վաճառել դրանք: Բացի դրանից, բազմիցս ենք նշել երկրի ներսում արդյունաբերության տարբեր ճյուղերի միջեւ կապերի սերտացման անհրաժեշտության մասին՝ նպատակ ունենալով առավելագույնս օգտագործել վերջնական արտադրանքը տեղում ստանալու հնարավորությունը: Այդ նպատակով, թերեւս կարելի է կիրառել ներքին շրջանառության հարկման այն արտոնությունները, որ ժամանակին տրվեցին ադամանդագործությանը, եւ որի մասին խոսվում է, բայց չի իրագործվում մասնավորապես ոսկերչության նկատմամբ: Սրանք, իհարկե, միակ եւ վերջնական տարբերակները չեն, եւ հուսանք, որ առաջիկայում կառավարության կողմից արդյունաբերության զարգացմանը միտված նոր նախաձեռնություններ կլինեն:

# Աննախադեպ սրվում են Կիպրոսի թուրքական հատվածի հարաբերությունները Թուրքիայի հետ

## *Անկարան յուղ է լցնում կրակին*

Որքան էլ Թուրքիան անդամակցության բանակցություններ վարի Եվրոմիության հետ, չի ճանաչում եվրոպական այս կառույցի անդամ Կիպրոսի Հանրապետությանը: 1983-ի նոյեմբերի 15-ին հռչակված ինքնակոչ «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությանն» էլ աշխարհը չի ճանաչում, բացառությամբ՝ Թուրքիայի: Թերեւս այդ պատճառով է, որ թուրքական դեսպանատունը տեղակայված է Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայի թուրքական հատվածում, որտեղ կիպրացի թուրքերը ցուցաբերած տնտեսական օգնությունը չարաշահելու, կիպրական հիմնահարցի կարգավորումը չկարգավորվածությամբ պայմանավորելու, ինչպես նաեւ կղզու հյուսիսային հատվածը Անատոլիայից փոխադրված թուրքերով վերաբնակեցնելու հանգամանքից ելնելով ընդվզել էին վարչապետ Էրդողանի ուղեգրած քաղաքականության դեմ:

Այս ամենին հետեւել են փոխադարձ վիրավորանքները: Դրանք լարվածություն են առաջացրել Կիպրոսի թուրքական հատվածի եւ Թուքիայի միջեւ: Թուրքիայի եւ Կիպրոսում տեղակայված թուրքական զորքերի նկատմամբ կիպրացի թուրքերի անվստահությունը համատարած բնույթ է ստացել, անվստահության պայմաններում սրվել են նրանց հարաբերությունները Անատոլիայից Կիպրոս փոխադրված թուրք վերաբնակների հետ, որն, ըստ ամենայնի, հանգեցնում է Թուրքիա-«Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետություն» հարաբերությունների սրմանը:

Թերեւս այդ առումով պատահական չէ, որ այս հարցը քննարկման առարկա է դառնում Եվրոմիության մայրաքաղաք Բրյուսելում: Մինչ Եվրոխորհրդարանի կիպրացի ներկայացուցիչ Տակիս Հաջիգեորգիուն հարցի առնչությամբ դիմում է ներկայացնում Եվրոհանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզոյին եւ ԵՄ-ի ընդլայնման գծով հանձնակատար Ստեֆան Ֆյուլեին, Եվրոմիության դիտորդները հետեւություն են անում, թե Հյուսիսային Կիպրոսի եւ Թուրքիայի միջեւ առաջացած լարվածությունը չի բխում թուրքական կողմի շահերից, ոչ էլ նպաստում է հիմնահարցի կարգավորման գործընթացին:

Այդ ընթացքում հրապարակվում է Եվրոխորհրդարանի Թուրքիայի մասին զեկույցի նախագիծը, որտեղ, ինչպես երեկ նշել է «Եվրոնյուզի» թուրքերեն տարբերակը, Թուրքիային մինչեւ օրս ներկայացվող «Կիպրոսից զորքերն անհապաղ դուրս բերելու եւ Կիպրոսի հիմնահարցի համապարփակ լուծմանը նպաստելու» պահանջները համադրվում են նոր պահանջով. «Խուսափել կղզին Թուրքիայի քաղաքացիներով վերաբնակեցնելու գայթակղությունից եւ լուծում գտնել թուրք վերաբնակների հարցին»: Ենթադրվում է, որ այս զեկույցը մարտի 8-ին քվեարկության կդրվի Եվրոխորհրդարանում: Այլ կերպ՝ Թուրքիա-Հյուսիսային Կիպրոս լարվածությունը հետզհետե մտնում է Եվրոխորհրդարանի եւ ԵՄ-ի օրակարգ, իսկ դա նշանակում է, որ դա ձեռք է բերում միջազգային հնչեղություն:

«**Ազգի**» նախորդ համարում, անդրադառնալով լարվածության հանգամանքին, մատնացույց էինք արել այն ցուցապաստառները, որոնցով կիպրացի թուրքերը հայհոյում եւ անարգում էին ինչպես Թուրքիային, այնպես էլ թուրքական զորքերին: Թվում էր, թե կիպրացի թուրքերի հետ առաջացած լարվածությունը մեղմելու համար վարչապետ Էրդողանի կառավարությունը ձեռնամուխ կլինի «սիրտ շահելու» միջոցառումներին, մանավանդ որ լարվածության հարցը սկսել է քննարկվել Բրյուսելում:

Սակայն փետրվարի 10-ին նա պաշտոնից ազատեց դեռեւս օգոստոսին՝ 6 ամիս առաջ Նիկոսիայի թուրքական հատվածում նշանակված դեսպանին՝ Քայա Թուրքմենին եւ նրան Թուրքիայի Հանրապետության օժանդակության հանձնաժողովի նախագահ Հալիլ Իբրահիմ Աքչայով փոխարինելու պատրաստակամություն հայտնեց: Թերեւս դրանով էլ թուրքական կառավարությունը նոր մարտահրավեր նետեց Հյուսիսային Կիպրոսին:

Ի՞նչ առումով, այն, որ Աքչան Կիպրոսի թուրքական հատվածում ոչ միայն վարկաբեկված է, այլեւ հակակրանք է առաջացնում: Ավելին՝ «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» ինքնակոչ նախագահ Էրօղլուն ժամանակին դիմում էր ներկայացրել Անկարա, որ Աքչային ազատեն հանձնաժողովի ղեկավարի պաշտոնից:

Աքչային Նիկոսիայի թուրքական հատվածում դեսպան նշանակելու Անկարայի պատրաստակամությունը բուռն հակազդեցություն է առաջացրել Հյուսիսային Կիպրոսում: Երեկվա համարում կիպրացի թուրքերի «Ենի դուզեն» թերթն այս փաստը համարել է ցնցող եւ տեղեկացրել է փաստի առնչությամբ Արհեստակցական միությունների պլատֆորմի հրավիրած արտակարգ նիստի մասին: Այդ ընթացքում պետական ծառայողների արհմիությունների գլխավոր նախագահ Մեհմեդ Օզքարդաշն ասել է. «Հալիլ Իբրահիմ Աքչան ատելությամբ է լցված կիպրացի թուրքերի նկատմամբ եւ նրանց վիրավորելու ոչ մի առիթ բաց չի թողնում: Ուստի նա «անցանկալի անձ» է Հյուսիսային Կիպրոսում: Մինչ մենք սպասում էինք, որ վարչապետ Էրդողանը մեզ «ձրիակեր», «ապերախտ» անվանելու կամ. «Դուք ո՞վ եք, որ ընդվզում եք, ե՛ւ մեր հացն եք ուտում, ե՛ւ հայհոյում, բայց պատասխան եք տալու» արտահայտության համար ներողություն կխնդրի, հանկարծ Նիկոսիայում դեսպան է նշանակում Հյուսիսային Կիպրոսում «անցանկալի անձ» հայտարարված մեկին: Թող նա փորձության չենթարկի կիպրացի թուրքերի համբերությունը: Մենք որեւէ մեկի առջեւ խոնարհվելու որեւէ մտադրություն չունենք»:

Օզքարդաշին պաշտպանել են մյուս 10 արհմիությունների ղեկավարները, տարածելով հաղորդագրություն, որտեղ ընդգծվում է, որ Աքչայի պես մեկին դեսպան նշանակելով, Էրդողանի կառավարությունը ոչ միայն իր ատելությունն է արտահայտում կիպրացի թուրքերի նկատմամբ, այլեւ սաստելու փորձ է անում: Ակնկալում ենք, որ նախագահ Էրօղլուն, որը մինչ այդ Աքչային պաշտոնից ազատելու պահանջով դիմել էր Անկարա, նշանակվելու դեպքում չի ընդունի այս դեսպանի հավատարմագիրը»:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Ռուսները նոր այցագիր կտան արտաքսված բրիտանացի լրագրողին

Մեծ Բրիտանիայում Ռուսաստանի դեսպանատունը պատրաստ է նոր այցագիր տալ «Գարդիան» թերթի լրագրող Լյուկ Հարդինգին, հաղորդում է ՌԻԱ գործակալությունը:

Այդ մասին հայտարարել է ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ Ալեքսանդր Լուկաշեւիչը: Նա նշել է, որ ինքը որեւէ խոչընդոտ չի տեսնում Ռուսաստանում Հարդինգի աշխատանքի համար: «Նա պետք է դիմի ՌԴ դեսպանատուն: Այնտեղ պատրաստ են այցագիր տալ...», ընդգծել է պաշտոնյան:

Նրա խոսքերով, Հարդինգը նախ պետք է «կանոնավորի իր կարգավիճակը օտարերկրացի թղթակիցների հավատարմագրման դրույթներին համապատասխան»:

Հարդինգը Լոնդոնից Մոսկվա էր թռել փետրվարի 7-ին: Անձնագրային ստուգման ենթարկելուց հետո լրագրողին առանց որեւէ պատճառաբանության արգելել էին մուտք գործել ՌԴ, չեղյալ էին հայտարարել այցագիրը եւ առաջին իսկ չվերթով հետ էին ուղարկել հայրենիք:

Փետրվարի 8-ին ՌԴ ԱԳՆ-ն պատժամիջոցները բացատրել էր Հարդինգի մոտ օտարերկրյա թղթակցի վկայականի բացակայությամբ, որը նրա համար դուրս էին գրել Լոնդոն մեկնելուց առաջ: Հարդինգը մերժել էր ՌԴ իշխանությունների պատճառաբանությունը, նշելով, որ ինքն ուներ ՌԴ մտնելու այցագիր, իսկ թղթակցի վկայականը թռիչքից անմիջապես հետո կվերցներ ԱԳՆ-ից: Բրիտանացի լրագրողը ՌԴ իշխանությունների գործողությունը կապում է Ռուսաստանին վերաբերող իր հրապարակումների հետ:

Հարկ է նաեւ նշել, որ ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը Հարդինգի հետ կապված միջադեպը մեկնաբանելիս հաստատել է բրիտանացու այն խոսքերը, որ նա ունեցել է մինչեւ մայիսի վերջը գործող ռուսական այցագիր: Լավրովը նաեւ ասել է, թե արտաքսման օրը Հարդինգի այցագիրը ոչ ոք չեղյալ չի հայտարարել:

ԵԳԻՊՏՈՍ

# Ցուցարարները ամբողջ պահանջում էին Մուբարաքի հրաժարականը

## *Կստեղծվի սահմանադրական բարեփոխումների հանձնաժողով*



**Կահիրեի կենտրոնում՝ Թահրիր հրապարակում երեկ ցերեկը շարունակվեցին բողոքի զանգվածային ելույթները: Ցուցարարների գլխավոր պահանջում էին Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի հրաժարականն է: Գլխավոր ընդդիմադիր կազմակերպության՝ «Մուսուլման եղբայրների» ղեկավարները իշխանություններից պահանջում էին կատարել ստանձնած բոլոր պարտավորությունները:**

**Ցույցերը ամբողջ օրը չդադարեցին՝ չնայած կառավարության եւ ընդդիմադիր շարժումների առաջնորդների միջեւ սկսված բանակցություններին: Ցուցարարները խոստանում էին հրապարակից հեռանալ միայն Մուբարաքի հրաժարականից հետո: Այդ մասին հաղորդում է BBC-ն:**

**Փոխնախագահ Օմար Սուլեյմանը 6 ընդդիմադիր խմբավորումների (այդ թվում «Մուսուլման եղբայրների») ներկայացուցիչների հետ բանակցելուց հետո լրատվամիջոցներին հայտնել է, որ համաձայնություն է ձեռք բերվել սահմանադրական բարեփոխումների համատեղ հանձնաժողովի ստեղծման առնչությամբ: Ընդդիմության ներկայացուցիչները, սակայն, ընդգծում են, որ իշխանությունների ձեռնարկած միջոցները անբավարար են: «Մուսուլման եղբայրները» ուղղակի հայտարարել են, որ այսուհետեւ իրենք բանակցություններին կմասնակցեն միայն Մուբարաքի պաշտոնաթողությունից, խորհրդարանի ցրումից եւ բոլոր քաղբանտարկյալների արձակումից հետո:**

**Հիշյալ հանձնաժողովը պետք է քննարկի առաջարկվող սահմանադրական բարեփոխումները, որոնք սահմանափակում են նախագահական կառավարման ժամկետը եւ մեղմացնում են նախագահության թեկնածուների առաջադրման չափանիշները: Հանձնաժողովում կընդգրկվեն դատական համակարգի ներկայացուցիչներ եւ քաղաքական գործիչներ: Մարտի սկզբներին պետք է հրապարակվեն այդ հանձնաժողովի հանձնարարականները:**

**Սուլեյմանն ասել է, որ հակակառավարական ձեռնարկումների մասնակիցները դատական հետապնդման չեն ենթարկվի: Կառավարությունը չի խոչընդոտի մամուլի ազատությանը, չի միջամտի համացանցի աշխատանքին:**

**Հունվարի 25-ից շարունակվող ցույցերի, Մուբարաքի կողմնակիցների ու հակառակորդների բախումների ընթացքում սպանվել են 300, վիրավորվել՝ մոտ 5 հազար անձինք: Միայն զբոսաշրջիկների թվի կրճատման հետեւանքով երկրի օրական կորուստները անցնում են 310 մլն դոլարից:**



# Բելառուսին դուրս են հրավիրում «Արեւելյան գործընկերությունից»

Բելառուսի նկատմամբ Եվրոմիության՝ փետրվարից ուժի մեջ մտած պատժամիջոցների համատեքստում Եվրոմիությունը հեռացրել է Մինսկին՝ «Արեւելյան գործընկերություն» խորհրդարանային վեհաժողովի աշխատանքներից: Հիշեցնենք, որ եվրոպական այս ծրագրի անդամներ են Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Ուկրաինան, Մոլդովան եւ, փաստորեն՝ նախկինում նաեւ Բելառուսը: Այս մասին տեղեկացնում է EUobserver պարբերականը՝ հավելելով, որ այս տարվա մարտին Բրյուսելում հիշյալ երկրների խորհրդարանների խոսնակների մակարդակով նիստ տեղի ունենա, որին Բելառուսի խորհրդարանի նախագահը չի մասնակցի:

Նշենք, որ Մինսկի նկատմամբ ԵՄ-ի սահմանած այս պատժամիջոցները կապված են անցյալ տարի դեկտեմբերի 19-ին այդ երկրում տեղի ունեցած նախագահական ընտրություններում տեղ գտած ընտրախախտումների եւ կիրառված բռնությունների հետ:

Հ. Ա.

# Հայրենական մշակութային արտադրանքը՝ «ART EXPO-2011»-ում


ՖՈՏՈԼՈՒՐ



ՖՈՏՈԼՈՒՐ

Երեկ Հայաստանի նկարիչների միությունում բացվեց «ART EXPO-2011» արվեստների ցուցահանդեսը: Արարողությանը ներկա էին նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը:

«ART EXPO»-ն կազմակերպվում է մշակույթի նախարարության նախաձեռնությամբ: Արդեն երեք տարի ցուցահանդեսի միջոցով հանրությունը հնարավորություն է ունենում ծանոթանալու հայրենական մշակութային արտադրանքին: Երեկ հանրապետության նախագահը մոտեցավ տաղավարներին, ծանոթացավ ներկայացված նմուշներին ու աշխատանքներին: Այս տարի «ART EXPO»-ն ներկայանում է ոչ միայն 2010-ին կատարված ծրագրերով ու ձեռքբերումներով, այլեւ նոր նախագծերով ու համարձակ փորձարարությամբ: Մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը** լրագրողների հետ զրույցի ժամանակ անդրադառնալով հարցին, թե ինչո՞վ է առանձնանում «ART EXPO-2011»-ը՝ նշեց. «Պատմամշակութային ժառանգության ոլորտն այս տարի ներկայացնում ենք ավելի հստակ ու լայնածավալ, քան անցյալ տարի: Ցուցահանդեսն այս անգամ տարբերվում է նաեւ նրանով, որ ավելի ընդարձակորեն են ներկայացվելու 2011-ի ծրագրերը»:

Ցուցահանդեսը բաց է լինելու փետրվարի 11-12-ին, մասնակցում են շուրջ 50 պետական ու հասարակական-մշակութային կազմակերպություններ՝ թանգարաններ, ցուցասրահներ, փառատոներ եւ այլն: «ART EXPO»-ի շնորհանդեսային սրահում, որը դարձյալ Նկարիչների միությունում է, 16 մշակութային կազմակերպություններ երեկ ու այսօր հանդես են գալիս շնորհանդեսներով՝ ֆիլմերի ցուցադրությամբ, դասախոսություններով, տարբեր կրթական ծրագրերով եւ այլն: Նկարիչների միությունում, կարելի է ասել, երկու օր մշակութային տոն է: Տաղավարներն ինքնատիպ են, ամփոփում են ավանդականն ու արդիականը եւ կարողանում են նոր լիցքեր հաղորդել այցելուներին:

Պարի պետական անսամբլի տաղավարն այստեղ ներկայացնում է անսամբլի նոր զգեստապահարանը: Պարի անսամբլի տնօրեն **Էրիկ Չանչուրյանն** ասում է, որ կարվել է շուրջ 200 կտոր նոր զգեստ: Նրանք արվեստների ցուցահանդեսին մասնակցում են առաջին անգամ եւ արդեն լավ տպավորություններ են ստացել: Կարեւորելով «ART EXPO»-ն՝ Էրիկ Չանչուրյանը նշեց, որ նման միջոցառումները մարդկանց մեջ մշակույթի հանդեպ հոգածություն կարթնացնեն: Իսկ Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն **Ռուզան Սարյանը** ասաց, որ իրենց թանգարանն արդեն երկրորդ անգամ է մասնակցում «ART EXPO»-ին: Նրա խոսքով՝ այսպիսի ցուցահանդեսները կարող են նաեւ խթանել թանգարանային արվեստի ու թանգարանային արտադրանքի զարգացումը:

«ART EXPO-2011»- համակարգողը «Էքսպոմեդիա» ցուցահանդեսների նախագծման կենտրոնն է:

Ի. Պ.

# *Նոր հրատարակություն՝ հայկական վաղքրիստոնեական ճարտարապետության*




**Մուրադ Հասրաթյանի «Հայկական վաղքրիստոնեական ճարտարապետություն»** ստվարածավալ, մեծադիր հատորը լույս տեսավ անցյալ տարի, Մոսկվայում (Ինկոմբուկ(?), 400 էջ): Տասը տարի առաջ գրքի ռուսերեն հրատարակության հանդեպ լայն հետաքրքրությունը պահանջարկ առաջացրեց նոր տպագրության՝ այս անգամ հայերենով եւ անգլերենով: Պատկերագրքի 1-84 էջերի երկլեզվյա ներածականում հեղինակը հանգամանալի տեղեկություններ է հաղորդում հայկական վաղքրիստոնեական ճարտարապետության սկզբնավորման եւ դրա հետագա զարգացումների մասին՝ պատմական միջավայրի ընդհանուր համատեքստում: Նա IV-VII դդ. ճարտարապետությունը բաժանում է երկու փուլի՝ IV-VI դարեր, որպես մոնումենտալ շինությունների բոլոր տիպերի ձեւավորման՝ անցյալի ժառանգության՝ հելլենիստական եւ ուրարտական ճարտարապետության հատկանիշների պահպանմամբ եւ VI դարավերջ եւ VII դարն ամբողջությամբ հայկական ազգային ճարտարապետության վերջնական ձեւավորման շրջաններ:

Պատմական կարեւորագույն գործոնը քրիստոնեությունը Հայաստանում պետականորեն ընդունելու իրադարձությունն էր, որով եւ պայմանավորվեց հայ ժողովրդի հետագա ընթացքը եւ մշակույթի քրիստոնեական կերպը: Հայաստանի քրիստոնեացման սկզբնական շրջանի ցավալի կորուստները՝ հեթանոսական մշակույթի անխնա ոչնչացումը, չէր կարող իր անդառնալի հետքը չթողնել աշխարհիկ ու հոգեւոր առումներով, բայց եւ անհնար էր նոր ձեւավորվող մշակույթի մեջ կանխել հին քաղաքակրթության տարրերի ներհոսքը, որոնք պահպանվում էին ոչ միայն փրկված նյութական մշակութային ժառանգության եւ կամ ժողովրդական ծեսերի ու ավանդույթների մեջ, նաեւ սերնդեսերունդ հաղորդվում բանասացների միջոցով:

Վաղմիջնադարի Հայաստանում աշխարհիկ նշանակության շինությունների (պալատներ, սեղանատներ, բնակելի տներ, կամուրջներ եւ այլն) առատությամբ հանդերձ, ինչպես հեղինակն է գրում, գերակշռողը եղել են պաշտամունքային կառույցները, որոնք կատարելագործվել ու զարգացել են քրիստոնեության ամրապնդման եւ հետագա տարածմանը զուգընթաց: Եվ հենց դրանք են համարվում հայ միջնադարյան ճարտարապետության գոհարները: Ըստ որում, ոչ պատահականորեն, դարերի դիմադրությանը, ժամանակի փորձությանը հենց դրանք էլ դիմակայել են, ի տարբերություն աշխարհիկ կառույցների, որոնք մեծամասամբ ավերվել-անհետացել են: Պատճառներից մեկը նաեւ շինարարական նյութը, աշխատանքի որակն ու մեթոդներն էին, ճարտարապետական նոր ձեւերի կիրառումն ու կատարելագործումը:

Տարիների մասնագիտական ուսումնասիրությունների փորձը, նաեւ գրավոր սկզբնաղբյուրային պատմական տեղեկությունների իմացությունը հնարավորություն են ընձեռել ոչ միայն այս շրջանի հայ ճարտարապետության մանրամասն բնութագրումների ու նկարագրությունների, նաեւ տվյալ կառույցների հատակագծային եւ ծավալատարածքային հորինվածքները կազմելու:

Հեղինակը կատարում է հիշատակվող կառույցների տիպաբանական վերլուծումներ՝ ընդգրկելով 4-դարյա հայ ճարտարապետական մշակույթի բոլոր հնարավոր տեսակներն ու դրանց զարգացումները: Ամենատարածվածը թերեւս մատչելիության առումով, պաշտամունքային ճարտարապետության մեջ համարվում է միանավ եկեղեցիների հնագույն տիպը, որոնցից մեզ են հասել 50-ը: Հեղինակը հանգամանորեն նկարագրում է դրանց բնորոշ ձեւերն ու հատկանիշները, անդրադառնալով յուրաքանչյուրի առանձնահատկություններին: Զուգընթաց սկսվել են կառուցվել նաեւ եռանավ բազիլիկաներ, որոնցից մեզ են հասել ութը՝ Քասախ, Աղց, Աշտարակ, Եղվարդ, Երերույք, Ծիծեռնավանք, Դվին, Կոռբ: Նույն սկզբունքով մեկնաբանվում են նաեւ բոլոր այս կառույցները: Այս նույն շրջանում հայ հոգեւոր ճարտարապետության մեջ ձեւավորվել է սկսում 2-րդ ուղղությունը՝ գմբեթավոր եկեղեցիները կենտրոնագմբեթ հորինվածքներով: Պատմական մի քանի կարեւոր տեղեկություններ փոխանցելով, հեղինակը ընթերցողի միտքը դարձնում է ճարտարապետական այս առավել ուշագրավ ձեւերին, որոնց նկարագրությունը ներածականի ամենածավալուն էջերն է զբաղեցնում՝ (Ողջաբերդ, Արզնի, Մորու ձորի Սբ Աստվածածին, Օշականի եւ Փարպիի խառաբսիդներ, Սբ Ստեփանոս Նախավկա, Թալինի Սբ Աստվածածին, Կարմրավոր Սբ Աստվածածին, Բջնիի Սբ Սարգիս, Կոշի Սբ Ստեփանոս եւ այլն):


*Հնեվանք. Սբ Աստվածածին եկեղեցին, 7-րդ դ.*

Վաղագույն գմբեթավոր եկեղեցին Էջմիածնի Մայր տաճարն է (301-303 թթ.)՝ իր հազարամյակների գոյության ընթացքում բազմիցս վերականգնված: Հետաքրքրական է կառույցի նախնական հորինվածքի մասին եղած տարբեր կարծիքների (միանավ, եռանավ բազիլիկա) մեկնաբանությունները, ըստ որի XX դարի կեսերին կատարված պեղումները հերքում են նախորդ բնութագրումները, մասնագիտական այն եզրակացությամբ, որ «նրա մույթերը հենց սկզբից գմբեթակիր հենարաններ են եղել», ինչը հավաստում է նաեւ Ագաթանգեղոսի վկայությունն առ այն, որ եկեղեցին կառուցվել է ըստ Գրիգոր Լուսավորիչի տեսիլքի՝ չորս սյուների վրա բարձրացող գմբեթով, այսինքն՝ տաճարը մեզ է հասել սկզբնական հորինվածքով: «Էջմիածնի Մայր տաճարը խաչաձեւ գմբեթավոր կառույցի ավարտուն տիպ է. քառակուսի դահլիճ՝ ազատ կանգնած չորս մույթերով եւ չորս կողմից դեպի դուրս շեշտված աբսիդներով», գրում է հեղինակը:

Հայ հոգեւոր ճարտարապետության մեկ այլ տիպ ներկայացնում է գմբեթավոր բազիլիկ եկեղեցին: Վաղ շրջանից մեզ հասած, հեղինակի բնորոշմամբ, ամենակարեւոր ու հանգուցային հուշարձաններից մեկը Տեկորի Սբ Սարգիս վկայարանն է, թվագրված 470-490 թթ., որն ավերվեց XX դարի առաջին տասնամյակներում, եւ որի «օրինակով Հայաստանը դարձավ քառամույթ խաչագմբեթ եկեղեցական շենքի ստեղծման կենտրոններից մեկը»: Այս շարքում առանձնացվում են նաեւ Օձունի, Բագավանի, Թալինի, Արուճի, Պտղնիի տաճարները, Էջմիածնի Սբ Գայանեն, Զորի եւ Կումայրի հուշարձանները: Հեղինակը առանձնակի կարեւորությամբ է ներկայացնում Զվարթնոցի Սբ Գրիգոր տաճարը՝ որպես «պաշտամունքային շենքի նոր տիպ՝ եռայարուս կենտրոնագմբեթ հորինվածքով, ծավալային լուծումով տարբեր», որի «կառուցվածքային հանդուգն լուծումը գերազանցում էր ժամանակի տեխնիկական գիտելիքների մակարդակը»: Հեղինակը առանձնակի ընդգծում է Զվարթնոցի ազդեցությունը ոչ միայն հայ, նաեւ տարածաշրջանի մշակութային հետագա զարգացումների վրա: Անդրադարձ է արված նաեւ մեմորիալ հուշարձաններին՝ դամբարաններ, հուշասյուներ, կոթողներ: Այս շրջանի ճարտարապետական արվեստի ճանաչողությունն ամբողջացնում են շինարարական տեխնիկայի, օգտագործված նյութերի ու միջոցների, նաեւ կիրառված մեթոդների մասին տեղեկությունները:

Հայոց ճարտարապետության զարգացման չորսդարյա ընթացքի այս քննությունը դիտարկված է ժամանակաշրջանին բնորոշ պետական-քաղաքական-եկեղեցական կարեւոր գործոնների ազդեցությամբ, ի մասնավորի նկատի է առնված Հայ եկեղեցու ինքնուրույնության հանգամանքը (Քաղկեդոնի համաժողովի դոգմաներից նրա հրաժարումը), որն էլ առանձնակի ինքնատիպություն եւ անշփոթելի ձեռագիր է հաղորդել հայ հոգեւոր ճարտարապետությանը:

Տեքստին հաջորդող աղյուսակների բաժնում ներկայացված են շինությունների հատակագծերը, զարդաձեւերի պատկերները (էջ 87-176)՝ ՀՀ պատմության եւ մշակույթի վարչության աշխատակիցներ Կ. Հայրապետյանի, Ն. Հակոբյանի, Ե. Գրիգորյանի, Գ. Թելումյանի, Ռ. Խալաթյանի կատարմամբ, գիտական մասի ղեկավար Մ. Հասրաթյան: Վերջին էջերը (178-399) բովանդակում են հիշյալ կառույցների լուսապատկերները. բացվում է IV դարի Ագարակի Սբ Աստվածածին եկեղեցով, ավարտվում Արուճի պատմական հուշարձաններով՝ VII դ պալատական բազիլիկայով եւ Գրիգոր Մամիկոնյանի պալատով (661-685 թթ.): Լուսանկարիչներ՝ Վիկտոր Աղյան, Զավեն Սարգսյան, Պաոլո Կունեո, Թոմազո Բրեչա Ֆրատադոկկի, Ժան-Միշել Թիերրի:

Հայ ճարտարապետության կարեւորագույն շրջանի մասնագիտական այս լուրջ ուսումնասիրությունը իմացական եւ ճանաչողական նշանակություն ունի թե մեզ, թե օտարների համար: Ցավում ենք, սակայն, հայերեն տեքստում սպրդած մի շարք ուղղագրական, սրբագրական վրիպումների համար, ինչը նման հրատարակությունները առավելագույնս պետք է որ բացառեն:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# «Աերոֆլոտի» մրցաշարում հայերն առաջատար դիրքերում են

Մոսկվայում ընթացող շախմատի «Աերոֆլոտի» մրցաշարում ուժեղագույնների մրցավեճում 3-րդ տուրում հաջողությունն ուղեկցեց միայն Ավետիք Գրիգորյանին, որը սեւերով պարտության մատնեց Անտոն Կորոբովին: Այդ հաղթանակի շնորհիվ Գրիգորյանը վաստակեց 2 միավոր: Նույնքան միավոր ունի նաեւ Սերգեյ Մովսիսյանը, որը սպիտակներով հաշտություն կնքեց ռուսաստանցի Դենիս Խիսմատուլինի հետ: Տուրն անհաջող էր Տիգրան Պետրոսյանի համար, որն անդրանիկ պարտությունը կրեց: Նրա մրցակիցը Եվգենի Տոմաշեւսկին էր: Տիգրանը վաստակել է 1,5 միավոր: Բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը 3-րդ անընդմեջ պարտիան ավարտեց ոչ-ոքի: Նա հաշտություն կնքեց Բոյան Վուչկովիչի հետ: Մխիթարյանն ունի 1,5 միավոր:

Մրցաշարային աղյուսակը 3 միավորով գլխավորում է վիետնամցի Լե Քուան Լիեմը, որն առավելության հասավ Սլովենիայի ներկայացուցիչ Լուկա Լենիչի նկատմամբ: 9 շախմատիստներ 2,5-ական միավորով հետապնդում են առաջատարին:


Տիգրան Քոթանջյան

B խմբի մրցաշարի մասնակից հայաստանցի 6 շախմատիստներից առավել հաջող է հանդես գալիս Տիգրան Քոթանջյանը, որն ունի 2,5 միավոր: Տիգրանը միակն էր մեր շախմատիստներից, որ հաղթանակ տոնեց՝ սեւերով առավելության հասնելով ֆիլիպինցի միջազգային վարպետ Ռիչարդ Բիտոնի նկատմամբ: 2 միավոր վաստակած Հովհաննես Գաբուզյանը հաշտություն կնքեց Ալեքսեյ Ռեշոտնիկովի հետ: Ոչ-ոքի ավարտ ունեցավ նաեւ Դավիթ Պետրոսյանի մրցավեճը Օլեգ Յուֆերեւի հետ: Պետրոսյանն ունի 1,5 միավոր: Տուրն անհաջող էր Սուրեն Պողոսյանի, Հովիկ Հայրապետյանի եւ Վահե Բաղդասարյանի համար, որոնք պարտվեցին:

B խմբի միանձնյա առաջատարը ռուսաստանցի Ալեքսեյ Գավրիլովն է, որը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Օլիվեր Դիմակիլինգի հետ մրցավեճում: 15 շախմատիստներ, որոնց թվում են Տիգրան Քոթանջյանը, Պողոս Նահապետյանն ու Մելիքսեթ Խաչիյանը, 2,5-ական միավորով հետապնդում են առաջատարին: Խաչիյանը հաղթեց հոլանդացի Ջոպ Դելեմարեին, Նահապետյանը հաշտություն կնքեց ֆիլիպինցի Դարվին Լայլոյի հետ:

C խմբում հանդես եկող հայաստանցի 9 շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Դավիթ Շահինյանը, Տիգրան Սիմոնյանը, Վարդան Խոջայանը, Սարգիս Մանուկյանն ու Արթուր Ղարագյոզյանը, որոնք վաստակել են 2,5-ական միավոր: Այս հնգյակից հաղթանակներ տոնեցին Սիմոնյանն ու Խոջայանը, մյուսները խաղաղությամբ բաժանվեցին: 3-ական միավորով աղյուսակը գլխավորում են Աննա Բուրտասովան, Բյարկե Ենսենը եւ Ալթանուլգի Էնխթուլը:

# Սյուզի Քենտիկյան. «Ինձ ոչինչ նվեր չի տրվել»

## *Մարտին լույս կտեսնի ինքնակենսագրականը*

Հունվարի սկզբից եւեթ բռնցքամարտի թեթեւքաշայինների աշխարհի չեմպիոնուհին մտածում է Ունիվերզում ակումբից հեռանալու մասին: 2010-ի հուլիսին լրացել է հիշյալ ակումբի եւ ZDF-ի միջեւ կնքված պայմանագիրը, եւ ակումբի նոր՝ այլընտրանքային հեռուստահեռարձակող գտնելու փնտրտուքը արդյունք չի գրանցել: Սյուզիի 40-ամյա մարզիչ Մագոմեդ Շաբուրովին 2010-ի դեկտեմբերի վերջին են միայն իրազեկել, թե ակումբի հետ կնքած պայմանագիրը չի երկարաձգվելու: Մարզիչն իր սաների՝ Սյուզիի ու Դմիտրի Զարտիզոնի հետ կամավորության սկզբունքով է աշխատում: 23-ամյա Քենտիկյանի համար անորոշությունը բեռ է դարձել, նա վերջին անգամ ռինգ է դուրս եկել 2010-ի հուլիսին: Հունվարի 29-ին Համբուրգում նախատեսված մրցամարտը հետաձգվեց բրեմենցի մրցակցի մարտից հրաժարվելու պատճառով: «Ես այնքան էներգիա ունեմ, ուզում եմ վերջապես ռինգում սպառել այն», ասում է Սյուզին: Բանն այն է, որ մինչեւ այժմ չի գտնվել մի վճարունակ հեռուստատեսային հեռարձակող, որին հետաքրքրում է կանանց բռնցքամարտը: ZDF-ը մրցամարտերը հեռարձակելիս ճանաչել էր Քենտիկյանին որպես օրվա գլխավոր բռնցքամարտիկ, ուրիշները սրան



դժվար են համաձայնում: Թեպետ SAT.1-ը եւ RTL-ը հետաքրքրված են Քենտիկյանով, բայց պատրաստ չեն վեցանիշ մեծության դրամ վճարել: Բանն այն է, որ օրինակ SAT.1-ի պարագայում նրանք համաձայն են Քենտիկյանի հետ պայմանագիր կնքել, բայց դեմ են Ունիվերզումին: Քենտիկյանը հավատում է ռինգում իր ապագային եւ պատրաստ է դրան ի գին նաեւ փոխել ակումբը: «Սյուզին երջանիկ է, որ շատ երկրպագու ունի եւ շատերն են ուզում նրան օգնել», ասել է նրա PR մենեջերը: Մարտին լույս կտեսնի 23-ամյա Սյուզի Քենտիկյանի «Ինձ ոչինչ նվեր չի տրվել» վերնագրով ինքնակենսագրականը: Փախստական դարձած ընտանիքի վերանայված մի պատմություն է սա: «Գոհ եմ, որ այդ պատմությունը միջիցս դուրս եկավ», խոստովանել է Սյուզին: Ռինգի երկար դադարներին Քենտիկյանը լիցքավորվելու նոր ազդակներ է փնտրում, նա հովանավորում է «Կենաց ծառ. Հայաստան» ծրագիրը, որ ընկուզենու տնկերի, այնուհետ պտուղից ստացվող արժեքավոր մաքուր յուղի՝ Եվրոպայում, մասնավորապես Գերմանիայում իրացման շնորհիվ աշխատատեղերով է ապահովելու 200 հայ ընտանիքի:

Այժմ Քենտիկյանը փորձում է հետ պտտել ժամանակը, վերապրել պատանության ազատ, անհոգ կյանքը, որ երբեւէ չի ունեցել: Նա շատ է մտածում իր ապագայի մասին: Միայն մի բան մտքով չի անցնում՝ թողնել բռնցքամարտը: «Շատերն ասում են, թե ամեն ինչի հասել եմ արդեն, բայց ես այդպես չեմ կարծում: Ես դեռ հաջողության կարոտ եմ: Ամեն ինչ նոր է սկսվելու»:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# Հայ մարզիկները կմասնակցեն Եվրոպայի երիտասարդական օլիմպիական ձմեռային փառատոնին

Ինչպես տեղեկացանք ՀԱՕԿ-ի մամուլի ծառայության պատասխանատու **Նաթելա Հովասափյանից**, փետրվարի 12-19 Չեխիայի Լիբերեց քաղաքում կանցկացվի Եվրոպայի երիտասարդական օլիմպիական ձմեռային 10-րդ փառատոնը: Մարզահանդեսին կմասնակցեն աշխարհամասի 49 երկրների օլիմպիական կոմիտեների պատվիրակություններ: Ծրագրում ընդգրկված է ութ մարզաձեւ՝ լեռնադահուկային սպորտ, դահուկավազք, դահուկացատկ, դահուկային երկամարտ, հոկեյ, գեղասահք, բիաթլոն, սնոուբորդ:

Հայաստանի ներկայացուցիչներն իրենց ունակությունները կդրսեւորեն չորս մարզաձեւում՝ գեղասահք, բիաթլոն, լեռնադահուկային սպորտ, դահուկավազք:

ՀՀ մարզական պատվիրակության գլխավոր հանձնակատարն է ՀԱՕԿ-ի ձմեռային օլիմպիական մարզաձեւերի բաժնի պետ Հայկ Զաղացպանյանը: Լիբերեց կմեկնեն նաեւ ՀԱՕԿ-ի ամառային օլիմպիական մարզաձեւերի բաժնի պետ Գաբրիել Ղազարյանը, գեղասահորդներ Սլավիկ Հայրապետյանը, Մարթա Գրիգորյանը, բիաթլոնիստներ Արտուշ Մկրտչյանը, Գոհար Աբգարյանը, լեռնադահուկորդներ Սարգիս Գալստյանը, Եվա Պապոյանը, դահուկորդներ Հրաչիկ Սահակյանը, Թադեւոս Պողոսյանը, Կատյա Գալստյանը, Լիլիթ Տոնոյանը, մարզիչներ Սամվել Հայրապետյանը (գեղասահք), Հովհաննես Սարգսյանը (բիաթլոն), Սամվել Հակոբյանը (լեռնադահուկային սպորտ) եւ Անահիտ Մխիթարյանը (դահուկավազք):

Փառատոնի մասնակցության նախապատրաստությունը կայացել է ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի աջակցությամբ:

Հայաստանի պատվիրակությունը մրցավայր կմեկնի այսօր եւ հայրենիք կվերադառնա փետրվարի 18-ին: Մեր մարզիկների համար մրցումները կսկսվեն փետրվարի 14-ին: Այդ օրը մրցասպարեզ դուրս կգան գեղասահորդները, դահուկորդներն ու լեռնադահուկորդները:

**ՖՈՒՏԲՈԼ**

# «Միկան»՝ Կիպրոսում, «Ուլիսը»՝ Թուրքիայում

**Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության մասնակից թիմերի մեծամասնությունն այս օրերին ուսումնամարզական հավաք են անցկացնում արտերկրում: Կիպրոս է մեկնել «Միկան», որի կազմում ուսումնամարզական հավաքին մասնակցում են 21 ֆուտբոլիստներ: Թիմին է միացել իսպանացի լեգեոնական Ուլիսես Մոնտենեգրոն, որը նախորդ երկու մրցաշրջաններում հանդես է եկել «Միկայում»: Նա վնասվածք ուներ, որի պատճառով անցյալ տարի չմասնակցեց մի շարք խաղերի: Մոլդովայի երիտասարդական հավաքականում խաղ անցկացնելուց հետո կրկին «Միկայի» իր խաղընկերների հետ է մարզվում Կոնստանտին Մանդրիչենկոն:**

**Երկշաբաթյա հավաքի ընթացքում նախատեսված է 4 խաղ: Այսօր «Միկան» կմրցի Չեխիայի «Յաբլոնեցի» հետ: Թիմն ուժերը կչափի նաեւ Սերբիայի «Սլոբոդայի» եւ Աստրախանի «Վոլգար-Գազպրոմի» հետ: «Միկան» եւս մեկ խաղ կանցկացնի, որում մրցակիցը դեռեւս անհայտ է:**

**«Ուլիսի» ֆուտբոլիստները մարզումները շարունակում են Անթալիայում: Հիշեցնենք, որ ուսումնամարզական առաջին հավաքը թիմն անցկացրել էր Ուռեկիում: «Ուլիսը» զգալիորեն համալրել է կազմը, սակայն փորձարկումները դեռեւս շարունակվում են: Այժմ թիմում փորձաշրջան է անցնում «Փյունիկի» եւ ՀՀ երիտասարդական հավաքականի դարպասապահ Էդուարդ Հովհաննիսյանը: Թիմի մարզիչները հրաժարվել են Վրաստանից ժամանած Գեորգի Պողոսյանից եւ «Իմպուլսի» նախկին հարձակվող Արման Մինասյանից, որոնք փորձաշրջան էին անցնում «Ուլիսում»: Հավաքի ընթացքում «Ուլիսը» ուժերը կփորձարկի ստուգողական հանդիպումներում:**

# Առաջին խաղում ոչ-ոքի

**Թուրքիայում ուսումնամարզական հավաքի ընթացքում Գյումրիի «Շիրակը» ստուգողական առաջին հանդիպումն անցկացրեց Ուզբեկստանի բարձրագույն խմբի առաջնության մասնակից «Անդիջանի» հետ: Խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1: Առաջին խաղակեսում հաշիվը բացեց «Շիրակի» Նորեկ, նախկին կիլիկիացի Կարեն Խաչատրյանը: Ընդմիջումից հետո «Անդիջանը» վերականգնեց հավասարակշռությունը:**

**«Շիրակի» կազմում հանդիպմանը մասնակցել է Բենջամին Կաբոնգոն: Թիմում փորձաշրջան է անցնում նաեւ կենտրոնական պաշտպան, բրազիլացի Տիագո Լոպես Կասարինոն:**

# Առաջատարի հետապնդումը շարունակվում է

**Բոլոնիայի շախմատի մրցաշարի 6-րդ տուրում Էլինա Դանիելյանը ոչ-ոքի խաղաց Ալեքսանդր Դելչեւի հետ: Նրանք Ալեքսեյ Դրեեւի եւ Ռոլանդ Սալվադորի հետ վաստակած 5-ական միավորով բաժանում են 2-5-րդ տեղերը: Դրեեւը հաշտություն կնքեց մրցաշարի առաջատար Դավիթ Ալբերտոյի հետ, որը 5,5 միավորով շարունակում է գլխավորել աղյուսակը:**

**Հրայր Սիմոնյանը հաշտություն կնքեց Անդրեա Բուրիանիի հետ ու վաստակեց 3 միավոր:**

# 25 մլն ֆունտ ստեռլինգ Կակայի համար

Լոնդոնի «Չելսին» հետաքրքրված է Մադրիդի «Ռեալի» կիսապաշտպան, բրազիլացի Կակայով: Ակումբի սեփականատեր Ռոման Աբրամովիչը պատրաստ է 25 մլն ֆունտ ստեռլինգ հատկացնել ամռանը Կակային գնելու համար: «Չելսիի» գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին լավ ծանոթ է բրազիլացու խաղային ունակություններին, քանի որ «Միլանում» Կական բավական ժամանակ հանդես է եկել նրա գլխավորությամբ:

# Պետր Չեխի 4-րդ «Ոսկե գնդակը»



Լոնդոնի «Չելսիի» դարպասապահ Պետր Չեխը 3-րդ տարին անընդմեջ ճանաչվել է Չեխիայի լավագույն ֆուտբոլիստ: Փորձագետների, մարզիչների եւ ազգային հավաքականի ֆուտբոլիստների միջեւ անցկացված հարցման արդյունքներով Չեխը գերազանցեց «Արսենալի» կիսապաշտպան Թոմաշ Ռոսիցկուն եւ Մադրիդի «Ատլետիկոյի» պաշտպան Թոմաշ Ույֆալուշիին:

Պրահայի «Սպարտայի» եւ ֆրանսիական «Ռենի» նախկին դարպասապահը 4-րդ անգամ արժանացավ Չեխիայի լավագույն ֆուտբոլիստի համար նախատեսված «Ոսկե գնդակ» մրցանակին ու այդ ցուցանիշով հավասարվեց Թուրինի «Յուվենտուսի» նախկին կիսապաշտպան Պավել Նեդվեդին: Յուրօրինակ ռեկորդակիրը Պրահայի «Դուկլայի» նախկին դարպասապահ Իվո Վիկտորն է, որն անցյալ դարի 60-70-ականներին 5 անգամ լավագույնն է ճանաչվել:

Չեխիայի լավագույն թիմ է ճանաչվել Պլզենի «Վիկտորիան», որը հիանալի անցկացրեց առաջնության առաջին շրջանը ու ներկայումս գլխավորում է աղյուսակը: Այդ թիմի գլխավոր մարզիչ Պավել Վրբան ճանաչվել է լավագույնը: Տարվա լավագույն երիտասարդ ֆուտբոլիստի մրցանակը կհանձնվի «Սպարտայի» հարձակվող Վացլավ Կադլեցին:

# Էշլի Քոուլը լավագույնն է Անգլիայում

«Չելսիի» պաշտպան Էշլի Քոուլը ճանաչվել է 2010-ի Անգլիայի լավագույն ֆուտբոլիստ: Նա հաղթող է ճանաչվել ֆուտբոլասերների միջեւ անցկացված հարցման արդյունքներով: 30-ամյա ֆուտբոլիստը մրցույթում առաջ անցավ «Լիվերպուլի» ավագ Սթիվեն Ջերարդից եւ «Մանչեսթր Սիթիի» կիսապաշտպան Ադամ Ջոնսոնից:

Էշլի Քոուլն առաջին պաշտպանն է, որ արժանանում է Անգլիայի լավագույն ֆուտբոլիստի տիտղոսին: Նախորդ երկու մրցաշրջաններում լավագույնն էր ճանաչվել «Մանչեսթր Յունայթեդի» հարձակվող Ուեյն Ռունին: Ֆրենկ Լեմփարդն էլ երկու տարի անընդմեջ (2004-2005-ին) լավագույնի տիտղոսը ոչ մեկին չէր զիջել: Իսկ 2003-ին ֆուտբոլասերների ընտրյալը Դեւիդ Բեքհեմն էր:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

## Օրվա հետքերով

# «Երազում եմ, որ իմ երակներում խաչասերվող երկու ազգերը համերաշխության կամուրջ գտնեն»

*Ասում է Ֆելիքս Ալիեւը*

71-ամյա Ֆելիքս Ալիեւը ազգությամբ ադրբեջանցի է, ապրում ու աշխատում է Էջմիածնում: Ֆելիքսն աշխատում է Էջմիածնից 5 կմ հեռու գտնվող Գեղակերտ գյուղի մարզադպրոցում: Ունի 13-24 տարեկան շուրջ 40 սան:

Վաստակավոր մարզիչը պատրաստել է 33 սպորտի վարպետ, որոնցից երկուսը՝ միջազգային կարգի: Սպորտի վաստակավոր վարպետ Յուրի Սարգսյանը, որ 1982-83-ին դարձել է աշխարհի չեմպիոն ու սահմանել համաշխարհային ռեկորդ, նրա սանն է: Ալիեւը հավաստիացնում է՝ աշխարհին դեռ բազմաթիվ չեմպիոններ է տալու:



«Եթե իմ սաները երես թեքեին ինձանից, կհեռանայի: Բայց նրանք ինձ ամուր թիկունք կանգնեցին», պատմում է նա: Ալիեւը պատմում է, թե ինչպես 90-ականներին նրա սաները սպասում էին, մինչեւ պարապմունքները դպրոցում ավարտվում էին եւ օրվա վերջում նրան ուղեկցում տուն:

Նրա կինը՝ 63-ամյա տիկին Զույան այսօրվա պես հիշում է, երբ Ֆելիքսն իրեն սիրո խոստովանություն ու ամուսնության առաջարկություն արեց: «Բայց ես ադրբեջանցի եմ, Զույա», ասաց նա: «Ես էլ ասացի՝ ազգությունն ինչ կարեւոր է, մարդս մարդ լինի», պատմում է նա:

Արդեն մի քանի տասնամյակ նրանք միասին են: Տիկին Զույան պատմում է, որ երբեւէ չեն վիճել, կռվել, ապրել են սիրով ու համերաշխ: «Հպարտացել եմ, որ ամուսինս հասել է բարձունքների», ասում է տիկին Զույան ու ցույց տալիս շքանշանները, մեդալները, պատվոգրերը, գրքերն ու ամսագրերը, որոնք Ֆելիքսի անցած ուղու լուռ վկաներն են:

Ֆելիքս Ալիեւի նախնիները Հայաստան են գաղթել Պարսկաստանի Խոյ գավառից:

Հայրը՝ Ասկար Ալիեւը 1936-ին ամուսնանում է Եպրաքսյա Դանիելյանի հետ:

«Հայրս հրաշալի կլառնետ էր նվագում: Էջմիածնում բոլորն էին ճանաչում Ուստա Ալիին: Նա ներկա էր բոլոր հարսանիքներին: Տիկին Զույան ցավով է հիշում, թե ինչպես էր սկեսրայրն ընկճվում ազգամիջյան ընդհարումների ժամանակ:

Ֆելիքսը պատմում է, որ ամաչում էր իր ազգակիցների փոխարեն: Սումգայիթի ու Բաքվի դեպքերը ցնցեցին Ալիեւների ընտանիքը: Տիկին Զույան պատմում է, որ այդ ժամանակ ամուսինն ու սկեսրայրն ամաչում էին մարդկանց աչքերի մեջ նայել, կարծես իրենք մեղավոր լինեին իրենց հայրենակիցների դաժանության ու մարդասպանության համար: Տանտիկինը հիշում է, որ Բուդապեշտում հայ զինվոր Գուրգեն Մարգարյանի սպանության մասին լուրն իմանալուց հետո Ֆելիքսը բարձրաձայն լացում էր:

Մարզվելուց բացի Ալիեւը շատ է սիրում գիրք կարդալ, սիրելի հեղինակը Չարենցն է: Ֆելիքսի սիրելի զբաղմունքներից է նաեւ օրագրում գրառումներ կատարելը: Հիմնականում գրում է կարգախոսներ, որոնցով առաջնորդվում է կյանքում:

Նա խնամքով թերթում է օրագրի էջերն ու կարդում դրանցից մեկը:

«Մարդը, անկախ իր ազգային պատկանելությունից, պետք է գործի հանուն համամարդկային շահերի, լինի ոչ թե ազգայնամոլ, այլ ինտերնացիոնալիստ»: Ալիեւը խոստովանում է, որ միշտ առաջնորդվել է օրագրում գրված բազմաթիվ կարգախոսներով:

Ֆելիքսն իրեն համարում է քրիստոնյա. սիրելի եկեղեցին՝ Սուրբ Գայանեն է, հաճախ է մասնակցում պատարագներին: Տանը չունեն ո՛չ Ղուրան, ո՛չ Աստվածաշունչ:

«Ինձ համար Ղուրանն ու Ավետարանը մաքրությունն ու մարդասիրությունն են», ասում է նա:

Ադրբեջանում ազգականներ ունի, սակայն նրանց հետ կապ չի պահպանում: «Կինս ու մայրս հայուհի են, նրանք չեն կարող Ադրբեջանում ապրել, Հայաստանից հեռանալ էլ չեմ ցանկանում, սա իմ տունն է, իմ հողը»:

Վաստակավոր մարզիչը հիշում է, որ 1990-ին Պոդոլսկում մրցումների ժամանակ հանդիպել է ադրբեջանցի մարզիկների: «Նրանք չէին հավատում, որ առանց ազգանունս փոխելու ապրում եմ Հայաստանում: Երբ անձնագրում տեսան, որ նշված է Ալիեւ, ապշեցին»:

Այսօր Ֆելիքս Ալիեւն ընդամենը մեկ երազանք ունի, որ իր երակներում խաչասերվող երկու ազգերը գտնեն համերաշխության կամուրջ: «Հավերժ թշնամիներ ու բարեկամներ չկան, հայն ու ադրբեջանցին էլ պետք է կարողանան խաղաղ ապրել», օրագրից փոքրիկ մեջբերում է անում ու հույս հայտնում, որ հարեւան ազգերը մի օր կմոռանան անցյալի ցավն ու ատելությունը եւ կապրեն խաղաղ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Հայերի հնագույն կապերը Երուսաղեմի հետ

***Ըստ Արթուր Հակոբյանի Երուսաղեմից հաղորդած լրատվության («Արմինյն միրոր սփեքթեյթր», հունվարի 8, 2011), բյուզանդացի եպիսկոպոսի ձեռամբ գրված վերջերս հայտնաբերված նամակը ամենակարեւոր փաստաթղթերից մեկը կարելի է համարել, որ հաստատում է հայերի վաղնջական կապը Երուսաղեմի հետ: Ստորեւ թարգմանաբար՝ քաղվածքներ այդ հոդվածից:***

Չնայած Հայաստանն ու հայերը կապեր են ունեցել Երուսաղեմի (Պաղեստինի) հետ դեռեւս Տիգրան Մեծի օրոք, դժբախտաբար այդ փաստն ապացուցող վկայություններ կամ չեն պահպանվել, կամ էլ շատ քիչ են եւ կցկտուր:

Պրոֆ. Աբրահամ Տերյանը նման բացառիկ մի նամակ է հայտնաբերել վերջերս՝ գրված բյուզանդացի եպիսկոպոսի կողմից, իր կարծիքով, մոտավորապես 335 թվականին, այսինքն՝ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց հետո, 30 տարուց մի փոքր ավելի ուշ:

Նամակի բնօրինակը եղել է հունարեն, բայց հայերեն թարգմանությունն է պահպանվել մինչեւ օրս: Հեղինակը Երուսաղեմի Մակարիոս եպիսկոպոսն է, որին Մեծն Կոստանդին կայսրը (306-337 մ.թ.) հանձնարարել է վերահսկել Սբ Գերեզմանի եկեղեցու շինարարությունը: Նամակը գրվել է ի պատասխան նորաստեղծ հայկական եկեղեցու մկրտության եւ հաղորդության վերաբերյալ հարցումների:

Երկար տարիներ նամակը ուսումնասիրելուց հետո միջազգային ճանաչման արժանացած պրոֆ. Աբրահամ Տերյանը (Սուրբ քաղաքի նախկին բնակիչ՝ «քաղաքացի») 2008-ին հրատարակում է իր «Երուսաղեմի Մակարիոսը: Նամակ հայերին, 335 մ.թ.» հատորը (Macarius of Jerusalem, Letter to the Armenians, AD 335), որն ակադեմիական շրջանակներում ոգեւորությամբ եւ գովասանական գրախոսականներով է ընդունվել: Տերյանի «առաջնակարգ ուսումնասիրությունը», ըստ դրանցից մեկի, մեծապես պարտական է նրա մանրամասն, պարբերություն առ պարբերություն մեկնաբանությանը, որի շնորհիվ հայկական եկեղեցին իր «արժանի տեղն ու դերն է զբաղեցնում Երուսաղեմի հետ իր ամենավաղ շրջանի հարաբերություններում»:

Նամակը հետաքրքրական մանրամասներ է պարունակում արեւելյան եկեղեցիներում կատարվող ծիսակատարությունների վերաբերյալ: Այդ ժամանակներում, պարզվում է, եկեղեցիները չունեին իրենց սեփական մկրտության ավազանները, ոչ էլ բավականաչափ «կնքման յուղ» (մյուռոն):

Նամակը, որը քրիստոնյա Երուսաղեմում հայերի վաղնջական ներկայության կարեւոր վավերաթուղթ է, ներառված է երկու ժողովածուներում: Մեկը՝ կազմված 7-րդ դարում եւ վերակազմված 1298-ին, իսկ մյուսը՝ 8-րդ դարում եւ վերակազմված 11-րդ դարում: Իր աշխատանքների համար պրոֆ. Աբրահամ Տերյանը քանիցս արժանացել է գիտական բարձր կոչումների եւ աստիճանների:

Հ. Ծ.

## ՀԱԿԻՐՃ

### Կբացվեն աշխատանքի 6 ակումբներ

**Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության աջակցությամբ այս տարի կբացվեն աշխատանքի 6 ակումբներ: Գործակալության աշխատանքի խորհրդատվության ու տեղեկատվության բաժնի պետ Ցոլիկ Բեժանյանը «Արմենպրեսին» տեղեկացրել է, որ ակումբները բացվելու են 6 տարբեր քաղաքներում՝ Սիսիանում, Մեղրիում, Գյումրիում, Վայքում, Նոյեմբերյանում եւ Մարտունիում: Ակումբները բացվելու են քաղաքների զբաղվածության տարածքային կենտրոններին կից: Ակումբների համար նախատեսված տարածքներն արդեն առանձնացված են, եւ հիմա կատարվում են վերանորոգման աշխատանքները: Ցոլիկ Բեժանյանի փոխանցմամբ՝ աշխատանքի ակումբներն աշխատանք փնտրելու գործում աջակցում են գործազուրկներին, տրամադրում տեղեկատվություն թափուր աշխատատեղերի, զբաղվածության ամենամյա պետական ծրագրերի վերաբերյալ:**

**Աշխատանքի ակումբներ արդեն գործում են Գավառում, Վանաձորում, Իջեւանում, Բերդում, Գորիսում եւ այլ վայրերում:**

Ի. Պ.

### Շուտափույթ ապաքինում ենք մաղթում

**Երեկ տեղակացանք, որ առավոտյան 8.30-ի սահմաններում Հայաստանի պաշտպանության նախարարության վարչական շենքի դիմաց՝ Բագրեւանդ փողոցում տեղի է ունեցել ավտովթար: Դեռ չպարզված հանգամանքներում իրար են բախվել «Միցուբիշի» մակնիշի եւ ԳԱԶ-3102 մակնիշի ավտոմեքենաները: Վթարի վայրից մարմնական վնասվածքներով Նորք-Մարաշի օրթոպեդիայի եւ վնասվածքաբանության բժշկական կենտրոն է տեղափոխվել արդարադատության նախկին նախարար Գեւորգ Դանիելյանը, իսկ գնդապետ Սասուն Հունանյանը՝ պաշտպանության նախարարության հոսպիտալ:**

**Մաղթում ենք նրանց շուտափույթ ապաքինում:**

Ս. Ս.

### Ազգ-ի 20-ամյակ

### Երգիծանկարների ցուցահանդես

### Ֆոտո եւ Գ. Յարալյան

Ցուցահանդեսում կներկայացվեն զույգ երգիծանկարիչների տարբեր տարիներում «**Ազգ**» օրաթերթում լույս տեսած երգիծանկարներից ընտիր նմուշներ:

Բացումը՝ 16 փետր. 2011, ժամը 17:00-ին, Թեքեյան կենտրոնի ցուցասրահում: Ցուցահանդեսը կշարունակվի եւս 2 օր, 17 եւ 18 փետրվարին:

**Մուտքը՝ ազատ:**

### Լուծարվում է

«Կապույտ ալիք» ՓԲԸ-ն՝ գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Սևանի տարածքային բաժնում 15.11.2007թ., գրանցման N 35.120.01282, վկայական 03Ա-076842:

Պարտատերերը երկամսյա ժամկետում կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Մյասնիկյան 42:

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակարան, ընդ. մակերեսը 36.4 քմ: Հասցե՝ ՀՀ, ք.Երեւան, Կենտրոն համայնք, Աբովյան փ., 34ա շ., թիվ 32: Մեկն. գինը՝ 23200000 դրամ:
- Առանձնատուն, ընդ. մակերեսը 397.04 քմ., հողամաս՝ 0.057 հա, ավտոտնակ՝ 53.71 քմ. եւ կաթսայատուն՝ 2.94 քմ.: Հասցե՝ ՀՀ, ք. Սեւան, Կոմիսարների 94: Մեկն. գինը՝ 10530000 դրամ:
- Բնակարան, ընդ. մակերեսը 75.38 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Սեւան, Ս.Սեւանեցու 23/17: Մեկն. գինը՝ 6705000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 15.03.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուր. աշխ. օր ժ.11.00--17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուր. օր ժամը 11.00 – 20.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am :




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 11.2.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28:

AZG NERDIR 133.QXD 11/02/2011 20:19 Page 1

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
12 ՓԵՏՐՈՒԱՐ, 2011

# Ազգ օրաթերթը 20 տարեկան է

ՍՈՒՐԷՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմ. գիտ., թեկնածու, դոցենտ

Հայ մամուլի պատմության նորագույն շրջանի սկիզբն իրավամբ 1988 թվականն է: Ազատ, ժողովրդավարական մամուլի ծնունդը պայմանավորված էր այն լայնամասշտաբ, հեղաբեկիչ փոփոխություններով, որոնք ծայր առան ԽՍՀՄ-ում 1990-ական թթ.: Ընդունված է նորագույն մամուլի պատմությունը բաժանել երեք՝ Ինքնահոս, Անցումային եւ Ձեւավորման փուլերի: Վերջինիս հիմքը դրվեց 1991 թ. «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» օրենքով, որով ձեւավորվեցին մամուլի գործունեության կարգավորման իրավական շրջանակները: Այս շրջանի ամենաբնորոշ հատկանիշը մամուլի միջոցների պայքարն էր հանուն հասարակական ազդեցության եւ զգացմունքային, ռոմանտիկ ոճից անցումը չափավոր իրատեսականի:

1991 թ. Հայաստանում սկսեցին ազատ գործել հայ ավանդական կուսակցությունները, որոնցից, մասնավորապես, ՌԱԿ-ը ձեռնամուխ եղավ նորանկախ Հայաստանում իր առաջին՝ «Ազգ» թերթի հրատարակությանը: Նախաձեռնողներն էին երկարամյա կուսակցական, Բեյրութի «Զարթօնք» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը եւ ՌԱԿ նշանավոր գործիչ, հայ մամուլի երախտավոր, վաստակաշատ մտավորական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Երվանդ Ազատյանը, իսկ ֆինանսավորողը՝ մեծ բարերար Ալեք Մանուկյանը՝ Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչության միջոցով:

Տեխնիկական խումբը Բոստոնի ՌԱԿ «Պայքար» հաստատության տնօրեն Միհրան Մինասյանի եւ ֆիզիկոս Պավել Դալլաքյանի ղեկավարությամբ ստեղծեց թերթի տեխնիկական կարգուսարքն ու առաջին տառատեսակները, կատարեց էջադրման ծրագիրը եւ հաջողությամբ ավարտելով վերջին նախապատրաստական աշխատանքները, 1991 թ. փետրվարի 16-ին Հ. Ավետիքյանի խմբագրապետությամբ սկսեց լույս ընծայել թերթը: Անդրանիկ համարի խմբագրականում հստակեցվում է, թե ինչպիսի պարբերական է դառնալու «Ազգը». «Առաջին հերթին լուր պիտի տա, եթե լրագիր է, ուրեմն լուր հաղորդելն առաջինն է: Երկրորդ՝ «Ազգը» ամբիոնն է լինելու ազատ եւ անկաշկանդ մտածումի, ազատ, արդար, բայց տեղին քննադատության՝ որքան էլ ցավագին լինի այն, եւ համարձակ հարցադրումների՝ որքան էլ զգայուն լինեն դրանք: Երրորդ՝ պիտի ձգտի կանգնելու եւ վերականգնելու մեր ժողովրդի ներքին հավասարակշռությունը: Չորրորդ՝ պիտի ջանա միավորել մեր ազգը համահայկականության մականի տակ, ազգային Մեծ Երազի տեսլականի՝ մեկ հայրենիք, մեկ ժողովուրդ ու մեկ ճակատագիր կարգախոսի տակ: Հինգերորդ՝ «Ազգը» խոսափողն է ռամկավարական (ժողովրդավարական-դեմոկրատական) եւ ազատական (լիբերալ) գաղափարախոսության եւ գործելաձեւի, վերականգնելով շուրջ 70 տարի առաջ հայրենի հողի վրա բռնորեն դադարեցված այդ մտածողությունը»:[1]

Պարբերականի 1-ին եւ 2-րդ համարները լույս տեսան որպես ՌԱԿ-ի պաշտոնաթերթ, սակայն գրանցող մարմնի պահանջով ենթախորագրից կուսակցության անվանումը հանվեց: Այսուհանդերձ «Ազգը» ՌԱԿ-ի պաշտոնաթերթը չէր, այլ ստեղծվել էր հիմնադիրների խորհրդի կողմից: Հիմնադիր խորհրդի անդամներն էին Հ. Ավետիքյանը (Լիբանան), Վ. Ղազարյանը (ԱՄՆ), Մ. Մինասյանը (ԱՄՆ), որոնց 1992 թ. հունվարի 20-ի վերագրանցումից հետո միացան Կ. Կոստանդյանը եւ Ռ. Միրզախանյանը (երկուսն էլ Հայաստանից): Սկզբնական շրջանում թերթի 8-9 համարներ չվաճառվեցին, չնայած տպագրվում էր 10 հազար օրինակ, սակայն 10-րդ համարից սկսած հետզհետե այն սկսում է սիրվել ու մեծ հաջողություն վայելել: Ավելանում է տպաքանակը: Ստեղծման առաջին տարում լույս է տեսնում թերթի 92 համար, որից հետո այն դառնում է օրաթերթ: 1993 թ. վերջերին օրեկան 43 հազար տպաքանակ թերթ էր սպառվում: Անվճար չէր բաժանվում ոչ մի օրինակ: Ավելանում էին եկամուտները: Իսկ 1993 թ. առաջին կեսին այն հրապարակվեց նաեւ ԱՄՆ-ում: «Ազգ» լրագրի գործունեությամբ Հայաստանում դրվեց իրական տեղեկատվական լրատվության սկիզբը: Այն մեզանում առաջին բազմակարծիք, հավասարակշռված ու օբյեկտիվ տեղեկատվական պարբերականներից է: Ոչ միայն ՀՀ-ում, այլեւ տարածաշրջանում «Ազգն» առաջին օրաթերթն է, որ շարվել եւ ձեւավորվել է համակարգչային եղանակով:

Մինչեւ 1996 թ. ապրիլ թերթի հրատարակությունը շարունակվել է առանց մեծ ցնցումների: Սակայն քաղաքական տարաձայնությունների պատճառով եւ ՀՀ Արդարադատության նախարարության որոշում-հիմքով փոխվում է հիմնադիրների կազմը, իսկ 1996 թ. ապրիլմայիս ամիսներին լույս են տեսնում երկու նույնանուն թերթ: Մեկը՝ «Ազգ»-ի խմբագրակազմի միջոցով եւ ՀՌԱԿ համակիրների քաջալերությամբ ապրիլի 23-ից մեկ էջով, համակարգչային ճանապարհով, ընդամենը 99 օրինակով Հակոբ Ավետիքյանի խմբագրությամբ, որը գրում է, թե «Մեր երկրում դեռեւս փխրուն խոսքի ազատությունն ու բազմակարծությունը դարձյալ բախվեց չկայացած ժողովրդավարության պետական մեքենային: Մենք չենք լքի մեր աշխատատեղը եւ կշարունակենք մեր սովորական աշխատանքային գործունեությունը»:[2] Մյուսը՝ «Ռամկավար Ազատական կուսակցության ներկայացուցչություն» հասարակական կազմակերպության կողմից կեղծ «Ազգը» (1082-1091 համարները)՝ խմբագրական խորհրդի ստորագրությամբ: Վերջինս 1996 թ. ապրիլի 27-ի խմբագրականում հայտարարում էր. «Վերջապես, ՌԱԿ-ը հաստատեց իր իրական ներկայացուցչությունը Հայաստանում եւ վերականգնեց օրինական իրավունքը «Ազգ» օրաթերթի նկատմամբ»:[3]

Թերթի աշխատակազմը որոշեց ոչ մի քայլ չնահանջել ու օգնության կոչով դիմեց տարբեր կազմակերպությունների, այդ թվում՝ արտասահմանյան: Անմիջապես դրականորեն արձագանքեցին շատ կուսակցություններ, հեղինակավոր կառույցներ ու մտավորականներ, ովքեր հայտարարեցին. «Ազգի» առջեւ ծառացած այս ճակատագրական պահին... չեն կարող անտարբեր գտնվել եւ միանալով թերթի աշխատակազմին իրենց վճռական բողոքն են հայտնում կատարվածի դեմ»:[4] 1996 թ. մայիսի 8-ին Սպանդարյանի շրջանի ժողդատարանի վճռով հիմնադիրների խորհրդի հին կազմի իրավունքների վերականգնումից հետո, մայիսի 14-ից իսկական «Ազգ» թերթը վերսկսում է տպագրվել նախկին պարբերականությամբ: Ահա թե ինչ է գրում այդ առիթով պարբերականը «Ազգը» վերադարձավ ազգին» խմբագրականում. «Հայաստանում արդարադատությունն արձանագրեց իր կարեւորագույն, հույս ունենք՝ անվերադարձելի քայլը՝ ստեղծեց նախադեպ, երբ ժողդատարանը բեկանեց գործադիր իշխանության մի օղակի, այս դեպքում՝ վարչականորեն իր վերադաս նախարարության որոշումը»:[5] Դրանից հետո էլ «Նորագականները» չհանդարտվեցին: Փորձեր եղան նույնիսկ ուժի միջոցով տիրանալու թերթին: Երկու անգամ փորձ արվեց հրդեհելու խմբագրատունը, ծեծի ենթարկվեցին աշխատակիցներից Արմեն Բաղդասարյանը եւ խմբագիր Հ. Ավետիքյանը: 1996 թ. հուլիսի 3-ին «Բռնահարվածի փորձ ՀՌԱԿ վարչության եւ գրասենյակի դեմ» վերնագրով հոդվածում թերթը գրում է, որ «հուլիսի 2-ի երեկոյան, ՀՌԱԿ նախկին հանրապետական վարչության մի խումբ անձինք, ապօրինաբար մուտք են գործել ՀՌԱԿ հանրապետական վարչության գրասենյակ եւ գրավել այն, իրենց հայտարարելով կուսակցության «Համադրող խորհուրդ», որին լիազորություն են տվել մինչեւ հանրապետական պատգամավորական ժողովի գումարումը տնօրինելու կուսակցության գույքը, ֆինանսական միջոցները, գրասենյակը, կնիքը եւ արխիվը»:[6] Սա վկայում էր, որ չնայած դատարանի որոշման, կրքերը դեռեւս չէին հանդարտվել, սակայն ապարդյուն՝ արդարությունը հաղթանակել էր անդառնալիորեն:

Իր գոյության 20 տարիների ընթացքում «Ազգը» Հայաստանում լույս տեսնող այն բացառիկ պարբերականներից է, որը շարունակաբար հավատարիմ մնաց իր սկզբունքներին, երբեք տուրք չտվեց քաղաքական շատ հաճախ շինծու թոհուբոհին, չկատարեց ոչ «վերեւների», ոչ էլ դրսի ու ներսի պատվերները, այլ հաստատուն ու համընթաց քայլեց ժողովրդի հոգսու ցավին, դարձավ Հայաստանի ամենահավասարակշռված պարբերականը, որը միշտ աչքի է ընկել նյութերի մատուցման պրոֆեսիոնալիզմով, հնարավորինս օբյեկտիվությամբ, խոսքի եւ թեմայի ընտրության բարձր կուլտուրայով: Դառնալով ազգայինի ու հոգեւորի համեստ մունետիկը, թերթը ձգտում է «հալեցնել», վերացնել խորհրդային համակարգի թելադրանքով առաջացած այն իսկայական պատնեշը, որը 70 տարի շարունակ խանգարում էր կերտել ժողովրդիս միասնական ու միաձեւ դիմապատկերը, արժանավայել քայլել համամարդկային պողոտայում եւ թողնել իրեն հարիր լավագույն հետագիծը: Պատահական չի, որ «Ազգը» գրեթե բոլոր համարներում անդրադարձել է Սփյուռքի խնդիրներին, լուսաբանել տարբեր երկրներում բնակվող մեր հայրենակիցների կյանքն ու կենցաղը, փորձել իր կան եւ այլ խորագրերը, որոնք լիովին համահունչ են «ազգ» հասկացությանը եւ արտահայտում են նրա նվիրական բաղձանքները: «Ազգի» թեմատիկան, ասելիքը, ամեն բանից առաջ, վերաբերվում է մեր ժողովրդի հոգսու ցավերին, քաղաքական անցուդարձին, մեր պատմության ելեւէջներին, հայոց պետականության զարգացման ու ամրապնդման եւ մի շարք այլ հրատապ խնդիրներին: Թերթի արծարծած թեմաները միշտ բազմազան են, իսկ հաղորդած տարաբնույթ լուրերը նոր են, թարմ ու ճշմարիտ: Միեւնույն ժամանակ, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, «Ազգը» նյութերը ներկայացնում է օպերատիվ ձեւով եւ տալիս անաչառ մեկնաբանություն: Թերթն առաջինն էր մեզանում, որ ներդրեց նյութերը կարճ ներկայացնելու ոճը, կարճ, բայց՝ բովանդակալից:

«Ընթացիկ» խորագրի ներքո տպագրված նյութերում ակնհայտ երեւում է, որ թերթը մշտապես զգում է իրադարձությունների զարկերակը եւ փորձում է վեր հանել ու իր ընթերցողին մատուցել այնպիսի լրատվություն, որն իսկապես արտամոտ է ու հուզում է հասարակության մեծ նպաստը բերել հայապահպանության ազգանվեր գործին: Այս ասպարեզում ակտիվ հրապարակումներով մշտապես թերթին իրենց նպաստ են բերել թե սփյուռքի եւ թե հայրենի շատ նշանավոր մտավորականներ: Միանգամայն հանգիստ խղճով կարող ենք արձանագրել, որ Սփյուռքին կատարած իր անդրադարձներով, հայրենիք-սփյուռք կապը լավագույնս պահելու, փայփայելու նվիրական գործում «Ազգն» իրավի մրցակից չունի: «Ազգի» անցած ուղին, մեր կարծիքով, կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի: 1.1991-1996 թթ.՝ ձեւավորման, կայացման: 2.1996-2000 թթ.՝ «Ազգը» հանրապետության առաջատար պարբերական: 3. «Ազգն» այսօր:

«Ազգը» յուրօրինակ դպրոց դարձավ շատ նորահայտ լրագրողների ու խմբագիրների համար, ինչում անուրանալի է խմբագրապետ Հ. Ավետիքյան լրագրող-մտավորականի անուրանալի դերը: Խմբագրությունում մշտապես աշխատել են 11-15 լրագրողներ, 3-4 վերլուծաբաններ, որոնցից հինգը հետագայում հիմնեցին իրենց թերթերն ու ամսագրերը, մի մասն էլ անցան դիվանագիտական աշխատանքի: Սակայն փաստենք, որ, ի տարբերություն մնացյալ շատ պարբերականների, «Ազգի» դեպքում, երբ որեւէ աշխատակից ազատվում կամ տեղափոխվում է այլ աշխատանքի, երբեք կապը չի խզում խմբագրության հետ: Ավելին, հաճախ շարունակում է թղթակցել կամ այլ ձեւերով մասնակցել պարբերականի լույս ընծայման գործին: Ներկայումս «Ազգն» ունի երեք հազար տպաքանակ:

Ստեղծման օրվանից թերթի հիմնական խորագրերը գրեթե փոփոխությունների չեն ենթարկվել: Մշտապես գործում են Ընթացիկ, Քաղաքական, Տնտեսություն, Անդրադարձ, Միջազգային, Կրթություն, Մշակույթ, Մարզամասին: Միաժամանակ հաստատապես հեռու մնալով էժանագին ու կեղծ սենսացիաներով լսարան գրավելու վատ սովորույթից, որն այսօր բավական տարածված է մեր մամուլում: Այսպիսին տեսանք «Ազգին» 1999 թ. հոկտեմբերյան չարաբաստիկ օրերին, 2008 թ. մարտյան ազգային ողբերգության ընթացքում, հայ-թուրքական ջերմացման շրջանում եւ շարքային ու ցնցող այլ իրադարձությունների ժամանակ: «Քաղաքականություն եւ տնտեսություն» խորագիրը առաջնայիններից է «Ազգում»: 1985 թ. սկսած մեր կյանքը խիստ քաղաքականացել էր, իսկ 1988 թ. քաղաքականությունը ներթափանցեց մեր կյանքի բոլոր ոլորտներն ու դրան զուգընթաց անընդհատ իջավ ժողովրդի կենսամակարդակը: Հայաստանի Երրորդ հանրապետության շրջանում այդ անկումը դարձավ արագընթաց գահավիժում: Իսկ այդ ամենին չէր կարող անտարբեր մնալ նորանկախ հանրապետության կյանքի տարեգիր «Ազգը»: Հայթուրքական հարաբերությունները, Թուրքիայում ընթացող գործընթացները, քրդական խնդիրը, հայ-քրդական առնչությունները լավագույնս ներկայացնում ու իր հասուն, խորագիտակ ու բազմաբովանդակ վերլուծականներով հաճախ հանդես է գալիս թուրքագետ Հ. Չաքրյանը: Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը մշտապես առկա է թերթում: Անկախ բանակցությունների ձեւաչափից եւ կողմերի ու միջնորդների որդեգրած ուղղություններից, «Ազգի» համար ընդունելի մնաց բացառապես ազգային ինքնորոշման սկզբունքը: Թերթի համար կա եւս մեկ խնդիր, որը երբեք սակարկության ենթակա չէ: Դա Հայոց ցեղասպանության, մեր պահանջատիրության, պատմական հիշողության պահպանման անհրաժեշտության, մատաղ սերնդին հայեցի դաստիարակելու եւ տարաչափ

➜ Բ



*1996 թ., Օպերային թատրոնի նախասրահ, թերթի 5-ամյակի ընդունելություն, աշխատակազմի հին ու նոր անդամներ:*

AZG NERDIR 133.QXD 11/02/2011 20:19 Page 2



# Ազգ օրաթերթը 20 տարեկան է

➡Ա վայրահաչությունները այդ հարցի վերաբերյալ իսպառ վերացնելու համույթն է: Գովելի է, որ պարբերականը լրատվություն է ապահովում աշխարհի տարբեր երկրներում այդ հարցի մասին ընթացող բոլոր գործընթացների մասին: Դա կլինի Ֆրանսիայի նախագահի շուրթերից հնչած հայանպաստ դիրքորոշում,[7] ԱՄՆ-ում «Միացեք մեզ, ճանաչեք Հայոց ցեղասպանությունը» ցուցատախտակների տեղադրում,[8] Եվրոպայի կողմից ճնշում արխիվները բացելու հարցում,[9] թե համահայկական այցելություն Ցեղասպանության զոհերի հիշատակի կոթողներին, հուշ-երեկոների, եկեղեցիներում մատուցվող պատարագների եւ սիմֆոնիկ համերգների մասին: Թերթն իր թղթակիցների ու բարեկամ-համակիրների միջոցով հետեւում է Հայոց ցեղասպանությանն առնչվող գործընթացներին եւ ամենայն բարեխղճությամբ ներկայացնում դրանք` փորձելով իր համեստ նպաստը բերել այդ կարեւոր գործին:

«Ազգի» եւ ազգի համար լարված ու դժվար օրեր են սկսվում ամեն անգամ, երբ երկրում տեղի են ունենում խորհրդարանական կամ նախագահական ընտրություններ, որովհետեւ բավականին դժվար, երբեմն անհնարին է դառնում պահպանել իրապես հավասարակշռված ու անաչառ դիրքորոշումը, տուրք չտալը կողմնակալությանը, հեռու մնալ զանազան գայթակղիչ առաջարկներին ու թելադրանքներին, որոնք այսօր այնքան տարածված են մեր ԶԼՄ-ներում: Ի պատիվ «Ազգի», հանգիստ խղճով կարելի է ասել (ինչը հնարավոր չէ ասել ազգի դեպքում-Ս.Ս.), որ այն իսկապես կարողացել է մնալ իր բարձրության վրա եւ իրականացրել լուրջ եւ օբյեկտիվ պարբերականի բարձր կոչումը: Ավելին, հաճախ հենց «Ազգն» է նախաձեռնել, կոչ արել հեռու մնալ արատավոր երեւույթներից, դիմել մտավորականությանը` զգոն լինել, բարձրացնել իր ձայնը ի շահ արդարության եւ պետականության գաղափարի անաղարտության, հնչեցրել հասարակությանը մտահոգող հարց. «Ուր է մեր մտավորականությունը, որ ժողովրդի համար այսքան կարեւոր պահին լռում է»:[10]

Պարբերականն անտարբեր չի եղել նաեւ մեր հասարակությանը հուզող այնպիսի խնդիրների նկատմամբ, ինչպիսիք են սոցիալական միջավայրը, հասարակության բարոյահոգեբանական վիճակը եւ, իմ կարծիքով, հայ ժողովրդի գոյատեւման հիմնական գործոններից մեկին` ամուր ընտանիքի խնդիրներին: Այս թեմաներով շատ հրապարակումներ կան, հանդես են եկել մեր մշակույթի, կրթության ու քաղաքականության բնագավառի նշանավոր շատ ներկայացուցիչներ, որոնք հայտնում են տեսակետներ եւ հրավիրում բաց, ազատ ու անկաշկանդ քննարկման: Բոլորի մոտ կարմիր թելի նման անցնում է այն գաղափարը, թե «որքան էլ քաղաքակրթվենք, մենք իրավունք չունենք թույլ տալու մեր կանանց բարոյազրկումն ու հուսալքությունը, կնոջ հավատարմությունը ամուր ընտանիքի հիմքն է»:[11]

«Մշակույթ» խորագիրը թերթի կարեւոր մասն է կազմում: Այստեղ զետեղված նյութերն առանձնանում են իրենց թարմությամբ, հնչեղ են ու փնտրված: Ներկայացվում են նոր հեղինակներ ու նոր ստեղծագործություններ, անտիպ վավերագրեր ու բանաստեղծություններ, նոր հրապարակումներ մեր մեծերի մասին, հուշեր եւ այլ զանազան օգտակար նյութեր: Մասնագիտության բերումով ես հետեւում եմ մեր մամուլին, տեղյակ եմ այդ ասպարեզի անցուդարձին եւ միանգամայն վստահ կարող եմ ասել, որ «Ազգը» մրցակցությունից դուրս է եւս մի շատ կարեւոր ասպարեզում: Թերթում պարբերաբար տպագրվում են գրախոսականներ նոր լույս տեսած, արժեքավոր աշխատությունների վերաբերյալ, որոնցում վերլուծվում եւ արժանավույնս գնահատվում են հատկապես պատմաբանասիրության ասպարեզի մեր օրերում լույս տեսած լավագույն ուսումնասիրությունները: Այս տեսակետից չեմ կարողանում նույնիսկ մտաբերել որեւէ պարբերական, որ տեսանելի դառնա «Ազգի» կողքին: Ասելիքս ավարտուն չի լինի, եթե չշեշտեմ նաեւ, որ թերթի հետ համագործակցում են հանրապետության լավագույն մտավորականներից շատերը: Իսկ համագործակցության եզրերը բազմազան են` հարցազրույց տալու, գրախոսական գրելու, օրախնդիր ու հրատապ հարցերի քննարկման եւ բազմաթիվ այլ ձեւերով:

Եկեղեցական կյանքը եւս մշտապես «Ազգի» ուշադրության կենտրոնում է ու այս հարցում էլ օրաթերթը մրցակից չունի: Հաճախ են քննարկվում թեմաներ, որոնք կենսական նշանակություն ունեն մեր ժողովրդի համար եւ որոնք սերտորեն առնչվում են մերօրյա կյանքի լարված ընթացքում եկեղեցու դերին: Ի դեպ, եկեղեցին էլ իր հերթին փոխադարձ կապի մեջ է պարբերականի հետ, գնահատում է նրա ազգանպաստ ջանքերը թե հայրենիքում եւ թե սփյուռքում: Օրինակ վերջին կաթողիկոսական ընտրությունների ժամանակ թերթի էջերում լայն քննարկում էր ծավալվել այդ հարցի առնչությամբ, ժողովրդի ուշադրությունն էր հրավիրվում թեկնածուների անցյալին, կատարած գործերին, որպեսզի հնարավոր դառնար արժանավորի ընտրությունը եւ բացառվեր որեւէ թյուրիմացություն: Հայկաշեն Ուզունյանը, Երվանդ Ազատյանը, Նիկոլայ Հովհաննիսյանը, Բաբկեն Մկրյանը, Հակոբ Վարդիվառյանը, Ռուբեն Միրզախանյանը եւ էլի շատ հայտնի մտավորականներ թերթի էջերում հանդես են եկել եկեղեցուն առնչվող խնդիրների մասին վերլուծականներով: Այս առումով բավական հետաքրքիր է օրինակ 1999 թ. կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ Ռ. Միրզախանյանի «Մեր ապագա կաթողիկոսը պետք է հայաստանցի լինի ոչ միայն ծագումով, այլեւ մտածելակերպով» հարցազրույցը:[12] «Ազգը» նաեւ իր ձայնն է բարձրացրել ու մտահոգություններն է հայտնել ազգային կառույցների պահպանության եւ դրանց նպատակային օգտագործման համար, ինչպես օրինակ Մելքոնյան վարժարանի կամ Վենետիկի հայկական Սուրբ Խաչ եկեղեցու վաճառքի



2001 թ., Թեքեյան կենտրոն, թերթի 10-ամյակին նվիրված ճաշկերույթի նախագահության սեղանը:



1996 թ., Օպերայում կայացած ընդունելության ժամանակ: Հիմնադիրներից Երվանդ Ազատյանը, Ռուբեն Միրզախանյանը եւ Հ. Ավետիքյանը:



1996 թ. ապրիլի 12: Խմբագրի սեղանին երկու «Ազգ», մեկը կեղծ (ձախին), մյուսը` իսկական:

դեպքերում: Իսկ «Ազգի» «Մշակութային» եւ «Մանկապատանեկան»[13] հավելվածները խոսում են թերթի բարձր ճաշակի, հարուստ մտածողության, մեր վաղվա օրվա ու սերունդներին թողնվելիք հոգեւոր ժառանգության մակարդակով մտահոգ լինելու մասին: Ես` որպես Սեւակի պոեզիայի սիրահարի, մեծ ուրախությամբ ընթերցեցի այդ հավելվածներից մեկում տպագրված Արեւիկ Բաղալյանի «Ձայներ անցյալից»[14] նյութը, որով հեղինակը տեղեկացնում է, որ լույս է տեսել լազերային սկավառակ, որտեղ Պ. Սեւակի ստեղծագործությունների ձայնագրություններն են: Այս խորագրի ներքո հաճախ կան նշանավոր մարդկանց հոբելյաններին նվիրված հրապարակումներ, ինչպես օրինակ` Ս. Փարաջանովին,[15] Գառզուին, Արշիլ Գորկուն, Լեռ Կամսարին, Վ. Թեքեյանին, Զարենցին եւ մեր մյուս մեծերին: «Ազգի» կայուն եւ մշտական խորագրերից է «Մարզականը», որը վերջին շրջանում ավելի ընդարձակ ու օպերատիվ է դարձել, որով է նաեւ, որ թերթը գրավիչ է, սիրելի ու փնտրված շատերի համար: Տարբեր տարիներին թերթի այս բաժինը վարել են մեր մարզական աշխարհին քաջատեղյակ պրոֆեսիոնալներ (օրինակ` Սուրեն Բաղդասարյանը):

Անկասկած «Ազգի» լավագույն նվաճումներից է նրա կայքէջը, որում վեց լեզուներով` հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն, արաբերեն, պարսկերեն, ներկայացվում են նույն օրվա նյութերը: «Ազգը» միակ թերթն է, որի տպագիր եւ էլեկտրոնային տարբերակները լույս են տեսնում միաժամանակ: Սա, իհարկե, նյութապես այնքան էլ ձեռնտու չէ, սակայն կարեւորը, խմբագրի ասելով, շահույթը չէ, այլ ժողովրդին ժամանակին թարմ ու որակյալ ինֆորմացիա մատուցելը: 2010 թ. մայիսին Ռամբլեր անկախ ցուցիչի տվյալներով «Ազգի» կայքէջ են այցելել օրական 5-6000 ընթերցող եւ միջին հաշվով կարդացել 6-7 նյութ:[16] Միջազգային օտարերկրյա շատ լրատվամիջոցների համար հիգ. տարում 8-10 միլիոնը մեծ թիվ չի, սակայն հայ իրականության համար, Հայաստանում թե սփյուռքում տարեկան շուրջ երկու միլիոն ընթերցող այցելու ունենալու փաստն ինքնին նշանակալից երեւույթ է: Այժմ «Ազգ» օրաթերթի հայաստանյան ընթերցողները կազմում են ամբողջ լսարանի 20 տոկոսից ավելին:[17]

Ողջունելով թերթի ողջ անձնակազմին (ներկա եւ նախկին), շնորհավորելով 20-ամյա հոբելյանի առիթով, միանում եմ բոլոր բարեմաղթանքներին, եւս մեկ անգամ ուզում եմ ընգծել, որ ի դեմս «Ազգի», մեր ավելի քան երկուհարյուրամյա մամուլի պատմության մեջ, թեեւ իր ոչ շատ մեծ տարիքին, գործ ունենք իսկապես կայացած, հասուն, գրագետ, հավասարակշռված ու ցանկացած քաղաքակիրթ ժողովրդի պատիվ բերող պարբերականի հետ: Պարբերական, որը, համոզված եմ, դեռ երկար տարիներ ասելիք կունենա, որի պատմությունն ու բովանդակությունը դեռ շատ կուսումնասիրվի: Այնպես որ, բարի ու բեղուն երթ քեզ, սիրելի, արժանավոր «Ազգ»:

## Ծանոթագրություններ

*1. «Ազգ», 16 փետրվարի 1991:*
*2. «Ազգ», 23 ապրիլի 1996:*
*3. «Ազգ», 27 ապրիլի 1996:*
*4. «Ազգ», 18 ապրիլի 1996:*
*5. Ասատրյան Հ., «Ժամանակի գնահատականը փնտրեք իմ երգերում», Ե., 1997:*
*6. Ազգ, 3 հուլիսի, 1996:*
*7. Ազգ, 23 դեկտեմբերի, 2004:*
*8. Ազգ, 15 ապրիլի, 2004:*
*9. Ազգ, 31 հունվարի, 2008:*
*10. Ազգ, 30 հունվարի, 2008, Նարինե Մուրադյանի «Ինչու է լռում մտավորականությունը նախագահական ընտրությունների շրջանում» հոդվածը:*
*11. Հովհաննիսյան Ռ., «Երբ կինը օտարվում է հասարակությունից», Ազգ, 23 սեպտեմբերի, 1999:*
*12. Ազգ, 14 հոկտեմբերի 1999,*
*13. «Մշակութային» հավելվածը լույս է տեսնում նաեւ այսօր եւ ունի «Հետադարձ հայացք», «Առաջարկ», Գրական տպավորություններ» խորագրերը: «Մանկապատանեկանը» սկսեց լույս տեսնել 2008 թ. փետրվարի 1-ից, բայց, ցավոք, այլեւս դադարել է:*
*14. Ազգ, 16 դեկտեմբեր 2004:*
*15. Նույնը, 12 հունվարի 2005:*
*16. Ազգ, 16 մայիսի, 2004: Իսկ ավելի թարմ տեղեկատվությունները տես կայքէջում` azg.am:*
*17. Նույն տեղում:*

## Քարոզչական

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ՈՐՈԳԱՅԹ

## ZDF-ի նոր վավերագրությունը՝ դեպի Լեռնային Ղարաբաղ

**Գերմանական հեռուստատեսության երկրորդ ալիքը՝ ZDF-ը փետրվարին 2-ին տեղական ժամանակով 00.35-01.20-ին հեռարձակեց «Կովկասյան հանգույց. Ճամփորդություն դեպի Լեռնային Ղարաբաղ» վերնագրով վավերագրությունը: 2011-ին Գերմանիայում արտադրված վերնշյալ ֆիլմի հեղինակ ZDF-ի լրագրող Դիթմար Շումաննին (Dietmar Schumann) եւ օպերատոր Ֆրանկ Ֆիլթորֆին (Frank Vieltorf) լեռների մեջ ընկղմված «սեւ այգի է» առաջնորդել, ինչպես ենթադրելի դարձավ ֆիլմը դիտելուց հետո, այն անհանգստությունը, թե Եվրոմիության դարպասներին շատ մոտ պատերազմի եւ խաղաղության շփման գիծը մերձենում է: Հեռուստատեսության կայքէջում իր ֆիլմի մասին հեղինակի մատուցած սեղմ շարադրանքն ընթերցելիս էլ պարզ հարց էր ծագում՝ փորձառու, մրցանակակիր լրագրողի ապատեղեկատվությունը նվազեցնո՞ւմ է տագնապը, բաղձալի խաղաղությա՞նը նպաստում, թե՞ ծառայում մի այլ նպատակի: Օպերատորական բարձր վարպետությամբ նկարահանված ժապավենը, որ ոչ միայն պատկերավոր լրացնում է կայքէջի շարադրանքը, այլեւ նոր երանգներ ստեղծում, ցավոք, համոզում է, որ հիշյալ ֆիլմում փաստերի աղավաղումն ու հեգնանքն են ստեղծագործական մասի «հարստությունը»: Հեռուստալրագրողն իր հարցազրույցները վարում է ռուսերեն, ֆիլմում այն բնականաբար գերմաներեն է: Միգուցե սա մոնտաժի՞ արդյունք է, բայց ակնհայտ է՝ ուշադիր հետեւելիս ռուսերեն հեղինակային տեքստը հաճախ չի համապատասխանում տվյալ պահին հնչող թարգմանված տեքստին: Հեղինակային այս ֆիլմը անտեղյակ հեռուստադիտողի համար դառնում է իսկական մի որոգայթ: «Վերջապես մի լավ ֆիլմ այդ տեւական հակամարտության մասին, որ հասկանալի է դարձնում խնդրի էությունը», սա գերմանացի շարքային հեռուստադիտողներից մեկի կարծիքն է, բայց միակը չէ:Մեր հարցմանն ի պատասխան ZDF-ից տեղեկացրին, թե հաշվի առնելով հեռարձակման ուշ ժամը, դիտողականությունը վատ ցուցանիշ չի գրանցել: Ի դեպ, ֆիլմի առիթով Գերմանահայոց կենտրոնական խորհուրդն արդեն իր բողոքի բաց նամակն է ուղարկել ZDF-ի ղեկավարությանը, պատճենը՝ նաեւ հեղինակին: Ֆիլմը փետրվարի 13-ին ժամը 23.30-ին ցուցադրելու էր նաեւ Phoenix-ը, ինչը կանխվեց գերմանահայ համայնքի եւ ՀՀ դեսպանության միասնական ջանքերով: Մնացյալը՝ ստորեւ, ուր առանց մեկնաբանության, բնագրին հավատարիմ կփորձենք համառոտ ներկայացնել ֆիլմը եւ տեքստը՝ միմյանց ներհյուսելով:**

### Նոր հանդիպում Լեռնային Ղարաբաղի հետ

#### Մի երկիր՝ երկու ճակատ

Սա իմ՝ ZDF-ի լրագրողիս առաջին արտերկրյա ճամփորդություններից էր: Մոտ 20 տարի է անցել, բայց լավ եմ հիշում: Հեղեղի պես անձրեւում էր, երբ ես մի կիրակի, 1991-ի ապրիլի սկզբին, Հայաստանի մայրաքաղաք Երեւանից ուղղաթիռ նստեցի: Իմ ուղեկիցները խիզախ տեսք ունեին, կալաշնիկովները՝ ծնկներին, մյուս մասը պոզել էին ռազմամթերքի արկղերի վրա:Նրանք Լեռնային Ղարաբաղ մարտի էին ուզում գնալ: Հայեր էին, կամավորներ, քրիստոնյա զինյալներ: Մեր Mi-8 թռավ Սեւանի վրայով, հետո հասավ Ադրբեջանի սահմանին եւ մեկ ժամից վայրէջք կատարեց Գետաշեն գյուղի մարզադեսնին, Ադրբեջանում Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում գտնող հայկական գյուղում: Այն ժամանակ հայերի ու ադրբեջանցիների միջեւ թեժ պայքար էր ընթանում:

### Երկօրյա զինադադար

Կողմերը համաձայնել էին երկօրյա զինադադար պահպանել:Գործընկերս՝ Վոլֆ Լինդները ու ես այդ ժամանակն ուզում էինք օգտագործել՝ ZDF-ի հաղորդման համար մի քիչ նկարահանումներ անելու: Միլիցիայի ղեկավար Մանվել Դարբինյանի հետ սկզբում պիտի մի գավաթ բրենդի խմեինք: Հետո նա Ջիպով մեզ տարավ դեպի լեռը՝ ցեխոտ մի կածանով: Մի գոմի առջեւ կանգ առավ: Այնտեղ էին նրա մարտիկները, քրիստոնյա հայեր: Նրանց դեմ հանդիման լեռնային մարգագետնի մյուս ծայրին ադրբեջանական բանակի մարտիկներն էին խրամատավորվել: Երկու ճակատների առանքում, հանկարծ ոչխարի հոտի հետ մի պատանի հայտնվեց՝ առանձնահատուկ խիզախ, թե՞ միամիտ, չգիտեմ: Մի հայ պատանի Գետաշենից: Գոռում էին՝ պիտի ետ գնա, ռազմական տարածքը թողնի:Պատանին պատճառաբանում էր, թե ախր զինադադար է, եւ իր հոտը հյութեղ արոտավայրում արածելու է բերել: Դեռ լրիվ չէր հասցրել ավարտել խոսքը, երբ երկու կրակոց լսվեց: Ադրբեջանցի հրաձիգի գնդակը պատանու տտին ու գլխին էր կպել: Այն, ինչ սկսվեց, սարսափազդու կոտորած էր, որ որեւէ պատերազմի դաշտում երբեւէ ապրել եմ: Հայերն ու ադրբեջանցիները իրար վրա էին հարձակվում՝ հրացաններով ու դանակներով ու միմյանց մորթում: Մեզ հրամանատար Մանվելն իր Ջիպով փախցրեց:Կատաղի արագությամբ հասանք Գետաշեն, որտեղ ուղղաթիռը ազերիների գնդակներից միայն մեծ չարչարանքով ճողոպրեց:



Օպերատոր Ֆրանկ Ֆիլթորֆը Ստեփանակերտում նկարահանումներ անելիս

### 30 000 զոհ պատերազմում

Մինչեւ 1994-ի կեսերը շարունակվեց պատերազմը, հետո հայերը Լեռնային Ղարաբաղը՝ «սեւ այգին» նվաճեցին: 30 000 զոհ: Մոտ մեկ միլիոն փախստական: Եվրոպայի հարավարեւելյան երկու պետություն՝ Հայաստանն ու Ադրբեջանը մինչ օրս իրար հետ անհաշտ են, բանակները պատրաստ են իրար վրա հարձակվել: Երկուսն էլ Լեռնային Ղարաբաղն են պահանջում, երկուսն էլ հենվում, վկայակոչում են միջազգային իրավունքը: Հայերը՝ ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, ադրբեջանցիները՝ սահմանների անձեռնմխելիությունը: Ո՞վ է իրավացի: Ո՞րն այս հակամարտության էությունը: Ինչո՞ւ է շարունակվում կռիվը Սաարլանդից երկու անգամ ավելի մեծ արժանահիշատակ օգտակար հանածոներից զուրկ մի տարածքի վերաբերյալ: Այս հարցերի պատասխանները բազմաթիվ են եւ որտեղից որ սերում է հարցի հեղինակը, եւ ինչ քարտեզ որ ձեռքին է ունենում, պատասխաններն էլ ըստ այդմ՝ միանգամայն տարբեր են լինում:Շատերը կարծում են, թե սա մշակույթների ու կրոնների պատերազմ է՝ քրիստոնյաներն ընդդեմ մահմեդականների: Օրինակ, Լեռնային Ղարաբաղի բանակի ղեկավարը կարծում է, թե քրիստոնեության եւ իսլամի միջեւ անցնող բաժանարար մարտագիծը ընթանում է Կովկասի միջով: Մահմեդականներն ու քրիստոնյաները պարզապես չեն կարող իրար հետ ապրել:

### Դատապարտվա՞ծ են հակամարտության

Որտեղ որ իրար են հանդիպում, հակամարտություն է ծագում, ասում է բարձրագույն կրթություն ստացած Արմենը՝ Շուշիում: Կարծում եմ՝ առաջին հայացքից է այդպես: Կովկասում էլ կան վայրեր, որտեղ քրիստոնյաներն ու մահմեդականները իրար հետ լավ լեզու են գտնում: Օրինակ, Հարավային Վրաստանի Մառնեուլում: Ուրիշները փաստարկում են, թե հայերն ու ազերիները Կովկասում պատերազմ են մղում իրական դերակատարների փոխարեն. հայերը՝ Ռուսաստանի անունից, ազերիները՝ Թուրքիայի: Ճիշտ է, որ Մոսկվան ու Անկարան կռիվ են մղում Կովկասում քաղաքական, տնտեսական ու ռազմական ազդեցության համար: Բայցեւայնպես կասկածում եմ, որ դրա համար բարեկամացած պետություններին ռազմի կկոչեն: Կասկած չկա՝ կրոնական եւ մշակութային տարբերություններն առկա են հայերի ու ազերիների միջեւ, եւ դրանք երկու կողմի անպատասխանատու քաղաքական գործիչները շարունակ շահարկում են: Նաեւ՝ տարածաշրջանային արտաքին ուժերի՝ Ռուսաստանի ու Թուրքիայի տարբեր շահերն են հավելյալ շիկացնում հակամարտությունը:

### Կողոպտելու հին ավանդույթը

Ղարաբաղյան խնդրի միջուկը կովկասյան մի հնամենի ավանդույթով է հիմնավորվում: Կողոպուտը: Կովկասյան այս հնամենի՝ հարեւաններին կողոպտելու ավանդույթը, ինչպես նաեւ արյան վրեժի օրենքը մինչեւ օրս էլ ուժի մեջ են: Ընդ որում՝ մշտապես հարցը հետեւյալն է՝ առաջինն ո՞վ է եղել Լեռնային Ղարաբաղում: Քրիստոնյանե՞րը, թե՞ մահմեդականներն են առաջինն այնտեղ բնակություն հաստատել, հայերի՞, թե՞ ազերիների ցեղախմբերը:Երկու կողմերն էլ դառնացած վիճաբանում են: Իրողությունն այն է, որ ինչպես քրիստոնեական, այնպես էլ մահմեդական ցեղերը հարյուրամյակներ է, ինչ բնակություն են հաստատել Լեռնային Ղարաբաղում: Տարածաշրջանը նրանց երկուսին է պատկանում:Ինչպես նախկինում, այնպես էլ հիմա միջնադարյան մտայնությունն ու վերաբերմունքն են որոշում Երեւանում ու Բաքվում իշխողների քաղաքականությունը: Նրանք մտածում են «կողոպուտ», «վրեժ» եւ «արյան վրեժ» կատեգորիաներով:Եվ քանի այդպես է, Լեռնային Ղարաբաղում վիճակը պայթունավտանգ է:Ամեն պահի կարող է պատերազմ բռնկվել: Կովկասում՝ Եվրոպական Միության արեւելյան դարպասների մոտ:Բայց Արեւմուտքում ապրող եվրոպացիներին դա հազիվ թե հետաքրքրում է: Թվում է, թե Բրյուսելում ու Բեռլինում Արեւելյան Եվրոպայի այս հակամարտությունը ծածկված է խավարով:

### «Կովկասյան հանգույց. Ճամփորդություն դեպի Լեռնային Ղարաբաղ»

#### Մուտք՝ տեսախցիկով

Արարատը՝ հայերի ազգային սրբությունը մատչելի է թվում, իրականում անհասանելի է՝ սահմանի մյուս կողմում է՝ Թուրքիայում, ուր մոտ 100 տարի առաջ 100 000-ավոր հայերի սպանեցին, կենդանի մնացածներին էլ բռնի տարհանեցին: Լեռան այս կողմում Երեւանն է, նախկին ԽՍՀՄ-ի ծաղկանոցը, պտուղ բանջարեղենի գլխավոր մատակարարը: Այսօր էլ շուկան շատ փարթամ տեսականի է առաջարկում, բայց գնորդ չկա: Հայաստանի բնակչությունն աղքատ է, պատճառը ԼՂ հակամարտությունն է: Մինչ Ղարաբաղ մեկնելը սկզբում կողմնորոշման համար Հայաստանի ռադիոյի մեր գործընկերների կարծիքն ունկնդրեցինք, հակամարտության ինչպիսի հանգուցալուծում են նրանք տեսնում: «Երեւան» ծրագրի գերմաներեն բաժնի մոդերատոր Ալլա Ամիրջանյանին հարց՝ «մոտ ապագայում ադրբեջանցի հարեւանների հետ խաղաղ գոյակցություն կարո՞ղ եք պատկերացնել: «Ավելի շուտ հեքիաթ է դա, բայց կուզենայի», ինչում է պատասխանը: Փոխտնօրեն Հովհաննիսյանը, որ իր ունկնդիրներին կառավարության տեսակետն է ներկայացնում ասում է՝ «ԼՂ չի վերադառնա այն կարգավիճակին, ինչ ունեցել է ԽՍՀՄ ժամանակ: Մի բան հստակ չէ՝ ԼՂ անկախ պետություն կլինի, թե՞ Հայաստանին կմիանա»: Այդուհետ շատ կոշտ ձեւակերպում՝ «ԼՂ միշտ հայկական կմնա»: Հայկական քարոզչությունը մեր ականջներում վարորդ Դավիթ Դավթյանի հետ ուղեւորվում ենք Ղարաբաղ: Ճանապարհների վիճակն այնքան էլ բարվոք չէ, վարորդն է կարծում, բայց խոստանում տեղ հասցնել: Մեծ մասամբ հայերով բնակեցված ԼՂ մինչեւ ԽՍՀՄ փլուզումը Ադրբեջանին էր պատկանում, հայերը գտան, թե անարդարացի է եւ պատերազմ սկսեցին: Երեսուն հազար զոհ, մեկ միլիոն փախստական գրանցած պատերազմում հաղթեցին հայերը: 1994-ից ԼՂ նրանց է պատկանում, բայց Ադրբեջանը կորցրած տարածքը ետ է ուզում՝ ամեն գնով, նաեւ՝ պատերազմի: Հասանք Լաչին: Այստեղից է սկսվում ԼՂ՝ մի տարածք, ուր Եվրոպան դեռ չի վերջացել, Ասիան դեռ չի սկսվել: Մի տարածք, որի համար երկու ժողովուրդ՝ մեկը քրիստոնյա, մյուսը մահմեդական, պայքար են մղում դարեր շարունակ, քանի որ չեն կարողանում ի մի գալ, թե ով է առաջինը բնակություն հաստատել «սեւ այգում»: Ստեփանակերտ, Գանձասար, Շուշի ու Գյանջա ենք ուզում գնալ, վերջինն Ադրբեջանում է, պիտի Վրաստանով գնանք: Գանձասարի վանքի վանահայրը՝ 54-ամյա երեւանցի ջազ երաժիշտ է եղել՝ Արմեն Մարկոսյան անունով, 20 տարի է հոգեւոր ծառայություն է կատարում ԼՂ-ում: «Ի՞նչ է Ձեզ համար այստեղ աշխատելը» հարցին պատասխանում է «Սա էլ է Հայաստան, պատմական Հայաստան, արտասահմանում չեմ, այլ իմ հայրենիքում, պինդ կանգնած եմ իմ հողին»: «Չե՞ք վախենում, որ մի օր ադրբեջանցիները կարող են գալ» հարցին պատասխանում է՝ «Ոչ, սա իմ երկիրն է, սա նրանց չի պատկանում: Ադրբեջանցիները մի բան պիտի հասկանան՝ երբեք չեն ստանա այն, ինչ մեր արյամբ ենք ձեռք բերել», սիրալիր, բայց շատ խիստ իր տեսակետն է հստակեցնում Գանձասարի վանահայր Տեր Գրիգորը: Նրա ու իր հայրենակիցներից շատերի համար Լեռնային Ղարաբաղը միշտ էլ Հայաստանին է պատկանել: Ադրբեջանցի հարեւանները սա միանգամայն տարբեր են տեսնում, պահանջում վերադարձնել լեռնային այս տարածքը:Վանահայր Գրիգորը Գանձասարին մերձակա 25 գյուղ է այցելում: Հայ եկեղեցու սպասավորները ոչ միայն հոգեւոր ծառայության են կոչված, այլեւ քաղաքականությանն էլ են խառնվում: Ղազանչի գյուղում ավերակների մեջ են ապրում: Մի նորոգ հանգուցյալի տուն ենք այցելում: Թեեւ մահկանացուն աթեիստ էր, բայց հոգեւորականը աղոթում է հայրենասեր զավակի համար, որը ադրբեջանցիների դեմ մարտերի ժամանակ պարտիզան է եղել: «Դու լավ հայ էիր ու լավ մարտիկ», դագաղի մեջ պառկածի մասին հայր Գրիգորն է ասում: Տուն դարձին կանգ ենք առնում գերեզմանոցի մոտ: «Սրանք մեր ազատամարտիկներն են, այս գյուղի պաշտպանության համար զոհվածները», ասում է հայր Գրիգորը՝ շիրմաքարերը ցույց տալով: «Դուք ի՞նչ դեր եք խաղացել պատերազմի ժամանակ» հարցին պատասխանում է՝ «Հոգեւոր օգնություն էի ցույց տալիս բանակին»: Մոտ 3 տարի է տեւել 90-ականներից սկսված պատերազմը:



Օպերատոր Ֆրանկ Ֆիլթորֆը երեւանյան շուկայում: Ճոխ առաջարկ՝ քիչ գնորդ: Մարդկանց մեծամասնությունն աղքատ է:



Հեղինակ Դիթմար Շումանը (աջից) եւ օպերատոր Ֆրանկ Ֆիլթորֆը Ադրբեջանին սահմանակից հայկական Երասխ գյուղում նկարահանումներ կատարելիս:1994-ի պատերազմից հետո այստեղից այլեւս գնացք չի մեկնում:



1992-ին Շուշին նվաճեցին հայերը:Երբեմնի Խորհրդային Ադրբեջանի Հանրապետության խորհրդանիշները կործանվել են:



ԼՂ պատերազմից հետո ադրբեջանական երբեմնի քաղաք Շուշիից միայն ավերակներ են մնացել:

→Ը

## Փաստաթուղթ

# ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՑԵՂԱԿՐՕՆՈՒԹԻՒՆԸ

### Նախաբան

**Վենետիկի ս. Ղազար կղզում են պահւում Գարեգին Նժդեհի ցայսօր անյայտ աւելի քան 40 բանաստեղծութիւն եւ 20-ի չափ բացառիկ արժէքաւոր նամակներ՝ ուղղուած ԱՄՆ ցեղակրօն ուխտերի յայտնի գործիչ, 1930-ական թթ. ՀՅԴ ԱՄՆ կեդրոնական կոմիտէի անդամ, Գարեգին Նժդեհի վստահելի ու սիրելի բարեկամներից մէկին՝ Յովհաննէս Յովհաննէսեանին: Ձեռագրերին կցուած է ս. Ղազարի միաբան Սահակ վրդ. Ճեմճեմեանի հետեւեալ գրութիւնը.**

*«Ներփակ կան համբաւաւոր դաշնակցական գործիչ Նժդեհի նամակները, ուղղուած Յովհաննէս Յովհաննէսեանին: Վերջինս ս. Ղազար բերած էր այս նամակները, եւ երբ մեկնելու վրայ էր, 27 սեպտեմբեր 1971-ին, ես՝ ստորագրեալս, խնդրեցի իրմէ որ ինծի ձգէ: Ուրախութեամբ յանձնեց, յուսալով որ ես հրատարակեմ եւ ինքը իր կեանքի վերջաւորութեան գոնէ տեսնէ եւ ուրախանայ: Ապագային դիւանին համար օգտակար կրնան ըլլալ, Դաշնակցութեան պատմութեան:*

Հ. Սահակ Ճեմճեմեան
Ս. Ղազար, 29 սեպտ. 1971»:

**Բանաստեղծութիւնները ո՛չ, բայց նամակները դժուարընթեռնելի են: Վերծանումին խանգարում է ոչ միայն շտապով գրուած լինելը եւ որոշ նամակների խունացածութիւնը, այլեւ այն հանգամանքը, որ դրանցում Նժդեհը գործածել է իր ստեղծած կամ քիչ գործածուող բազմաթիւ բառեր, ինչը մեծապէս դժուարացնում է անընթեռնելի բառը ինչ-որ յայտնի բառի նմանեցնելով՝ կռահել թէ ինչ է գրուած... Ահա՛ այդ բառերը՝ պհաւորօրէն, ամենատգիտականութիւն, անցեղաճանաչ, դաւակից, դաւամտութիւն, դիակնացած, ընկերադաւ, ժամանակասպանութիւն, ինքնանկարող, իրարեկերութիւն, խորհողութիւն, կիսամտաւորական, կուսակցաւէր, համագաղութայնացնել, հայրենաքանդութիւն, հայօրէն, հացապաշտ, հնարակեղծ, ճարտարելու կարողութիւն, նախանձալի (նախանձով լի-Ռ. Հ.), պատկերամարտիկ, տգիտանք, ցեղանորոգ, ցեղաշարժում, ուժաստեղծ, քաջայոյս:**

**Նշածս նամակներում Գարեգին Նժդեհը տալիս է Ցեղակրօնութեան եւ Տարօնականութեան բացատրութիւնները, որոնք բացառիկ են այն իմաստով, որ է՛լ աւելի են ամբողջացնում ու պարզաբանում դրանց էութիւնը բացայայտող Նժդեհի սահմանումները:** *«Տարօնականութիւնըդա միեւնոյն ցեղակրօնութիւնն է հասակն առած սերունդի համար»,* **գրում է նա իր 1936 թ. նամակներից մէկում: Իսկ 1937 թ. յունուարի 7-ի նամակում գրում է.** *«Կարելի է չարաբանում են ներքին թշնամիները առանց ցեղակրօն անուան էլ նորահաս սերունդը ցեղապաշտ դարձնել»: Այդ պնդումի մէջ ե՛ւ շառլատանութիւն ե՛ւ վատութիւն կայ: Դա ասել է՝ մէկին կարելի է քրիստոնեայ դարձնել առանց Քրիստոսի եւ քրիստոնէութեան: Սրանք էապէս անուան դէմ չեն միայն, այլ՝ ցեղի, Ցեղակրօնութեան: Յաջողեցա՞ն այսօր անունը փոխել տալ, վաղն այլեւս վրան բաց կերպով կհալածեն մեր դաւանանքն ու նորահաս տարիքը»:*

**Նամակներում նա անդրադառնում է բազմաթիւ այլ հարցերի ու երեւոյթների եւս:**

**1936 սեպտ. 1-ի նամակում նա գրում է.** *«**Երբ Վ-նը*** **(հաւանաբար՝ Վահան Նաւասարդեանը, Ռ.Հ.)** *«Դաշնակցութեան օրւայ»առթիւ անցեալ տարի Ֆրանսիայում կճառէր՝ «Հայրենիքն է հայի համար եւ ոչ թէ հայը՝ հայրենիքի. այս է Դաշնակցութեան դաւանանքը: Հայ անհատը ամենից առաջ, եւ ամէն բանից վեր»... Երբ այսպէս կհասկացւէր Դաշնակցութիւնն ու իր դաւանանքը, իսկապէս որ պէտք է ընդունենք, թէ «մեր պայքարը աւելորդ է»: Վահանի համար Հայրենիքը միջոց է, անհատը՝ նպատակ: Նրա համար Հայրենիքը երկրորդական բան է, անհատն է «ամէն բանից առաջ եւ ամէն բանից վեր»: Միջոց- Հայրենիքը չի պաշտւիր, եւ նրա համար չեն մեռներ: Նպատակ-անհա՛տն է սուրբը, «ամէն բանից վեր»ը, գերագոյնը... Ըստ Վահանի՝ Հայրենիքը միջոց է, նա պիտի ծառայի եւ մեռնի զզւելի անհատի, պատահական հայ կարապետի համար: Նման միջոց-Հայրենիքը պէտք է կործանւէր եւ կործանւեց: Նմանը պէտք է անցնէր Հայրենիքների մասին աւելի բարձր բարոյական հասկացողութիւն ունեցող թուրքի եւ բոլշեւիկի ձեռքը, եւ անցաւ... Միջոց- Հայրենիքը (ինչպիսի պղծութիւն) կարող է միշտ էլ մնալ օտարի ձեռքը, կբաւէ, որ այդ օտարը աւելի զօրաւոր լինի, քան է այդ երկրի պատմական տէրը: Ահա՛ թէ ինչու Վ-եանի աշակերտ Սուրէնը գրում է՝ «մեր պայքարը աւելորդ է»: Արդարեւ, ինչո՞ւ պայքարել, երբ ընդունել ենք թէ Հայրենիքը միջոց է միայն անհատն ապրեցնելու: Պայքարը պահանջում է զոհեր, զոհողութիւններ, իսկ այլասիրաբար, հայրենասիրաբար զոհւում, զոհաբերւում է միայն նա, ո՛վ Հայրենիքը համարում է գերագոյն նպատակ»:*

**Հայկական որեւէ կառոյցի, ինչու չէ, նաեւ՝ամէն մի անհատի համար այդ նամակները դասագիրք են, որից նա կարող է իմանալ, թէ Նժդեհի համար ինչ ասել է օրէնք, իրաւասութիւն, ժողովրդավար ղեկավարի ընտրութիւն եւ այլն: Փնտրելի են ղեկավարի եւ կարգապահութեան, անհատի եւ հայրենիքի զուտ հայի խառնուածքով ու էութեամբ բացայայտումը այդ նամակներում, որոնք օգնում են հասկանալու, որ գոյութիւն ունի նշուած երեւոյթների զուտ հայկական հոգեբանութիւնը, որը մի եզակիութիւն է դրանք բնորոշող համաշխարհային յայտնի ըմբռնումների մէջ: Գարեգին Նժդեհը ցոյց է տալիս դրանց հայկական ըմբռնումը, որ յայտնաբերել է ինքը՝ առանց այդ մասին որեւէ նամակի մէջ նման բան ասելու...** *«Ժողովրդավար-ղեկավար լինելու համար նախ պէտք է լինել խոր, անկեղծ, հոգեփոխիչ ապրումի մարդ: Այդ էլ բաւական չէ: Պէտք է լինել նաեւ՝ նոր գաղափարի, նոր ապրումի, նոր, վերակառուցող, աշխարհի մարդ: Սրա շրթունքներէն ծորէր զօրաւոր խօսքը, որէն հոգեւոր արիւն կաթէր: Այդ յատկութիւններին աւելացնւր ամենէն անհրաժեշտը՝ արիութիւնը ...Ռոստոմի մահէն յետոյ (1919 թ. յունուար, Ռ.Հ.) Տէր-Մինասեանները երկու սուտ աստուածութիւններու պաշտամունքը կքարոզենկարգապահութիւն եւ կուսակցական մեքենա: Այս երկու բաները կշահագործեն ճիշտ այնպէս, ինչպէս խաչագողը՝ խաչը: Կարգապահութիւն-ի՞նչ է դա: Ըստ Տէր-Մինասեանի, կուսակցական եւ հոգեւոր իշխանութիւն, որ շարքայինները պարտաւոր են ցոյց տալու, բոլոր դէպքերում, անգամ երբ «շէֆ»-ը ժողովուրդը թողնում է կրակների մէջ եւ փախչում... Կարգապահութի՞ն: Ճշմարիտ կարգապահութիւն ասել է՝ շարքայինների հաւատ դէպի իրենց ղեկավարների ամէն վայրկեան Հայաստանի համար մեռնելու, յանդգնելու, մի բան ճարտարելու կարողութեանը: Շարքերի մէջ կա՞յ այդ հաւատը: Ո՛չ, չկայ: Իսկ չկայ, որովհետեւ ղեկավարների մէջ հերոսական- բարոյական գործելու, զոհաբերելու, քաջաբար մեռնելու տրամադրութիւն չկայ: Ուրեմն, շառլատանութիւն է խօսել կարգապահութեան մասին, երբ ղեկավարութեան պակասում են սովորական մահկանացուներին յատուկ առաքինութիւն»:*



**1930-ական թթ.նամակներից մէկում Գարեգին Նժդեհը գրում է.** *«Օհաննէս, մի ժողովուրդ, որը չգիտէ իր ներքին սրիկաները պատժել, չպիտի կարողանայ պատժել իր գոյութեան արտաքին թշնամիներին»:* **Այս խօսքերով Նժդեհը երկիրն այսօրուայ աղէտից դուրս բերելու ճանապարհ է ցոյց տալիս մեզ...**

**1937 թ. մի նամակում Գ. Նժդեհը արդէն զգում էր պատերազմի անխուսափելիութիւնը եւ մտածում էր իր հիմնադրած ցեղակրօն ուխտերից ստեղծել Հայաստանի անկախութիւնը վերականգնելու եւ հայութեան ինքնապաշտպանութիւնը վարելու համար լէգիոններ (այդ գաղափարը 1942 թ.վերջերից մինչեւ 1943 թ. նոյեմբերը էութիւնը խեղաթիւրած իրագործեց Դաշնակցութեան բիւրոն ՝ թոյլ չտալով ծառայելու բուն նպատակին):**

**Իրաւ ընկերվար Գարեգին Նժդեհն իր այդ նամակներում բացայայտում է նաեւ սոցիալիզմ երեւոյթը վարկաբեկող «սուտ սոցիալիստներին»՝ նրանց յայտարարելով «նիւթապաշտ սրիկայութիւն քարոզողներ»:** *«Ցեղակրօնութիւնը ճշմարիտ սօցիալիզմին դէմ չէ, -գրում է նա իր մի անթուակիր նամակում,- հայ վարժապետի հասկացած սօցիալիզմին որը դժբախտ Հայաստանում, մեր օրով դարձաւ բոլշեւիզմ, դէմ պիտի լինի ամէն մի դաշնակցական, եթէ քաղաքական սրիկայ չէ դա: Սօցիալիզմն մինչեւ բոլշեւիզմը մի քայլ է, եւ ոչ աւելին: Բոլշեւիզմը - դա սօցիալիզմի հոգեւոր մթան է: Թուրքն զարմանն, կիսած, թուրքն հաւեան լինել, եւ «սօցիալիզմից» բարբաջել, ասել է «իգացեալ» լինել, կենսաբանօրէն անբարոյական լինել, անհայրենասէր լինել: Մի ժողովուրդ, որն իր փիլիսոփայութիւնը, աշխարհայեցողութիւնը, կրօնն անգամ չի յարմարեցնում իր ինքնապաշտպանութեան պահանջներին՝ անբարոյական է եւ անապագայ»:*

**Նամակները բացառիկ նշանակութիւն ունեն 1920-1930-ական թթ. հայոց պատմութեան բազմաթիւ կնճռոտ հարցերը ճշտելու, յատկապէս Հ.Յ.Դ. բիւրոյի անդամ ու երկար տարիների «ներկայացուցիչ» (ղեկավար) Ռ. Տէր-Մինասեանի գործողութիւնները բացայայտելու համար: Դաշնակցութեան բիւրոյի մօտ 25 տարիների անդամներից մէկը հանդիսացող այդ գործիչը պատմութեան մէջ մտաւ Գէորգ Չաուշին սպանելու (նա 1906-1908 թթ.եղել է Չաուշի խմբում) եւ այլ ոճիրների համար, ինչից շատ լաւ տեղեակ էին նրան այդ գործերին մղած, փողաւորած եւ ըստ ամենայնի օգնած սիոնիստ-մասոնները, որոնց զինւորն էր Ռ. Տէր-Մինասեանի հրէուհի կինը: Նրանք հենց իրենց այդ գործակատարի միջոցով էին աւելի քան 30 տարի, յատկապէս Ռոստոմի ու Արամ Մանուկեանի մահուանից յետոյ՝ 1919թ. մինչեւ 1951 թ., ղեկավարում Դաշնակցութիւնը՝ Ռուբէնին անընդհատ պահելով իրենց հսկողութեան տակ՝ ձեռնասուն չդառնալու պարագային սպառնալով հրապարակել նրա ոճիրները: Նշուած ուժերը հայոց պատմութեան ճակատագրական հանգրուաններում են Ռուբէնի ձեռքով թիկունքից խփել մեր ազգին ու հայրենիքին (1915 թթ. 1000-աւոր Սասունցի-Մշեցիների զոհաբերումով՝ իր կաշին փրկելը, 1920 թ. հոկտեմբերի 30-ին առանց որեւէ կրակոցի Ղարսի յանձնումը թշնամուն, որը Հայաստանի անկախութիւնը վերացնող ՀԻՄՆԱԿԱՆ դաւադրութիւնն էր, 1920 թ. օգոստոսի 10-ին բոլշեւիկների հետ Թիֆլիսում կնքած պայմանագրով Զանգեզուրի ու Արցախի յանձնումը թշնամուն, Դաշնակցութեան ազգայնացումը վիժեցնելու նպատակով Ցեղակրօնութիւն - Տարօնականութիւն ազգային գաղափարի դէմ 1930-ականների կազմաքանդիչ դաւերը եւ այլն եւ այլն): Նշածս ուժերը Ռուբէնի միջոցով Դաշնակցութեան մէջ հայրենապաշտութեան փոխարէն արմատաւորում են անհատապաշտութիւնը, ամէն ինչ անում, որպէսզի Նժդեհը աւարտին չհասցնի իր գերագոյն նպատակը՝ Դաշնակցութիւնը ցեղակրօնութեամբ-Տարօնականութեամբ ազգայնացնելով՝ ազատագրել օտարի հսկողութիւնից: Գարեգին Նժդեհը ցեղակրօնութիւն-Տարօնականութիւնը ստեղծեց՝ կանխելու համար դաշնակցութեան բարոյազրկումը, որ իրենց ձեռնասունի ձեռքով անում էին նշուած ուժերը: Շարքերը ուժազրկում էին՝ ապականել-հեղինակազրկել ջանալով կեանքը երկրի համար զոհաբերելու պատրաստ անձանց: Իսկական դաշնակցականին մէջտեղից վերացնում, նրանց տեղը ՀՅԴ բիւրոյ եւ ընդհանուր ժողովի պատգամաւոր էին խցկում անբարոյական-անինքնասէր-անհայրենապաշտ անձանց, կազմակերպութիւնը զրկում ուժի աղբիւրից, դարձնում արկածախնդիրների որջ, ինչի դէմ 1922 թ. ի վեր անընդմէջ պայքարում էր Նժդեհը: Ահա թէ ինչու էր նա իր 1936 թթ. յունուարի 25-ի, ապրիլի 25-ի եւ այլ նամակներում Բիւրօն համարում «հակադաշնակցական թայֆա»:** «*Վերջին տարիները,-* **գրում է նա 3.Յովհաննիսեանին**,-*կաշառքը դարձրին զօրաւոր միջոց՝ նիւթապէս ու հոգեպէս աղքատ ընկերներ որսալու: Մարդկանց կաշառում եւ ուղարկում են իրենց թայֆայի համար պրոպագանդ, իսկ իրենց հակառակորդների դէմ բամբասանք անելու: Դա՛ է օրւայ «յեղափոխական» ու «մարտական» գործը: Մենք ասում ենք՝ երբ մեռնելու տրամադիր մարդիկ կան, կարելի է յեղափոխական գործ անել: Նրանք զգացնել են տալիս, թէ իբր աշխարհում անբարոյականութիւն, իսկ իրենց գրպանում դրամ կայ՝ կարելի է Բիւրոի անդամ ընտրւել եւ ոչինչ չանել: Չերկարեմ այդ մասին: Էլի՛ կրկնում եմ՝*

*ա. Ատամներով պաշտպանել Ցեղակրօն անունը: Անունը փոխելով՝ դաւադիրներն ուզում են սրտից զարկել Ցեղակրօն շարժումը:*

*բ. Պատգամաւորական ժողովում ցաւ յայտնել, որ չօգտւեց Ցեղակրօն շարժումէն եւ չաշխատեց զայն դարձնելու համագաղութային:*

*գ.Զայրոյթ յայտնել այն «դաշնակցական» վրացեանական թերթերին, որոնք դէմ արտայայտւեցան Ցեղակրօն շարժման («Արազ»,«Յառաջ»):*

*դ.Պահանջել Ընդհ. ժողովէն, որ համագաղութայնացնէ Ցեղակրօն շարժումը...*

*է.3-ի կողմից Ամերիկայում նիւթուած դաւը հնարաւոր դարձնող՝ Վրացեանի նամակը, խարդախուած պատգամաւորական ժողովը եւ Սաչաքլեանին հեռացնելը դարձնել խնդրի առարկայ Ընդհ. ժողովում եւ պահանջել դաւադիրների արտաքսումը Դաշնակցութիւնից:*

*Միայն, միմիայն այս ճամփով կարելի պիտի լինի փրկել Դաշնակցութիւնը իր դէմ գործող եւ զինքը շահագործող թայֆայից եւ զայն ծառայեցնել Հայաստանին»:*

**Դիտարկւող նամակները կասկածի ծւեն իսկ չեն թողնում, որ գաղափարի անբաղդատելի նուիրեալ Գարեգին Նժդեհին աւելի քան 5 տարի գաղափարական խոշտանգումներով մարտիրոսացրին ՀՅԴ-ի բիւրոյի ղեկավար Ռ. Տէր Մինասեանն ու նրա կամակատարները, իսկ 11 տարուայ բանտարկութեամբ՝բոլշեւիկ մարդայօշները՝ Ստալինի թելադրանքով...**

**Համոզուելով, որ 1930-ական թթ. ՀՅԴ շարքերում եւ ընդհանրապէս ամբողջ Սփիւռքում վիթխարի ու անվերապահ հեղինակութիւն ունեցող Գարեգին Նժդեհի ձեռքով Դաշնակցութեան ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ հայացում-ազգայնացումը իրականութիւն է դառնում եւ հնարաւոր չէ կանխել, ՀՅԴ ստուերային ղեկավարները Ռուբէնին մղում են զազրելի մի ստորութեան եւս. նա երեք մարդ է ուղարկում սպանելու Նժդեհին (տես ստորեւ հրապարակւող նամակը) ... Յանձին օտարների այդ սրբապիղծ ձեռնասունի, ազգի ու Դաշնակցութեան մէջ անբաղդատելի հեղինակութիւն եւ յարգանք վայելող աննման մեծութեանը սպանել է ձգտում մի մարդ, որին ՀՅԴ բազմաթիւ գործիչների շարքում (Ս. Վրացեան, Հ. Օհանջանեան, Աւ. Ահարոնեան, Վ. Նաւասարդեան եւ տասնեակ ուրիշներ) 1921 թ. անխուսափելի կացնահարումից փրկել էր Գարեգին Նժդեհը...**

**Տեսնելով որ անհնար է մեկուսացնել Նժդեհին, որի հետեւորդների յաղթանակը 1938 թ. նշանակուած ՀՅԴ Ընդհանուր ժողովում անվերապահ էր, Բիւրոն ձեռնամուխ է լինում աննախադէպ կեղծիքներով, կաշառքով ու ահաբեկումներով ընդհանուր ժողովի պատգամաւորներ ընտրել տալ իր մարդկանց: Կեղծիքն ու անբարոյականութիւնն այնքան ակնյայտ էր, որ դրա դէմ դժգոհում են նոյնիսկ Դրօն ու Ս. Վրացեանը: Վերջինս, որ ընտրւել էր ընդհանուր ժողովի պատգամաւոր, ի նշան բողոքի, հրաժարւում է մասնակցել Ընդհանուր ժողովին...1938 թ. ՀՅԴ կեղծընտիր ընդհանուր ժողովը Գ. Նժդեհի հանդէպ իր «յաղթանակը» ցոյց դնելու համար, առանց նրա ներկայութեան, մի ողբալի որոշում էլ է կայացնում. Նժդեհին «հեռացնում է» կուսակցութիւնից այն դէպքում, երբ նա աւելի քան ութ ամիս առաջ,1937 թ. դեկտեմբերին էր հեռացել-«ինքնամեկուսացել»Դաշնակցութիւնից:**

**Այդ նամակները լրացնում եւ ամբողջացնում են ուրիշ աղբիւրներից նոյնպէս թռուցիկ երեւացող այն իրողութիւնը, որ համաշխարհային ռազմա-քաղաքական մտքի գագաթ այդ բացարձակ հանճարը ազատութեան մէջ 1933-1938 թթ. մարտիրոսւում է Դաշնակցութեան փոքրոգի յետամնաց ջոջերի ձեռքով, իսկ 1944 թ. հոկտեմբերի 10-ից մինչեւ 1955 թ. յունուարի 21-ը, 11 տարի բանտարկուած լինելով բոլշեւիկեան բանտերում՝ նահատակւում է իր գաղափարական թշնամի բոլշեւիկների ձեռքով:**

**Բանտերում նահատակութիւն օտարների՛ ձեռքով, ազատութեան մէջ մարտիրոսացում՝ Դաշնակցութեան ղեկավար Ռուբէնի ձեռքով: Ահա՛ մեր ժողովրդի բոլոր ժամանակների սրբազնագոյն դէմքերից մէկի կեանքը իր ոչ պատերազմական օրերին...**

ՌԱՖԱՅԵԼ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

AZG NERDIR 133.QXD 11/02/2011 20:19 Page 5



## Նամակ

Սիրելի ընկերներ, *(Նամակը անթուակիր է- Ռ.Հ.):*

Ինձանից, ինչպէս եւ շրջանիցս գրութիւններ էք ստացել՝ իմ եւ շրջանիս դէմ նիւթած աննախընթաց դաւի մասին: Ձեզ շուտով կուղարկվի տեղիս կազմի ամբաստանագիրը եւ դուք հնարաւորութիւն կունենաք յստակ գաղափար կազմել դաւի մեխանիզմի եւ դաւադիրների մեքենայութիւնների մասին: Մինչ այդ կուզէի մի քանի խօսքով ձեզ տալ դաւի պատմութեան կմախքը, որպէսզի ժամ առաջ դիմէք անհրաժեշտ միջոցների՝ փրկելու համար ոչ թէ խաչւած ճշմարտութիւնը, այլ դաշնակցութեան բարոյականը, առանց որին կուսակցութիւնները, անկախ իրենց դաւանանքից եւ հետապնդած նպատակներից, դառնում են մաֆիա- գործիք անձնապէս շահագրգռուած որոշ անհատների ձեռքում, դառնում են չարիք իրենց ժողովրդի համար:

1. Նիւ Եորքի պրովոկասիոնի գաղափարը յղացել է Բ-ն (*իմա՝ ՀՅԴ Բիւրօն-Ռ. Հ.*): Դա ոչ թէ եռագոյնի համար էր, այլ խմորուող ցեղակրօն շարժման եւ զայն սկսող անձի դէմ: (*)Գիտէք անշուշտ, որ 1933-ի ընդ. ժողովը որոշած էր նորահաս սերունդը Ամերիկան է-ահա՛ թէ ինչու նա միջոցների մէջ խտրութիւն չէ դնում չէզոքացնելու ամէն հոգեւոր ազդեցութիւն այդ շրջանում: Իմ օրով- ցեղակրօնութեամբ դա վտանգուած համարեց Ամերիկան իր համար, եւ չքաշւեց դիմելու դաւերէն ամենադիւայինին: Ինձանից յետոյ նա Ամերիկա է ուղարկել իր գործակալները՝ որոշ գաղտնի առաքելութեամբ: Եկողներին հրահանգւում է՝ աշխատել տկարացնելու ձեր ազդեցութիւնը ցեղակրօն ուխտերի վրայ: Եւ այսուհետեւ էլ տեղդ եկող գործիչները կլինեն Բ-ի գործակալները, եթէ դուք չակտիւացաք:

2. Ցեղակրօն շարժումը սպանելու համար Բիւրօն իր մարդկանց միջոցաւ դաւեց իմ անձի դէմ նաեւ Բուլղարիայում: Գիտէք, որ ինձ բուլղար իշխանութեանց հրամանով խուզարկեցին դեռ սահմանագլխի վրայ: Մի խումբ դաշնակցականներ՝ միացած դուրեանական հոսանքներին՝ հրապարակում կաղմկէին թէ Դ-ին (*Դուրեան եպիսկոպոսին- Ռ. Հ.*)սպանել տուողը Նժդեհն է: Սրանով կձգտէին գրգռել հայութեան որոշ տարրերն ու իշխանութիւնները իմ անձի դէմ, հասկացնելով վերջիններին, որ ցե- կփրկէ շրջանիս նորահաս սերունդը:

Կգործենք թէ՛ մենք եւ թէ դաւադիրները: Կուգայ օգոստոս 18-ը (1933), Եաւորովի արձանի բացման օրը, որի առթիւ կազմակերպած մեր հանդիսութիւնները կվերածւին քաղաքական ցոյցի եւ խորապէս կգրգռեն ու աւելի եւս կակտիւացնեն ցեղակրօնութեան եւ իմ թշնամիներին: Ծանօթ էք թուրք մամուլի որոշ օրգանների յարձակումներին՝ իմ այցի դէմ: Այդ օրերին Սոֆիայում կգործէր զօրավար Միլլերին առեւանգող Սկոբլինը, որը հակաբոլշեւիզմ կեղծելով, կգործէր բոլշեւիզմի համար: Ըստ ֆրանսական թերթերի, որ ձեռքիս տակ են, զօրավար Սկոբլինը բացի իր ընկերները Ռուսիոյ սահմանագլխին մատնելէն ունէր նաեւ մի այլ դեր՝ բարոյապէս կամ ֆիզիքապէս ոչնչացնել նորահաս սերունդի ղեկավարներին: Միեւնոյն օրերին մեր դէմ կգործէր թուրք լրտեսութեան շեֆ Նեմդոխ բէյը, որի մասին իր ժամանակին հաղորդւած է Բիւրոյին, եւ որի լուսանկարը մեզ մօտ է: Տեսնելով, որ միութեան մէջ մի ցենտրալ ամէն ինչ կատարում է, որպէսզի վնասէ ինձ եւ անկարելի դարձնէ ցեղակրօնութեան տարածումը, ես պաշտօնապէս դիմեցի Բիւրո- նուն, որոնց շրջանս կթքէ եւ ճամփու կդնէ: Դրօն կխոստովանի, որ իրեն ուղարկած են, գիտնալով որ մեր յարաբերութիւնները ջերմ չեն, պարզապէս կռւեցնելու նպատակով: Դրոյի հետ հաշուեյարդարի կենթարկենք Բալկանի խնդիրը, եւ կհաղորդենք Բիւրոյին: Վերջինը մեր կատարածը հաստատելու փոխարէն, շրջանս կհասցնի Խդրեան կոչւած պրովոկատորը, որին իր դաւադրական արարքների համար Բուրգասի տարօնցիները կանարգեն ու ճամփու կդնեն: Այդ վերջինը եկած էր երկու քւէներ ապահովելու իր եւ իր տէրերի համար: Նա կեղծ ցանկեր կպատրաստէ եւ կուղարկէ Բիւրոյին, որը անմիջապէս կհաստատէ կեղծ կազմը: Խդրեանը իր դերը խաղալէ յետոյ, կկանչւի Եգիպտոս, որից յետոյ հրապարակ կնետէ հետեւեալ լուրըԲալկանը Նժդեհի գլխաւորութեամբ աշխատում է տապալել Բիւրօն. «Բալկանեան մամուլ» (հնչակեան թերթ), «Հայ մարտիկ» (Սմբատի թերթը), «Ամրոց», «Զանգու» (բոլշեւիկեան), այդ բոլոր թերթերը իմ եւ մեր շրջանը հռչակեցին «հակաբիւրոյական», եւ իրենց ամբողջ համակրութեամբ պաշտպանեցին տեղիս «բիւրոյական»ներին, իրենց ներ- ժարի Դ-ի սպանութեան պատասխանատւութեան խնդիր յարուցելէ, բ)Եթէ դու ճանաչես մեր նշանակած(կեղծ կազմէն բխած) բալկանեան մարմինը՝ 6 դժգոհ շրջանն էլ կճանաչի:

Դա պատճառ դարձաւ, որ ծանր խօսքեր փոխանակենք: Ձեր կողմից Արսէնին քուէ տալը նրանք համարեցին իմ գործը: Համօն ուզեց, որ ընկերաբար բաժնւենք, եւ դրա համար խնդրեցին որ վերադառնալով Սոֆիա փորձեմ վերականգնել Բալկանի միասնականութիւնը: Խոստացան չեղեալ յայտարարել Հայկի եւ Սէթոյի դէմ հանւած որոշումը, անշուշտ, միշտ էլ հասկացնելով (սակարկելով), որ եթէ Բալկանի 500 ընկերները որեւէ ամբաստանագիր չուղարկեն Ընդ. ժողովին՝ Բիւրոյի դէմ: Վերադարձայ Սոֆիա, երկրորդ օրը բարեկամներէս գնդապետ Գրիգորովը լուր բերեց, թէ Բիւրոյի գործակալներէն Թափառականը տարածում է , որ Բիւրօն կանչել է ու սպառնացել Նժդեհին՝ եթէ չմիանաս մեզ եւ չլռես, քեզ սպանել կտանք: Գերմանիայէն համբերութեամբ անցայ շրջան: Բիւրոն աննշան թիւ ունի Ռուսչուկում եւ Սոֆիայում միայն: Ռուսչուկում հաշտեցրի կողմերը եւ անցայ Վառնա-

# ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

կազմակերպել անկուսակցական գետնի վրայ՝ կուսակցական ղեկավարութեամբ: Հակառակ սրան Բիւրոն Ցեղ. Ուխտ. I Պատգ. ժողովի նախօրեակին պահանջեց կուսակցականացնել Ցեղակրօն-ուխտը:

Ինձ ուղղած իր գրութեան մէջ Բ-ն առաջարկում է ցեղակրօն «անւան» փոխարէն գործածել Հայ անունը: Ես չարի այդ, որովհետեւ «հայ» է՛ւ ռամկավարը, է՛ւ հնչակեանը, է՛ւ բոլշեւիկը: Կարելի է անունով հայ լինել, բայց ցեղակրօն չլինել: Ես դաւանանք էի քարոզել եւ ոչ թէ դատարկ անուն: Բ-ի այդ անսպասելի միջամտութիւնը ժամանակին կուգար մատնելու իր թշնամանքը այդ շարժման դէմ:

Նա չհաշտւեց մեր ստեղծած շարժման հետ: Իմ՝ Ամերիկան թողնելէն յետոյ եւ մինչեւ այսօր ցեղակրօնութիւնը պտրում է իբրեւ սովորական անուն եւ ոչ թէ իբրեւ դաւանանք: Անգամ Weekly-ին (*The Armenian Weekly-.ցեղակրօնների պաշտօնաթերթը-Ռ. Հ.*) ցայսօր մի հատիկ տող գրած չէ ցեղակրօն դաւանանքի մասին: Երկու տարի առաջ Բ-ի այն հրահանգը, որով Եւրոպայի ցեղակրօն ուխտերի կապը կկտրէր Ամերիկայի Կ. վարչութիւնից՝ նոյնպէս կուգար մատնելու հրահանգողի թշնամանքը: Իսկ Դիթրոյիթի մէջ գումարած պատգամաւորական ժողովի առած մի քանի որոշումները կմատնեն, որ Բիւրօն վճռած է բարոյապէս լղրճել ցեղակրօնութիւնը եւ նրանից խլել անգամ իր անունը:

Թէ ինչեր կորցրեց գաղութի հայութիւնը Բ-ի այդ թշնամանքէն, մի օր կտեսնենք, կզգանք:

Մի կարծէք, որ Բ-ն դաւանանքին դէմ է: Այդ մարմնի մէջ մարդիկ կան, որոնք անդաւանանք կոչւելու աստիճան խառնադաւան են է՛ւ սոցիալիստ են է՛ւ ցեղապաշտ՝ նայած տեղին ու յարմարութեան: Գանք իմ եւ իմ՝ տեղիդ նորահաս սերունդի հետ ունեցած բարոյական կապին, որը կտրելու համար անհրաժեշտ է ցեղակրօնութիւնէն խլել իր անունը եւ դաւանանքը: Խդրեանը յաջողած էր համոզել Բ-ին, որ եթէ ցեղակրօն ուխտերը չառնւին Բիւրոյի մարդկանց ազդեցութեան տակ՝ նրանք կուժեղացնեն ձեզ եւ ինձ: Գիտցէ՛ք այդ կռիւը ցեղակրօն ուխտերուն տէր դառնալու նպատակով է տարւում: Աւելի ճիշտը՝ կռիւը տարւում է Ամերիկայի շուրջը:

Բ-ն թեթեւ սրտով կհրաժարի (ինչպէս իր համար փաստօրէն գոյութիւն չունեն Սերբիան, Պարսկաստանը եւ Բուլղարիան) (Նկատի ունի այդ երկրների ցեղակրօն ուխտերը-Ռ.Հ.) իր բոլոր շրջաններէն, միայն ո՛չ եւ Ամերիկայի ձեր կազմէն: Բիւրոյի նիւթականը-ամսականները ապահովողը Ա- ղակրօնութեան անդրանիկ գործն եղաւ Դ-ի սպանութիւնը, եւ որ սպանութիւններ տեղի կունենան նա՛եւ այս երկրում, եթէ ինձ կարելիութիւն տրւի ցեղակրօնութիւնը տարածելու: Մի շարժում վարկաբեկելու համար մեր աշխարհի սրիկայութիւնը միշտ էլ աշխատել է կա՛մ վարկաբեկել, կա՛մ էլ սպանել տալ նրա վարիչին: Իսկ պէտք էր ինձ համար Բալկանում առնւազն փափուկ դրութիւն ստեղծել, որպէսզի իշխանութիւնը եւ հայ հանրային կարծիքը անկարելի դարձնեն ցեղակրօնութեան տարածումը իմ ապրած երկրում: Թէ ի՞նչ գաղտնի ժուռնալներ են տրւած իշխանութեանց՝ այդ մասին կկարդաք շրջանիս ամբաստանագրի մէջ: Բիւրօն հասած էր իր նպատակին՝ հայութիւնը Դ-ի սպանութիւնը կվերագրէր ինձ, եւ վրէժ լուծելու համար կշարունակէր դաւեր նիւթել իմ անձի դէմ: Բիւրօն գիտէր, որ ես դաւադրւած եմ, եւ եթէ իր հաշւին զգար այդ բանը՝ նա ինձ դուրս կբերէր այս շրջանէն, կուղարկէր մի այլ երկիր, մանաւանդ որ գիտէր թէ, գրեթէ, մեր բոլոր գաղութները կհրաւիրէին ինձ՝ նորահաս սերունդը ոտքի հանելու է՛ւ իրենց շրջաններում: Բիւրօն, որի օրհնութեամբ իր մարդիկ ներքնապէս միացած հակադաշնակցական կազմակերպութիւններին՝ կշարունակէին թշնամանել ինձ ոչ թէ չաշխատեց դաւադրութեան օղակէն դուրս բերել ինձ, ընդհակառակը, նա ինձանից թաքցրեց, որ Հարաւ. Ամերիկան խնդրում է գէթ վեց ամսով մեկնել այնտեղ: Նա՝ ինձ Բուլղարիոյ մէջ դաւադրւած ու վանդակւած պահելու նպատակով, այս շրջանէն հեռանալուս արգելք հանդիսացաւ նաեւ այն ժամանակ, երբ մեր հարեւան Յունաստանի պատգամաւորական ժողովը կխնդրէր այցելել իր կազմերը եւ ծնունդ տալ ցեղակրօնութեան: Իրերի այդ դրութեան մէջ դրսից ու ներսից դաւադրւած, ցեղակրօն ուխտեր ստեղծեցի է՛ւ բալկաններում: Այս պարագան աւելի գրգռեց դաւադիր թշնամիներիս: Նրանք սկսեցին գործել կաշառելով: Հակադաշնակցական մի դրամատան դիրեկտորը իմ եւ ցեղակրօնութեան դէմ դաւողների զանազան անուններ եւ ձեւերի տակ բաց կթողնէ աւելի քան 300 000 լեւա: Ծանօթ դրամատան դիրեկտորը եւ Բիւրոյի մարդիկ գաղտնի ժողովներ կգումարեն դրամատան շէնքի մէջ, կհրաւիրեն երիտասարդ կազմակերպութեանց ներկայացուցիչներին, կխոստանան նիւթական միջոցներ տրամադրել, պայմանաւ, որ չմերձենան ցեղակրօններին եւ գործեն ցեղակրօնութեան դէմ: Մեր կ. կոմիտէն ժամանակին կմերկացնէ դաւը եւ



յին եւ խնդրեց (գիտնալով հանդերձ որ նա գիտէ)՝ հրահանգել մեր բոլոր կ.կ-երին իրենց շրջաններում ստեղծելու ցեղակրօն ուխտեր եւ միանալու Ամերիկայի կեդր. վարչութեան: Ինձ պատասխանեցին, որ իբրեւ թէ որոշ մարմիններ դէմ են ցեղակրօնութեան, դեռ չգիտեմ թէ ինչ դուրս կուգայ Ամերիկայի մեր ուխտերից եւ այլն: Սրանից յետոյ, տեղիս ցեղակրօնութեան թշնամիները հրապարակ նետեցին հետեւեալ զրոյցը. Ամերիկայի ցեղակրօն ուխտերի եւ դաշնակցական մարմինների միջեւ վէճ է ծագել, որի պատճառով Բիւրոյի անդամ Նաւասարդեանը կ՛երթա քննութեան: Այդ օրերին Բիւրոյի ներկայացուցիչը՝ Ջամալեան, Բեռլինի մեր ուխտին խորհուրդներ կուտայ թողնել ցեղակրօնութիւնը, մնալ չէզոք, անկուսակցական: Բիւրոյի ընթացքը կթեւաւորէ ցեղակրօնութեան դէմ դաւողներին: Դէպքերը կզարգանան. Քրիստափոր Եաւուրովին նուիրած մեր բուլղարերէն բացիկը մի մութ ձեռք կտանէ (դեռ Թափառականը տպարանէն հրապարակ չելած) կյանձնէ թուրք դեսպանատունը, որը պատճառ կդառնայ, որպէսզի երկրիս արտաքին գործոց նախարարը արգիլէ մեր հանդիսութիւնները եւ նորանոր մեծ ծախքերի մատնէ մեզ:

Մեր շրջանային ժողովը կպատժէ դաւադիրների խմբակը՝ արտաքսելով, կախակայելով: Վերջինները կսկսին այլեւս վրան բաց կերպով գործել շրջանիս դէմ:

Բիւրօն՝ շրջանային ժողովի փոխարէն՝ իր ընթացքով ոյժ կուտայ դաւադիրներին: Մենք կպահանջենք, որ Բիւրոյի անդամը գայ տեղս. կհրաժարին ուղարկել: Եւ մի օր շրջանս կուղարկեն ցեղակրօնութեան դէմ դաւող , մեր շրջանի դաւադիրների հետ կապ պահող Լազեանին եւ Սարու- քին գործակիցներին: Երբ յոյները մերժեցին ինձ անգամ տրանզիտ վիզա տալ, ես ընտրեցի Փարիզ-Մարսէյլ-Եգիպտոս ճամբան: Փարիզ հասնելուս պէս կարդացի «Հայ մարտիկ»ի մէջ. «Նժդեհը եկած է Եւրոպա համախմբելու հակաբիւրոյական ուժերը»: «Զանգու» բոլշեւիկեան թերթը-տեղիս «բիւրոյականների» բանսարկութեամբ «ՀՕԿ»ի (**) ակումբների փակումը վերագրեց դաշնակցութեան «Նժդեհեան ցեղակրօն թեւ»-ին, եւ Խ. Հայաստանի ռադիոն սկսեց հայհոյել ու սպառնալ ինձ: Հակառակ որ Ամերիկայի կ. կոմիտէն որոշում էր առած, որ ես Ամերիկայէն վերադարձիս անցնեմ Բիւրոյի վայրը եւ զեկուցում տամ Ամերիկայում ստեղծւած ծանր կացութեան մասին՝ Բիւրօն ինձ մուտքի վիզա չուղարկեց, որովհետեւ նա մութ հաշիւներով վճռած էր ինձ վանդակւած պահել Բալկանում, որպէսզի ես չկարողանամ խուսափել ինձ դէմ նիւթած դաւէն: Նա չէր ուզում, որ ես երեւամ այս կամ այն շրջանում, որովհետեւ չէր ուզում ուխտեր տեսնել այդ շրջաններում: Վերջապէս մօտաւորապէս երկուսուկէս տարի յետոյ, երբ նա այլեւս հասած էր իր նպատակին (ես դաւադրւած էի, իմ շրջանում արհեստական կերպով խմբակ մը հանած էին կ.կ-ի դէմ, ես հրաժարած էի կ.կ-էն) ինձ ուղարկեց վիզան: Հասայ Կահիրէ եւ հենց առաջին օրը հիւանդացայ զզւանքից: Կաշւից դուրս կու գային ինձ համոզելու թէ իմ լաւագոյն բարեկամներն են, որ գիտեն թէ դաւ կայ, բայց իրենք անմասն են, թէ ինձ պէտք է բժշկւել, օպերասիոնի ենթարկւել, թէ կուսակցութիւնը իմ առողջութիւնն է ուզում եւ ոչ թէ իմ գործը, եւ այլն: Տէր-Մինասեան իբրեւ թէ մոռացել էր, որ 1,5 տարի առաջ նա իր մի նամակի մէջ ինձ իրեն թշնամի է յայտարարել, իսկ ես իրեն՝ ընկերադաւ: Ես գնացել էի քաղաքական գործի համար՝ որոշ ծրագրով, անելիքների առաջարկներով, իսկ նրանք ինձ բժշկէ-բժիշկ եւ հիւանդանոցէ-հիւանդանոց կառաջնորդէին: Իսկ Բուլղարիոյ մէջ, այդ միեւնոյն օրերին, իրենց խմբակի միջոցաւ լուրեր կտարածէին, թէ Նժդեհը լքել է Բալկանի 500 ընկերների դատը եւ միացել Բիւրոյին՝ այդ շրջանը ինձնից պաղեցնելու հաշւով: Զզւանքիս բաժակը լեցւած էր այլեւս, պէտք էր ազատւել կեղծիքի մթնոլորտէ, եւ պահանջեցի, որ իմ դրած լուրջ հարցերին պատասխանեն: «Վայրկեանը աննպաստ է, անելիք չունենք», եղաւ Բ-ի պատասխանը: Մեր վերջին նիստում ինձ վրան բաց կերպով ասացին՝

ա) եթէ ուզես, Ամերիկան կհրա- Բուրգաս, ու անսպասելիօրէն (?) ստացայ կեղծ կազմէն բխած մարմնին մի գրութիւնը, որով կյայտնէր թէ «Բիւրօն դէմ է հաշտութեան ձեւին»:

Կատաղութեանս մէջ կեղծ կ.կ.-ի ներկայացուցիչ-նամակաբերին, ինձ կմնար վերադառնալ Սոֆիա եւ գրել Բիւրոյին հետեւեալը՝ «Շրջանիս միասնականութեան եւ իմ անձի դէմ դաւ կայ: Նոր չէ որ գրում եմ այդ մասին: Դաւում են Դաշնակցութեան թշնամիները: Այդ դաւը հեշտացնում են որոշ մարդիկ ներսէն: Դիւային յամառութեամբ տարւող այդ դաւը զինաթափել կարենալու համար անհրաժեշտ է ինձ վերստին ինքնամեկուսանալ: Եթէ ամէն կարելութիւն չպէտք է ընձեռէք ինձ՝ մերկացնելու այդ դաւը, ինձ համարէք պայմանադրաբար հեռացած կուսակցութիւնից: Հիւանդի եւ դաւադրւածի իմ վիճակում ես այլ ելք չեմ գտնում:

Ընկերական բարեւներով՝ Նժդեհ, 1937 թ. դեկտ.»:

Բիւրօն քար լռութիւն պահեց իմ այդ հրաժարականի մասին: Բացի այդ՝ Բիւրոյին ուղղած եմ մի երկար գրութիւնս, որի մէջ վերստին եւ վերստին Ռուբէնին անւանել եմ ընկերադաւ: Այդ գրութեան պատճէնը ուղարկւած է Յունաստան՝ ընկ. Կարոյ Գէորգեանին եւ Ռոմանիա՝ ընկ. Արարատեանին:

Գիտնալով հանդերձ, որ Ընդհ.ժողովին որոշ հաշիւներով մասնակցում են այն բոլորը՝ Լազեան, Սարունի, Խըդրեան, որոնք Բիւրոյի կողմից ուղարկւած էին մեր շրջանում կեղծ կազմակերպութիւն ստեղծելու եւ երկու քուէներ ապահովելու, ես Բիւրո կոչւածին գրեցի հետեւեալը՝ «Դաշնակցական զինւորի արժանապատւութիւնս թոյլ չի տալիս գրելու անձիս դէմ նիւթած դաւի պատմութիւնը: Բալկանի, մասնաւորապէս, վերջին ամիսների դէպքերը եկան վճռապէս հաստատելու այն, որ տեղիս կազմին իմ դէմ սարքած դաւը աւելի քստմնեցուցիչ է քան կկարծէինք: Մեր կուսակցութեան պատմութեան մէջ նախընթաց չունեցող այդ վատութեան մասին ինձ անձնապէս պէտք է լսի ընդհ. ժողովը: Առ այդ խնդրում եմ ինձ վիզա եւ ճանապարհածախս հասցնել, որ մեկնեմ տեղդ: Եթէ Ռուբէնի՝ իմ հանդէպ տածած անձնական թշնամութիւնը պատճառ դարձաւ, որ դուք ինձ չը հրաւիրէք, խնդրում եմ այս գրութիւնը համարել ուղղւած Ընդհ. ժողովին: Խնդրում եմ պատասխանել ինձ հեռագրով: Իմ անցեալ ճամփորդութեան վերաբերող հաշիւները կբերեմ հետս:

Ընկերական բարեւներով՝ Նժդեհ, 1938 , 5 յուլիս, Սոֆիա»:

AZG NERDIR 133.QXD 11/02/2011 20:19 Page 6





# Գերմանական TV

Գ Հայերի եւ ադրբեջանցիների հարյուրամյակներով տեւած ատելությամբ քաղաքական անպատասխանատու գործիչների հրահրմամբ կովկասցիները մորթում էին իրար: Վերջում Հայաստանը եթե հաղթեց էլ, ապա հանգույցը դրանով ոչ թե քակվեց, այլ առավել ամուր կապ ընկավ:

13-րդ դարում կառուցված Գանձասարն ուխտատեղի է եւ ամուր ամրոց հայ ազգայնականության: Հայերը հպարտ են իրենց քրիստոնեական եկեղեցին, աշխարհում աննման իրենց լեզուն ունենալու համար: Երբ հայր Գրիգորն իր աշխատակիցների հետ թեյի սեղան է նստում, ոչ միայն ստամոքս ու ձեռք են տաքացնում, այլեւ քաղաքականությանն անդրադառնում: Հոգեւորականը հավատացած է, որ պատերազմը դեռ չի ավարտվել, եւ Աստծո օգնությամբ իրենց բանակը կպաշտպանի ազերի մահմեդականներից: Ոչ միայն այստեղ եւ ոչ էլ առաջին անգամ է, որ եկեղեցիներն ու հոգեւորականները սատարում են պատերազմին:

Ստեփանակերտում ենք, ուր ամեն անկյուն կառուցվում է՝ արտերկրի հայերի միջոցներով: Դրոշ ու պառլամենտ ունեն արդեն, չկա միայն միջազգային ճանաչումը: Ոչ մի երկիր դրան դեռ պատրաստ չէ: Դա քիչ է անհանգստացնում Ղարաբաղի հայերին: Ղարաբաղցիներին լավ բնորոշում է տատիկ-պապիկի հուշարձանը՝ համառ, կող ունեցող: Այդպիսին է ԼՂ պաշտպանության նախարար գեներալ լեյտենանտ Մովսես Հակոբյանը, ով ZDF-ի թիմին ադրբեջանցիների պաշտպանական գծից 200 մ հեռավորության վրա գտնվող առաջապահ գծի խրամատներ է ուղեկցում: 54-ամյա գեներալը զինվորական կարիերան խորհրդային բանակում է սկսել: «1994-ի մայիսից այստեղ ենք, զինադադար է, բայց իրականում պատերազմը շարունակվում է, հակառակորդն անընդհատ կրակում է», ասում է գեներալը: «Հնարավո՞ր է, որ հակառակ կողմում Ձեր նախկին գործընկերներից մեկը լինի»: «Ամեն ինչ էլ կարող է: Առաջ ընդհանուր հայրենիքին էինք ծառայում: Ադրբեջանցիների հետ տարբեր զորամասերում ենք եղել», բացատրում է նախարարը:

Եվ այսօր նա (*պիտի հասկանալ՝ Մովսես Հակոբյանը- Ան. Հ.*) կարող է կրակել նրանց վրա, նախկին ընկերները արյան թշնամի են դարձել: Տարազգ բարեկամությունը ԽՍՀՄ անկումից հետո ցնորքի նման ցնդեց: Երկուստեք վստահությամբ հողագործների որդիները՝ 18 տարեկան նորակոչիկները քաղաքական գործիչների ու սպաների հրահրմամբ սրբազան պատերազմ են մեկնում: Եթե ադրբեջանցիները հարձակվեն, հայերին Ռուսաստանի օգնության հույսն է ապահովագրում, ամուր դաշինք ունեն: «Ադրբեջանին ողջ իսլամական հանրությունն է սատարում: Առանձնապես Թուրքիան ու Պակիստանը: Այստեղ երկու մշակույթ է խաչվում, երկու շատ տարբեր՝ քրիստոնեական ու մահմեդական աշխարհ միմյանց հանդիպում», ասում է ԼՂ պաշտպանության նախարարը:

Աղքատ Հայաստանը մեծ բանակ է պահում՝ ռուսական տեխնիկայով: Հարուստ Ադրբեջանը Արեւմուտքից է զենք գնում: 16 տարվա հրադադարից հետո այժմ երկու պետություններն էլ բացահայտ սպառազինվում են: Դեմարկացիոն գծում 100 000 ծանր սպառազինված զինվորներ կանգնած են դեմ հանդիման՝ պատրաստ վերահարձակվելու:

Պատերազմի թողած սպիները տեսանելի են ամեն քայլափոխի:Շուշի ենք գնում՝ ադրբեջանական մի քաղաք, որ 1992-ին արյունոտ մարտերի արդյունքում հայերը նվաճեցին: Կովկասի երբեմնի գեղեցկագույն քաղաքներից մեկն է եղել Շուշին՝ ադրբեջանական մշակույթի օրրանը: Բնակչության մեծ մասը 30 000-ը մահմեդականներ էին, փախստական են դարձել, մնացած 3000 հայերն ապրում են ավերակներում: Շատերը քաղցած են, գործազրկությունը 70 տոկոս է կազմում:

Հայաստանի պահանջները գերազանցապես ֆինանսավորում են աշխարհի բոլոր կողմերը սփռված 7 միլիոն սփյուռքահայերը: Արմեն Ռակեսյանը եւ նրա կինը՝ Քրիստինան Շուշիում են բնակվում: Արմենը Մարսելից է, 6 տարի առաջ է Շուշի եկել, կինը Ռումինիայից է, ծանոթացել են ինտերնետի միջոցով: «Ուզում էի Շուշիում ապրել, հուշանվերների փոքրիկ գործ սկսեցի, ցավոք չհաջողվեց, հետո լրագրությամբ սկսեցի զբաղվել, բայց ողջ էներգիաս նվիրում եմ մանուկներին օգնելու մի կազմակերպության: Այն, ինչ այստեղ անում եմ, կամավոր բնույթ ունի: Մեծ բան չեմ ուզում վաստակել, պարզապես օգնել Ղարաբաղի զարգացման ծրագրերին», պատմում է Արմենը:

Հարց Քրիստինային՝ «Ինչո՞ւ է երիտասարդ կինը թողել Ռումինիան ու եկել Ղարաբաղ»: «Այստեղ եմ, քանի որ ինձ հայ եմ զգում եւ գտնում եմ, որ ԼՂ Հայաստանի մի մասն է»: «Միշտ կմնա՞ք այստեղ»: «Այնքան, ինչքան Աստված կամենա», պատասխանում է Քրիստինան:

Ռակեսյանների հուշանվերները չեն վաճառվում, իրենց բնակարանի սենյակները վարձու տալով մի քիչ դրամ են վաստակում: «2 անձի համար գիշերելը 12 եվրո արժե, նախաճաշը, ընթրիքը, ինտերնետից օգտվելը ներառյալ: Սա լուրջ բիզնես չէ, ընտանեկան գործ է պարզապես, որ օգնում է հանապազօրյա հաց հոգալ», ասում է Արմենը: Հարց՝ «Օտարերկրյա քանի՞ զբոսաշրջիկ է եկել այս տարի Շուշի»: «Շատ չէ, մոտ 100 հոգի»: Անսահման իդեալիզմն է, որ երիտասարդ զույգին տոկալ է տալիս: Զբոսաշրջիկների առատ հոսքը հավիտենական երազ կմնա, քանի որ պատերազմի թողած ավերակներից բացի Շուշին քիչ բան կարող է հրամցնել:

18-րդ դարում պարսիկների գրավումից մնացած մզկիթի ավերակները. եւ ադրբեջանցիներից գնդակոծված արտերկրի հարուստ հայերի միջոցներով վերականգնված հայ առաքելական մի տաճար: Սա Շուշիում Արմենի սիրած վայրն է: Լրագրություն ուսանած Արմենը Ղարաբաղյան հիմնապատճառի իր տեսությունն ունի: «Այստեղ երկու ժողովուրդ է ապրել՝ հայերը լեռներում, ադրբեջանցիները՝ հարթավայրում: Հաղորդակցություն չկա: Երբ իրար են հանդիպում, հակամարտություն է առաջանում, քանի որ կենսական տարբեր կոնցեպցիաներ ունեն»: Հարց՝ «Վախ ունե՞ք նոր պատերազմի»: «Ոչ, եթե վախ ունենաս, Ղարաբաղում չես ապրի», պատասխանում է Մարսելից Շուշի եկած Արմենը:

Ղարաբաղից հեռանում ենք: Ուզում ենք լեռան մյուս կողմն անցնել, հակամարտող մյուս կողմում փախստականների ու ականազերծողների հետ հանդիպման պայմանավորվածություն ունենք: Այսպես ասած՝ մի ցատկաչափ եւ կհայտնվենք այնտեղ, բայց սահմանը փակ է, ստիպված ենք ճամփան երկարել՝ Ստեփանակերտից Հայաստան՝ Ադրբեջանին սահմանակից Երասխում ուզում ենք կանգ առնել, հետո՝ Վանաձոր, այնուհետ՝ Թիֆլիս, հետո՝ երկաթուղով Ադրբեջան:

## ՈՐՈԳԱՅԹ



Das Kloster Chor Virap in der Ararat-Ebene. Die armenisch-apostolische Kirche ist die Ӓlteste Staatsreligion der Welt.

*Խոր Վիրապի վանքն Արարատում:Հայ առաքելական եկեղեցին աշխարհի ամենահին պետական կրոնն է:*

Երասխն է:Պատերազմական տարիներից Երասխը մեռյալ վայր է:Կոլխոզը՝ լուծարված, սահմանային կայարանը՝ փակ: Քաղաքապետ Սերգեյ Ավետիսյանին հանդիպում ենք 2-րդ աշխարհամարտին զոհ գնացած գերմանացի զինվորի հուշաքարի մոտ: «Առաջ, երբ սահմանը բաց էր, ինչ խոսք կյանքն ավելի լավ էր:Ադրբեջանական հրետանին մեր շատ տներ է գնդակոծել: Մեր բնակչության մեծ մասը գործազուրկ է», ասում է Երասխի քաղաքապետը:

Այն, ինչ գյուղացին ունի, պտուղ բանջարեղենն է տնամերձ այգիներում եւ անասունը: Ականապատ սահմանամերձ արոտավայրում Աշոտ Ավտոյանը նախիրն է արածելու տանում: «Երբ սահմանը բաց էր, ավելի լավ էինք ապրում: Հիմա պաշարված ենք՝ առանց փողի, առանց հաճելի հարեւանի: Մի խոսքով՝ ապրում ենք էլի», ասում է նախրապանը: Հարց՝ «Հույս ունե՞ք, որ սահմանը մի օր կբացվի»: «Չգիտեմ: Առայժմ տեսանելի չէ», ասում է Աշոտը:

Նախկինում Երասխը սահմանային կայարան էր՝ Երեւան-Բաքու գնացքի աշխույժ երթեւեկությամբ:

Ճամփան շարունակում ենք դեպի հյուսիս: Գյումրիում ենք: Դեռ ցարի, նաեւ խորհրդային տարիներից այստեղ ռուսական կայազոր է եղել: 5000 են այսօր, ավելի քան 300 սպաներ՝ իրենց ընտանիքներով:Հայի հետ ամուսնացած ազգությամբ ռուս Լյուդմիլա Հարությունյանը աշխատում է զինվորական վարչությունում: Շուկա ենք մտնում: Հարց վաճառողներից մեկին՝ «Շատ ռուս կա այստեղ: Իրար հասկանո՞ւմ եք»: «Լավ ենք հասկացվում, խնդիր չունենք»:«Մենք սիրում ենք ռուսներին:Առանց նրանց մեր վիճակը վատ կլիներ:Իրար հարգում ենք, ռուսները լավ, անկեղծ մարդիկ են», վաճառողուհիներից մեկն է հավելում: Հարց՝ «Ի՞նչ կլինի, եթե մի օր նրանք տուն վերադառնան»: «Ուզում ենք, որ միշտ մնան»:

Հին սովետական ավտոմեքենաները դեռ վարում են այստեղ: Կարելի է կարծել, թե Մոսկվայի գավառական մի քաղաքում ես, 70-ականների Խորհրդային Միությունում: Բոլոր խանութների ցուցանակները ռուսագիր են, այդպես է նաեւ հայ ժամագործի կրպակի վրայինը: Հարց՝ «Ինչո՞ւ եք հայերենի փոխարեն ռուսերեն ցուցանակ կախել»: «Որ բոլորը հասկանան: Գործի համար ռուսների շատ լինելը լավ է:Իրար շատ լավ ենք հասկանում՝ մենք ռուսներին ենք սիրում, նրանք՝ մեզ: Շատ լավ ժողովուրդ են»: Հարց Լյուդմիլա Հարությունյանին՝ «Հայաստանն ինչո՞ւ է մինչ օրս ռուս զինվորի կարիք զգում»: «Հայաստանն ու Ռուսաստանը ռազմավարական գործընկերներ են: Այդ պատճառով էլ այստեղ են», պատասխանում է: «Եվ ի՞նչ եք անում»: «Միասին պաշտպանում ենք Հայաստանի սահմանը: Չեմ կարող պատկերացնել, թե սա մի օր կփոխվի: Հայաստանն իր անկախությունը դրանով չի կորցնում, ընդհակառակը՝ շահում է, ուժ ենք տալիս»: Մինչեւ 2044 թվականը ռուս զինվորն այստեղ պիտի մնա:

Շարունակում ենք ճամփան դեպի հյուսիս, ուր 4 անկյուններ՝ Հայաստանն ու Վրաստանը, Թուրքիան ու Ադրբեջանն իրար են հանդիպում:Ամենամեծ բնակավայրը Վանաձորն է այստեղ: Կիրակի է, քաղաքի տոնն են նշում, փողային նվագախումբը հարսանեկան քայլերգ է հնչեցնում: Անհիմն չէ: Քաղաքագլուխ Սամվել Դարբինյանը մեծ ծրագրեր ունի՝ քաղաքների ամուսնություն, համայնքների համագործակցություն, Եվրոկովկասյան գոտի՝ Ադրբեջանի ու Թուրքիայի մասնակցությամբ: «Մեզ համար օրինակելի է Գերմանիա, Լեհաստան, Չեխիա, Ֆրանսիա համագործակցությունը:Եթեգերմանացիներն ու ֆրանսիացիները 2 համաշխարհային պատերազմից հետո լավ բարեկամներ են, ինչո՞ւ Կովկասում՝ մեր, ադրբեջանցիների ու թուրքերի միջեւ նույնը չլինի:Հասարակ մարդիկ ուզում են դա», ասում է Դարբինյանը: Գավառական քաղաքական գործչի մտածողությունը շատ ավելի առաջ է, քան Երեւանի եւ Բաքվի գերազգայնապաշտ առաջնորդներինը:

Վանաձորցիները դեռեւս միայնակ, առանց հարեւանների են տոնում, բայց քաղաքագլխի ծրագիրը հավանություն է գտնում:Հարեւանների հետ թշնամացած լինելը շատերին է տխրեցնում: Սկզբում Թուրքիայի հետ փակ սահմանը շուկայի առեւտրականները հաղթահարեցին: Շուկայի տեքստիլի մեծ մասը ծագում է հարեւան այդ երկրից: Հայերն ավտոբուսով Վրաստանի վրայով Ստամբուլ են գնում՝ գնումների: Հարց շուկայի երիտասարդ վաճառողուհիներից երկուսին՝ «Ձեր քաղաքապետը ծրագրում է Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունները վերսկսել: Ի՞նչ կարծիքի եք»: «Շատ հարգում եմ թե ադրբեջանցիներին, թե թուրքերին: Նախկինում Ադրբեջան շատ էինք գնում՝ արձակուրդի, սիրալիր մարդիկ են ապրում այնտեղ: Ուզում ենք, որ մեր հարաբերությունները նորմալանան, բայց...»: Հարց՝ «Ղարաբա՞ղն է խանգարում»: «Այո, Ղարաբաղը շատ է խանգարում», պատասխանում են երկու կանայք:

Հասանք Վրաստանի սահման: Հրաժեշտ ենք տալիս մեր վարորդին՝ Դավիթ Դավթյանին, որ մեզ Ղարաբաղով ու Հայաստանով անվտանգ ման տվեց: Ոտքով հատում ենք սահմանը եւ զարմանում՝ առաջին մեծ բնակավայրում մոլլայի ձայնն է լսվում: Մառնեուլ է քաղաքի անունը՝ Վրաստանում ադրբեջանական մի կղզի: Ընտանիքների մեծ մասն այստեղ է ապրում դարեր ի վեր, մյուսները փախել, այստեղ են վերաբնակվել ղարաբաղյան պատերազմի պատճառով: Մզկիթը նոր են կառուցել՝ Մերձավոր Արեւելքի հավատակից եղբայրների հանգանակության շնորհիվ: Երիտասարդները գալիս են իմամ Հաջի Հաջիեւի մոտ: ԼՂ թեման մզկիթում մեծ դեր է կատարում: «Անհանգստացած ենք այնտեղ ապրող մեր հայրենակիցների ճակատագրով: Հայերն Ադրբեջանից պատօրինաբար վերցրին այդ մասը եւ բոլոր մահմեդականներին տեղահանեցին: Այս անարդարությունը պիտի վերացվի», ասում է իմամը: Հարց՝ «Ինչպե՞ս: Երիտասարդներին այնտեղ ԼՂ ազատագրելու ջիհադի՞ պիտի ուղարկեք»: «Ոչ, մենք նոր պատերազմ չէ, խաղաղ լուծում ենք ուզում: Երկու կողմն էլ պիտի լուրջ բանակցեն», ասում է իմամը:

Ռամազաեւը, որ Մառնեուլի շրջանում 135 հազար ադրբեջանցիների շահերն է պաշտպանում, երկյուղում է, թե Կովկասում նորից բռնկում կլինի: «Հասարակ մարդիկ արդեն կուշտ են այս հակամարտությունից: Կողմերը պիտի մտածեն՝ ո՞ւմ է սա ձեռնտու: Ոչ մեկին: Հայերին, որ բոլորովին պետք չէ: Մինչ պատերազմը նրանք բարեկեցիկ կյանք ունեին, հիմա աղքատ են»:

Մենք նկարահանումներ ենք անում շուկայում, որ քաղաքական վիճարկումների ամենակարեւոր վայրն է: Ղարաբաղի ճակատագրի մասին ամեն մեկն իր կարծիքն ունի: «Գտնում եմ՝ ճիշտ է, որ Ադրբեջանը պահանջում է ԼՂ», կարծիք է հայտնում է վաճառողներից մեկը: Հարց՝ «Ձեզ համար հայերն ագրեսորնե՞ր են»: «Անշուշտ, Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը գրավել են»: Հարց՝ «Ղարաբաղը հայկակա՞ն է, թե՞ ադրբեջանական»: «Ադրբեջանական է»: «Բայց այնտեղ հայեր են ապրում»: «Այնտեղ միշտ խառը բնակչություն է եղել», հնչում է մի տղամարդու պատասխան: «ԼՂ Ադրբեջանին է պատկանում» ձայնակցում է մի տիկին: Շուկայում համեմունքների վաճառականը խոսում է 6 լեզվով, կրթված մարդ է: «Դարեր ի վեր լեռներում սովորույթ կա. իրար վրա են հարձակվում, մինչ օրս յուրաքանչյուրն ուզում է մյուսի հողին տիրանալ: Անտանելի բան է, միջնադարում հո չենք», ասում է:

Մառնեուլի թեյարանում ադրբեջանցիները, հայերն ու վրացիները մեզ վստահեցնում են, թե խաղաղ գոյակցում են: Այստեղ կովկասյան հանգույցը լուծում է գտել:

Հաջորդ օրը Թիֆլիսում ենք: Գնացքով Ադրբեջան ենք մեկնելու: Արտգործնախարարն է մեզ հրավիրել: Մեր վիզաներն ուժի մեջ են, մեր սպասումները՝ մեծ: Բայց նախնական մեր ուրախությունը շուտով վերափոխվում է խոր հիասթափության: Ի հեճուկս բոլոր պայմանավորվածությունների Ադրբեջանի պետանվտանգությունը արգելում է մեր այցը: Սահմանին մեզ իջեցնում են գնացքից: Ալիեւի գաղտնի ծառայությունն արգելակում է, որ ԼՂ մասին մեր հարցերը նաեւ Ադրբեջանում հնչեցնենք:

***Հեղինակի մասին*- 1951-ին Սաքսոնիա-Անհալթում ծնված Դիիթմար Շումանը լրագրություն է ուսանել Լայպցիգի Կարլ Մարքս համալսարանում եւ Մոսկվայում: Աշխատել է գերմանական հեռուստատեսության՝ DFF-ի արտաքին քաղաքականության «Օբյեկտիվ» հաղորդման, ինչպես նաեւ հրատապ լուրերի խմբագիր, 1977-ին նույն հեռուստատեսության թղթակիցն է եղել Մոսկվայում, 7 տարի հետո ղեկավարել է նույն հեռուսաետեսության Բուդապեշտի ստուդիան՝ համակարգելով Հունգարիայի, Ավստրիայի, Հարավսլավիայի լրատվությունը, 1990-ից որպես խմբագիր եւ լրագրող աշխատում է ZDF-ի համար:1998-ից աշխատել է ZDF-ի Մոսկվայի ստուդիայում, այնուհետ 2003-ից ստանձնել է նույն հեռուստաընկերության Թել Ավիվի ստուդիայի ղեկավարությունը: Ճգնաժամային տարածաշրջաններում աշխատելու երկարամյա փորձ է կուտակել, եղել է Չեչնիայում, Աֆղանստանում, 2008-ին Հարավօսական պատերազմական գոտում: 2004-ին ZDF-ը Շումաննին Իսրայելյան գործուղումից ետ կանչեց՝ պատճառը նրա անվան հետ կապված «խորհրդավոր» պատմությունն է. Շումանը Հունգարիայում եւ Մոսկվայում աշխատած տարիներին դեմոկրատական Գերմանիայի հեռուստատեսության համար Basket ծածկանվան տակ անպաշտոն աշխատակցել է Stasi- ին՝ դեմոկրատական Գերմանիայի գաղտնի ծառայություններին: Արժանացել է լրագրողական մրցանակների:**

**Գերմանիա**

** Լուսանկարները՝ ZDF-ի*

